ՆԻԿՈԼ ՄԱՐԳԱՐՅԱՆ

Բացահայտիր ՇԱՀԱՐԿՈՒՄԸ

Բացասական շահարկման հնարքները
Ֆեյսբուք սոցիալական ցանցում

ՈՒՂԵՑՈՒՅՑ

ԳՅՈՒՄՐԻ
ԷԼԴՈՐԱԴՈ ՊՐԻՆՏ
2020

Նիկոլ Մարգարյան

Բացահայտիր ՇԱՀԱՐԿՈՒՄԸ

Բացասական շահարկման հնարքները Ֆեյսբուք սոցիալական ցանցում

ՈՒՂԵՑՈՒՅՑ

ԳՅՈՒՄՐԻ
ԷԼԴՈՐԱԴՈ ՊՐԻՆՏ
2020

ՀՏԴ 004:316.472.4
ԳՄԴ 32.973.202+60.56
Մ 350

Բաց Հասարակության Հիմնադրամներ - Հայաստան

Սույն հետազոտությունը հնարավոր է դարձել Բաց հասարակության հիմնադրամներ - Հայաստանի ամբողջական ֆինանսական օժանդակության շնորհիվ՝ հանրային քաղաքականության հետազոտությունների կրթաթոշակներ ծրագրի շրջանակներում: Զեկույցում տեղ գտած վերլուծություններն արտահայտում են հեղինակ/ների տեսակետը և կարող են չհամընկնել Բաց հասարակության հիմնադրամներ - Հայաստանի դիրքորոշումների ու տեսակետների հետ:

Մարգարյան Ն.Մ.
Մ 350 **Բացահայտիր շահարկումը:** Բացասական շահարկման հնարքները Ֆեյսբուք սոցիալական ցանցում: Ուղեցույց/ Ն.Մարգարյան. Գյումրի, ԷԼԴՈՐԱԴՈ ՊՐԻՆՏ, 2020, -200 էջ:

ՀՏԴ 004:316.472.4
ԳՄԴ 32.973.202+60.56

ISBN 978-9939-826-80-6

© Նիկոլ Մարգարյան 2020

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ. 4

ՄԱՍ ԱՌԱՋԻՆ. Ի՞ՆՉ Է ԲԱՑԱՍԱԿԱՆ ՇԱՀԱՐԿՈՒՄԸ 11

ՄԱՍ ԵՐԿՐՈՐԴ. ՇԱՀԱՐԿՄԱՆ ՀՆԱՐՔՆԵՐԸ 25

1. Փաստերին առնչվող շահարկումներ 28
2. Շահարկումներ կապված սկզբնաղբյուրների հետ 49
3. Հասկացություններին առնչվող շահարկումներ 61
4. Շահարկումներ համեմատությունների օգնությամբ 70
5. Թեմայի հարթության փոփոխում 80
6. Սխալ հասցեագրում 92
7. Կեղծ դիրքավորում կամ նմանակում 97
8. Բացարձակ արտահայտություններ և բառեր 101
9. Պիտակումներ և վարկաբեկող արտահայտություններ 104
10. Կրկնություններ 108
11. Բռնության սպառնալիքներ..... 115
12. Գուշակություններ և գրբացություն 118
13. Շահարկումներ թվերի և վիճակագրության օգնությամբ 125
14. Փոխաբերությունների և այլաբանությունների օգտագործում 132
15. Միակողմանի մեկնաբանություններ 137
16. Սադրող վերնագրեր և անվանումներ 141
17. Հավանումներ և կիսումներ 145
18. Խմբային կարծրատիպերի շահարկում 148

ՄԱՍ ԵՐՐՈՐԴ. ԻՆՉՈՒ՞ ԵՆՔ ԵՆԹԱՐԿՎՈՒՄ ՇԱՀԱՐԿՄԱՆ 157

ՄԱՍ ՉՈՐՐՈՐԴ. ՇԱՀԱՐԿՄԱՆ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՖԵՅՍԲՈՒՔ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՑԱՆՑՈՒՄ 169

ԹԵՍՏԱՅԻՆ ՏԵՔՍՏԵՐ 186

ՕԳՏԱԿԱՐ ԳՐՔԵՐ 198

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

«Շահարկումը» կամ «մանիպուլացիան» հայալեզու զանգվածային լրատվամիջոցներում և Ֆեյսբուք սոցիալական ցանցում այսօր առավել հաճախ շրջանառվող հասկացություններից մեկն է: Չնայած այդ հանգամանքին, հասկացությունը չունի միանշանակ կիրառում: Մի դեպքում շահարկում է համարվում կեղծ տեղեկությունը, ուրիշ դեպքում՝ փաստերի նենգափոխումը, երրորդ դեպքում՝ միակողմանի մեկնաբանությունը, չորրորդ դեպքում՝ բռնության սպառնալիքի հնչեցումը և այլն: Հանդիպում են նաև «շահարկում» հասկացության հակասական օգտագործման դեպքեր: Ոմանք շահարկում են համարում մարդու իրավունքների հակաքարոզչությունը, ուրիշները՝ դրանց քարոզչությունը: Չկա որոշակիություն: Այնուամենայնիվ, մեծամասնությունը մի բանում միակարծիք է. շահարկումը բացասական երևույթ է և կարող է նեգատիվ ազդեցություն ունենալ մարդկանց ընկալումների և վարքագծի վրա:

Տարաբնույթ վերլուծական հարթակներ (Դետեկտոր, Փաստերի ստուգման հարթակ, Տեղեկատվության ստուգման կենտրոն և այլն) և առանձին անհատ վերլուծողներ փորձում են հստակեցնել շահարկման սահմանները և իրենց հրապարակումներում պարբերաբար անդրադառնում են տարբեր քաղաքական գործիչների ու կազմակերպությունների կողմից հանրությանը շահարկելու փաստերին և շահարկման եղանակներին: Սակայն այդ վերլուծությունները հաճախ հրապարակվում են այն բանից հետո, երբ շահարկումն արդեն կիրառվել է և իր անբարե-

բար ազդեցությունն է ունեցել լսարանի վրա։ Այս կարևոր հանգամանքն անհրաժեշտ է դարձնում կանխարգելող, շահարկման հնարքների ու ցուցիչների մասին ծանուցող հոլովակների, ձեռնարկների և ուղեցույցների առկայությունը, որոնք կծառայեն հերթական շահարկումից խուսափելուն կամ շահարկումների ազդեցությունը նվազեցնելուն։

Մեդիափորձագետները, քաղաքական իշխանության տարբեր ներկայացուցիչներ վերջին տարիներին բավականին հաճախ են խոսում մեդիագրագիտության կարևորությունից։ Սակայն մեդիակրթության ծրագրերը համակարգված ու հետևողական կերպով իրականացվում են հիմնականում նեղ մասնագիտական խմբերի համար կազմակերպվող ֆորմալ և ոչ ֆորմալ դասընթացների շրջանակներում։ Այլ կերպ ասած՝ դրանց շահառուները հիմնականում լրագրողներն են և քաղաքագետները։ Սակայն, փաստն այն է, որ առավել հաճախ շահարկման են ենթարկվում լրագրողի և քաղաքագետի մասնագիտացում չունեցող քաղաքացիները, որոնց թիվը մի քանի հարյուր անգամ ավելի է։ Համացանցում և հանրային լրատվամիջոցներում ժամանակ առ ժամանակ հայտնվում են մեդիակրթությանը առնչվող ուսուցողական կամ խորհրդատվական բնույթի տեսանյութեր և տպագիր հրապարակումներ, մեդիագրագիտության կարևորությանը վերաբերող տարբեր հաղորդում-քննարկումներ։ Բայց վերջիններս համակարգված և անընդհատական բնույթ չունեն։ Կարիք կա մի կողմից ավելացնելու նման հաղորդումների և հրապարակումների քանակը և պարբերականությունը, մյուս կողմից՝ դիմելու քաղաքացիների տեղեկացվածության մակարդակը բարձրացնելու այլ օժանդակ միջոցների, ինչպես օրինակ ընթեր-

ցողների լայն շրջանակին մեր կողմից առաջարկվող սույն ուղեցույց-ձեռնարկն է։

Այսպիսով, սույն ուղեցույցի շահառուն նախևառաջ մեդիագրագիտության բավարար մակարդակ չունեցող քաղաքացիներն են, իսկ ուղեցույցի բուն նպատակը՝ նրանց որոշակի աջակցություն առաջարկելը՝ շահարկումներից խուսափելու կամ դրանց հնարավոր ազդեցությունը թուլացնելու նպատակով։ Սա նախևառաջ ենթադրում էր «շահարկում» հասկացության շրջանակի և իմասնավորի՝ «բացասական շահարկման» նշանակության հստակեցում, ինչն իրականացվել է ուղեցույցի առաջին մասում։ Այստեղ նաև ընդհանուր գծերով ներկայացվում է հանրային կարծիքի վրա ազդելու այլ միջոցների (քարոզչություն, ապատեղեկատվություն, խաբեություն, նենգախաղ և այլն) և շահարկման միջև նմանություններն ու տարբերությունները։

Ուղեցույցի երկրորդ մասում ներկայացվում են շահարկման հնարքները կամ ընթերցողի դիտակետից՝ շահարկման ցուցիչները, որոնք անհրաժեշտ են շահարկման դեպքերը նույնականացնելու համար։ Ցուցիչների կիրառելիության հնարավորությունը մեծացնելու համար ընթերցողին առաջարկվում են շահարկման տարբեր օրինակներ, որոնք օգտագործվել են հայալեզու տեղեկատվական միջավայրերում։ Յուրաքանչյուր հնարքի ներկայացումը ամփոփվում է շահարկվելուց խուսափելու կամ շահարկմանը դիմագրավելու համար անհրաժեշտ որոշակի միջոցներ՝ *սխեման կետեր* առաջարկելով։

Ուղեցույցի երրորդ մասում քննարկվում են շահարկման պատճառները։ Այստեղ նախ խոսվում է շահարկվողների մշակութային, հոգեբանական, ճանաչողական այն

առանձնահատկությունների մասին, որոնք նրանց դարձնում են խոցելի շահարկման առջև: Այս հատվածում քննության են առնվում նաև այն անհատական և սոցիալական դրդապատճառները, որոնք պայմանավորում են նեգատիվ շահարկման դիմելու հակումը:

Ուղեցույցի Չորրորդ մասում ներկայացվում են Ֆեյսբուք սոցիալական ցանցում կիրառվող շահարկման առանձնահատկությունները և սոցիալական ցանցի ընձեռած տեխնիկական ու մարտավարական հնարավորությունները: Այս մասում նաև անդրադառնում ենք այն քաղաքականություններին և միջոցառումներին, որոնք ըստ մեդիա ոլորտի տարբեր փորձագետների՝ կարևոր են հայալեզու մեդիա միջավայրերում շահարկումների ազդեցությունը թուլացնելու և վերահսկելի դարձնելու համար:

Ուղեցույցի վերջում առաջարկվում են թեստային տեքստեր և գիտահանրամատչելի բնույթ ունեցող հրապարակումների ցանկ՝ շահարկումների վերաբերյալ գիտելիքները ամրագրել, լրացնել և խորացնել ցանկացող ընթերցողների համար:

Ուղեցույցում ներկայացվող օրինակները մեծամասամբ վերցված են Ֆեյսբուք սոցիալական ցանցում շրջանառված՝ առանձին օգտատերերի և կազմակերպությունների օգտահաշիվների հայալեզու գրառումներից և դրանց էջերում զետեղված տպագիր ու վիդեո-աուդիո նյութերից: Իրողությունն այն է, որ այսօր գրեթե չկա որևէ զանգվածային լրատվամիջոց, որն իր օգտահաշիվը չունենա Ֆեյսբուքում, որտեղ տեղադրում է իր լրատվական բովանդակությունը (կոնտենտը): Մյուս կողմից, այդ բովանդակության մի մասն են կազմում ֆեյսբուքյան անհատ օգտատերերի գրառում-

ները, որոնք իրենց հերթին արտատպվում կամ վերարտադրվում են լրատվական կայքէջերի պատրաստած հրապարակումներում։

Ուղեցույցում մեջբերված հղումների հիմնական մասը վերաբերում է 2018թ. մայիսից - 2020թ. ապրիլ ընկած ժամանակամիջոցին։ Առաջին տարեթիվն ընտրված է այն հիմնավորմամբ, որ շահարկումների մասին խոսակցությունները և շահարկումների ինտենսիվությունն առհասարակ, կտրուկ աճ են արձանագրում Հայաստանում՝ 2018թ. տեղի ունեցած Թավշյա հեղափոխությունից հետո։ Երկրորդ տարեթվի ընտրությունը պայմանավորված է այս ուղեցույցի շարադրանքի համար նախատեսված ավարտական ժամկետով, երբ անհրաժեշտ էր սահմանափակել շահարկման դեպքերի արձանագրումը։

Ուղեցույցում հիմնականում տեղ են գտել շահարկման այն օրինակները, որոնք առնչություն ունեն հանրային հնչեղության թեմաների հետ։ «Հանրային հնչեղության թեմա» ասելով նկատի ունենք հետևյալ կարևոր հատկանիշները՝ *1.*որքա՞ն շատ օգտատերեր (այդ թվում անհատական, խմբային և լրատվական) են տեղեկացված տվյալ թեմայից կամ դրա առիթից, *2.*որքա՞ն շատ օգտատերեր են անդրադարձել տվյալ թեմային, *3.* որքա՞ն շատ տարբեր և հակասական կարծիքներ են հնչեցվել տվյալ թեմայի վերաբերյալ։ 2018թ. մայիսից մինչև 2020թ. ապրիլ ընկած ժամանակահատվածում մեր կողմից ամրագրվել են հանրային հնչեղություն ստացած շուրջ 40 թեմաներ։ Մեր համոզմամբ՝ որևէ թեմայի հանրային հնչեղություն ստանալը պայմանավորված է դրա հետ կապված շահարկման հնարավորություններով։ Որքան մեծ է թեմայի շահարկման հնարավորությունը, այնքան ավելի շատ են դրա հետ կապ-

ված շահարկումները։ Հետևապես և մեծ է տվյալ թեմայի հանրային հնչեղություն ստանալու հնարավորությունը։

Նկատի ունենալով սույն ուղեցույցի շահառուների լայն շրջանակը, մենք փորձել ենք, որքան հնարավոր է, խուսափել շարադրանքի ակադեմիական ոճից։ Առաջին հերթին դա առնչվում է տարբեր մոտեցումների վերաբերյալ տեսական քննարկումներին, շարադրանքը գիտական հասկացություններով և գիտական հրապարակումների հղումներով չծանրաբեռնելուն։ Նշված պատճառներով հրաժարվել ենք նաև մասնագիտական գրականության մեջ հանդիպող՝ շահարկման տարբեր հնարքներին վերաբերող բարդ և բազմաբնույթ ձևակերպումներից։ Սույն ուղեցույցում ներկայացվում են շահարկման ընդամենը 18 հնարքներ (իրականում դրանց թիվը հասնում է 30-ի)։ Իսկ շահարկման հնարքների նույնականացման համար օգտագործվել են հնարավորինս պարզ և ճանաչելի ձևակերպումներ, որոնք կարող են հեշտ կիրառելի լինել հայալեզու վիրտուալ տարածքում առավել հաճախ հանդիպող հնարքները բացահայտելու համար։

ՄԱՍ
ԱՌԱՋԻՆ

Ի՞ՆՉ Է ԲԱՑԱՍԱԿԱՆ ՇԱՀԱՐԿՈՒՄԸ

Հայերեն «շահարկում» եզրը անգլերեն կամ ֆրանսերեն manipulation բառի հոմանիշն է: Վերջինս սերում է լատիներեն manipulus-ից, որի սկզբնական իմաստներն են *ափը, բուռը, բռաչափը, փոքր խումբը (օրինակ փոքրաթիվ զինվորներից կազմված գունդը կամ դրա փոխաբերական* ՝«մի բուռ գունդը», «մի բուռ զորքը» տարբերակները)։ Օքսֆորդի անգլերեն բառարանում պահպանվում է շահարկման՝ ձեռքի հետ ունեցած աղերսը *և* manipulation-*ը* մեկնաբանվում է իբրև *ձեռքի կառավարում, ձեռքերով իրականացվող գործողություն (օրինակ բժշկության մեջ ախտորոշման նպատակով այցելուի մարմնի որոշ հատվածների շոշափումը և որոշակի բուժական ընթացակարգերը)։ Օքսֆորդյան բ*առարանում այդ նշանակություններին ավելանում է նաև՝ *«երևույթների նկատմամբ հատուկ նպատակ հետապնդող վերաբերմունք»* բացատրությունը*։* Այսինքն ակներև է, որ ինչպես լատիներեն, այնպես էլ անգլերեն տարբերակներում շահարկմանը տրվում են չեզոք բացատրություններ։ Դրանցում որևէ կերպ չի ակնարկվում շահարկման դրական կամ բացասական լինելը։

Ժամանակի ընթացքում շահարկմանը վերաբերող բացատրություններում գերիշխող են դառնում հոգեբանական ազդեցության մասին մեկնաբանությունները։ Դրանք նաև սկսում են ներկայանալ սահմանումների տեսքով։ Ահա դրանցից մեկը.

Շահարկումը հոգեբանական ներգործություն է, որը մարդու մոտ հարուցում է ցանկալի արձագանք, անկախ նրա կամքից: Շահարկումը շրջանցում է գիտակցական վերահսկողությունը և գործում է մեզանից գաղտնի, մեր ներսում, կարծես այն մեր ցանկությունը կամ որոշումն է:

Այս սահմանման մեջ բացահայտվում է, որ շահարկումը մի գործողություն է, որը կարող է իրականացվել կողմերից մեկի չիմացությամբ և անկախ վերջինիս կամքից: Այդուհանդերձ, այս և նման բազմաթիվ հոգեբանական սահմանումներ շարունակում են չեզոք լինել, որովհետև դրանցում շահարկումը չի դիտարկվում իբրև դրական կամ բացասական երևույթ: Պատճառն այն է, որ դրանց հեղինակները կենտրոնանում են ոչ թե գործողության մոտիվի, այլ գործողության նկարագրության վրա:

Գործողության մոտիվի կամ դրդապատճառի մասին շեշտադրումները շահարկմանը վերաբերող սահմանումներում հայտնվում են ավելի ուշ և հատկապես լրատվությանը և քաղաքականությանը վերաբերող հրապարակումներում: Ահա դրանցից մեկը.

Շահարկումը մարդու գիտակցության և հույզերի վրա այնպիսի ներգործությունն է, որը չի գիտակցվում նրա կողմից, և դրդում է այնպիսի գործողությունների (մտքերի, ընկալումների, արարքների), որոնք ցանկալի են շահարկողի համար և կապված չեն շահարկվողի անկեղծ ցանկությունների հետ, կամ հակասում են դրանց:

Կարելի է նկատել, որ վերջին սահմանումն արդեն ոչ միայն չեզոք չէ, այլև միակողմանի բացասական է: Որովհետև դրանում շահարկումը դիտարկվում է որպես մի կողմի ցանկությունից բխող և մյուս կողմի ցանկությանը

հակասող երևույթ։ Այս միտումը նկատելի է նաև հայաստանյան արդի հանրային ընկալումներում և զանգվածային լրատվամիջոցների մեկնաբանություններում։

Սակայն շահարկման նման ընկալումը կամ մեկնաբանությունը ծայրահեղ է, որովհետև շահարկումը կարող է լինել նաև դրական։ Երեխայի հյութի բաժակի մեջ առանց նրա իմացության դեղահաբեր գցած և հյութի համային արժանիքները գովերգող ծնողի արարքը նույնը չէ, ինչ-որ գործընկերոջ գինու բաժակի մեջ առանց նրա իմացության մահացու հաբեր գցած և գինու արժանիքները գովերգող մարդասպանի արարքը։ Չնայած, երկուսն էլ գործում են համապատասխան իրենց շահի և դիմացինի չիմացությունից օգտվելով, առաջին դեպքում շահարկման շահառու է նաև զավակը, որը պետք է առողջանա, իսկ երկրորդ դեպքում շահարկման միակ շահառուն մարդասպանն է, որը ցանկանում է իր գործընկերոջ մահը ծառայեցնել որոշակի անձնական նպատակների (պաշտոնը կամ ունցեվածքը զավթելուն)։ Հետևապես, ի տարբերություն երկրորդ դեպքի, առաջինը դրական շահարկման օրինակ է։

Շահարկման գործողության մասին շահարկվողի չիմացությունը փաստարկելը նույնպես բավարար չէ շահարկումը նեգատիվ կամ բացասական համարելու համար։ Օրինակ քննիչը ստում է հանցագործին, որ նրա ընկերը մատնել է իրեն, որպեսզի նրանից խոստովանություն կորզի։ Կորզված խոստովանությունը, այո՛, այս դեպքում իվնաս է շահարկվողին և ծառայում է շահարկողի շահին։ Որովհետև շահարկվողին ազատազրկում է սպասվում, իսկ շահարկուին՝ պարգևատրում կամ պաշտոնի բարձրացում։ Սակայն, այս օրինակում քննիչը միակ և գլխավոր շահառուն չէ։ Գլխավոր շահառուն այն հանրությունն է, որի

անդամների իրավունքները (կյանքի, գույքի և այլն) վտանգվել են հանցագործի որոշակի գործողությունների հետևանքում: Այսինքն այս դեպքում ավելի կարևոր է ոչ թե՝ «կողմերից ո՞վ է օգտվում կամ տուժում հարցադրումը», այլ թե՝ «ի՞նչ վնաս կամ օգուտ է հասցվում հանրությանը տվյալ շահարկման արդյունքում»: Հետևապես, այս դեպքում շահարկողի արարքը անհրաժեշտ է դիտարկել հանրային շահի համատեքստում:

Հանրային շահը կամ հանրությանն իբրև շահարկման շահառու կամ իբրև զոհ դիտարկելը կրկնակի կարևորություն է ստանում, երբ խոսքը գնում է ոչ թե միջանձնային շահարկումների, այլ լրատվական ու քաղաքական շահարկումների մասին, որոնց շահարկման օբյեկտը ոչ թե առանձին, այլ հարյուր և հազարավոր քաղաքացիներն են: Ուստի բացասական շահարկմանը վերաբերող սահմանումը կարիք ունի այդ կարևոր հանգամանքն իր մեջ ամրագրելու:

Հրապարակի վրա գտնվող շահարկման՝ նեգատիվ կամ բացասական սահմանումների անկատարությունը կայանում է նաև այն բանում, որ դրանցում հաշվի չեն առնվում շահարկման հարուցած հետևանքները: Ըստ էության որևէ շահարկում բացասական կարող է համարվել ոչ միայն այն պարզ պատճառով, որ միայն կողմերից մեկն է շահառու, այլև, թե ինչ բացասական հետևանքներ է հարուցում շահարկումը: Այդպիսի հետևանքներ կարող են հանդիսանալ հակաօրինական գործողությունների մասնակցելը, ագրեսիայի դրսևորումը, անկարողության զգացումը, ընկճախտը, ինքնասպանության հակումը և այլն: Իվերջո, շահարկման ակտը, հատկապես քաղաքականության համատեքստում, հաճախ միանգամյա օգտագործման կամ մեկ քայլից բացկացած գործողություն չէ: Շահարկման հաջո-

ղության հետևանքում շահարկուն վերահսկողություն է ստանում շահարկվողի հետագա արարքների և հույզերի նկատմամբ և շարունակում է նրան օգտագործել իր հեռահար նպատակների համար։

Մեկ այլ հանգամանք, որը չի հաշվառվում բացասական շահարկմանը վերաբերող սահմանումներում, հետևյալն է. շահարկումը միշտ չէ, որ իրականացվում է առանց շահարկվողի իմացության։ Երբեմն շահարկվողը լավատեղյակ է շահարկողի նպատակներից, բայց անկարող է դիմակայել։ Օրինակ, երբ շահարկուն սպառնալիք է հնչեցնում կամ իր օբյեկտին մեղադրում է պարտքի զգացում, խղճի խայթ չունենալու մեջ։ Շահարկման այդ հնարքներին հաճախ դժվար է դիմակայելը։ Մյուս կողմից, դիմակայելու փորձը կարող է ուղեկցվել ագրեսիվ արձագանքով և դեստրուկտիվ գործողություններով, որոնց հարուցիչը շահարկման միևնույն հնարքներն են՝ սպառնալիքը, պարտքի կամ խղճի մասին հիշեցնելը։

Ի մի բերելով վերոհիշյալ նկատառումները բացասական կամ նեգատիվ շահարկումը կարելի է սահմանել հետևյալ կերպ.

Նեգատիվ շահարկումը մարդկանց գիտակցության և հույզերի վրա ներգործության եղանակ է, որը հրահրում է այնպիսի արարքներ և հուզական զգացողություններ, որոնք ծառայում են շահարկուի նեղ անձնական կամ խմբային շահերին, չեն արտահայտում շահարկվողի անկեղծ ցանկությունները, և հակասում են հանրային շահին ու մարդու հիմնային իրավունքներին։

Մի շարք ուսումնասիրություններում իբրև շահարկման հոմանիշներ օգտագործվում են *քարոզչություն,*

ագիտացիա, ապատեղեկատվություն, խաբեություն, բլեֆ, հարամություն, խաղ (նենգախաղ) և այլ հասկացություններ։ Նշվածները կամ՝ շահարկման նպատակով կիրառվող տարբեր հնարքներ են կամ՝ շահարկման տարբեր առումները։ Դիտարկենք այդ հասկացություններից մի քանիսի բնութագրականները, որոնք «Անձի շահարկում» գրքում ներկայացրել են Գ. Գրաչևը և Ի. Մելնիկը.

Խարդախություն – օգտագործվում է հիմնականում ապօրինի և կասկածելի տնտեսական գործարքների վերաբերյալ։

Բլեֆ – օգտագործվում է հիմնականում խաղաքարտերով խաղերի ժամանակ, երբ խաղացողներից մեկը ձևացնում է, որ իր ձեռքին հաղթական խաղաքարտեր ունի։ Հասկացությունը ծագում է Փոկեր թղթախաղից։

Հարամություն կամ **դաղալություն** – օգտագործվում է տարբեր խաղերի ժամանակ։ Օրինակ զառախաղի ընթացքում փոխում են զառերը կամ շրջանցվում են խաղի մյուս կանոնները։

Խաբեություն – վերաբերում է շատ բազմազան վիճակների, երբ փորձ է արվում մեկին մոլորեցնել։

Մեքենայություն – վերաբերում է հիմնականում տնտեսական ոլորտի գործարքներին, երբ փաստաթղթեր են կեղծվում կամ կեղծ գործարքներ են կնքվում։

Խորամանկություն – երբ խաբեությամբ և սեփական մտադրությունները թաքցնելով ինչ-որ արդյունքների են հասնում։

Խաղ – բացասական իմաստով՝ անազնիվ խաղ կամ նենգախաղ, որի ժամանակ շահարկվում են խաղի մասնակիցների հույզերը և զգացմունքները՝ նրանց մոլորեցնելու և խաբելու նպատակով։ Հոգեվերլուծաբան Է. Բեռնը խաղը համարում է թաքնված մոտիվացիա ունեցող և ծուղակ պարունակող գործողությունների համախումբ, որն ենթադրում է շահողներ և տուժողներ։ Շահողը սովորաբար խաղի նախաձեռնողն է։ Տուժողը հաճախ չի գիտակցում, որ հայտնվել է խաղի մեջ։

Ագիտացիա – առանձին խմբերին կամ բնակչության լայն զանգվածներին քաղաքական ակտիվության հրահրելու քարոզ-

չական գործունեություն։ Ներառում է բանավոր, տպագիր և տեսաձայնային տարբեր միջոցներ։ Համարվում է քաղաքական պայքարի տարածման գործիքներից մեկը։

Քարոզչություն – բանավոր և տեսաձայնային միջոցների, ինչպես նաև զանգվածային լրատվամիջոցների օգնությամբ որոշակի գաղափարների հանրայնացումը և հասարակական գիտակցության մեջ ամրապնդումը։

Ապատեղեկատվություն – առանձին անձանց կամ նրանց խմբերին՝ վավերագրական ապացույցները կեղծելու կամ փոխարինելու միջոցով մոլորության մեջ գցելը։

Սկսենք վերջին հոմանիշի հետ շահարկման նմանությունների և տարբերությունների քննությունից։ Շահարկումը միշտ չէ, որ իրականացվում է ապատեղեկատվության միջոցով։ Ոչ քիչ դեպքերում շահարկվողին հայտնի են փաստերը և դրանց աղբյուրները։ Բայց դրանք շահարկուի կողմից ներկայացվում են միակողմանի մեկնաբանությամբ, տեղեկության հնարավոր բացասական կամ դրական ազդեցությունը չեզոքացնող կամ ուժգնացնող արտահայտություններ ու բառեր օգտագործելով, որոնք շահարկվողներին հրահրում են որոշակի պասիվության կամ ակտիվության։

Քարոզչության հետ շահարկման նմանությունների ու տարբերությունների մասին. շահարկումը կարող է հետապնդել որոշակի գաղափարների հանրայնացում, բայց կարող է նաև զուրկ լինել որևէ գաղափարական հիմքից ու հետևել զուտ որևէ գործողության դրդելու նպատակ։ Օրինակ, որևէ հանցագործի՝ քրեական պատասխանատվությունից ազատելու նպատակով քարոզիչները հրահրում են քաղաքացիների խմբին բողոքի ցույցի մասնակցել։

Շահարկումը նաև միշտ չէ, որ հետապնդում է քաղաքացիների ակտիվության դրսևորում, ինչպես ագիտա-

ցիայի պարագայում է։ Շահարկումը կարող է հետապնդել նաև շահարկվողների ակտիվությունը չեզոքացնելու, նրա ուշադրությունը որոշակի իրադարձություններից շեղելու, դրանց նկատմամբ հետաքրքրությունը թուլացնելու նպատակ, որի համար քարոզվում է դրանց անկարևորությունը կամ քաղաքացիների իրական շահերի հետ դրանց անհամապատասխանությունը։

Խորամանկությունը, մեքենայությունը, խարդախությունը, բլեֆը, խաբեությունը, ինչպես նաև հանրահայտ հոգեբան Է. Բերնի նկարագրած (նենգա)խաղը ենթադրում են շահարկվողի անտեղյակություն։ Սակայն, ինչպես արդեն ասվել է, շահարկումը կարող է տեղի ունենալ նաև շահարկվողի իմացությամբ և այս դեպքում կարևոր է շահարկվողի կողմից՝ հակառակ իր կամքի և իր շահի կամ իվնաս հանրային շահի գործելը։

«Շահարկում» հասկացության մեկնաբանման հետ կապված շփոթությունների մեկ այլ խումբ վերաբերում է շահարկման թիրախներին, դիցուք՝ բանականությանը և հույզերին։ Մի շարք հեղինակներ կարծում են, որ շահարկման թիրախը գիտակցությունն է, ուրիշները՝ հույզերը, երրորդները՝ և՛ մեկը, և՛ մյուսը։ Օրինակ Ս. Անոխինան շահարկումը համեմատելով ապացուցելու և համոզելու հետ, գրում է. «Ապացուցումը տեղ ունի օբյեկտիվ ճշմարտության հաստատման ժամանակ, իսկ համոզումը վերաբերում է սուբյեկտիվ ճշմարտությանը։ Երկու դեպքում էլ առկա են փաստարկումներ, որոնք հղում են առարկայական հասկացություններ։ Սակայն շահարկման փաստարկման հիմնական միջոցը արժեքներին հղում անելն է. «Գիտակցության շահարկումը՝ գիտելիքը տեսիլքով փոխելու փորձ է, որը մարդկային մտածելակերպի ճանաչո-

ղական շրջանակների մեջ ներդնելը ձեռնտու է որոշակի սոցիալական հաստատություններին՝ իրենց իշխանությանը անհրաժեշտ աջակցություն ապահովելու համար։ Այդ նպատակով ներգործության օբյեկտներին առաջարկվում են բազային արժեքների նոր մեկնաբանություններ՝ տրամաբանական փաստարկման հատուկ համակարգերի ուղեկցությամբ, որոնք բացատրում են, թե ինչու այդ արժեքները պետք է հասկանալ հենց այդ և ոչ թե այլ կերպ։ Այդ նպատակով է, որ չեզոք հասկացությունները հաճախ փոխարինվում են հուզական-գնահատող արտահայտություններով, փոխաբերություններով, ինչպես նաև «մետաբառերով», որոնք ստանդարտ արտահայտություններ և բառեր են, որ թույլ են տալիս շահարկել լսարանին, որովհետև դրանք թաքցնում են առօրյա լեզվում կիրառվող իրական իմաստները»։ Այսինքն, Ս. Անոխինան շահարկման թիրախ է համարում գիտակցությունը, իսկ շահարկման նպատակը դրա աշխատակարգը փոխելն է։

Մեկ այլ հեղինակ՝ Ա. Ֆիլատովը շահարկման թիրախներ է համարում.

- Տրամաբանությունը – մտածողության հետևողականությունը և կապակցվածությունը։
- Քննադատական մտածողությունը – մատուցվող տեղեկությունները գնահատելու կարողությունը ըստ դրանց՝ փաստերի հետ համապատասխանության և նույն աղբյուրի այլ տվյալների հետ համապատասխանության։
- Առողջ բանականությունը – ստացված տվյալները կյանքի փորձի հետ կապելու և առօրյա մտածողությամբ այն գնահատելու կարողությունը։
- Արտաքին աշխարհի մասին պատկերացումները։
- Բարոյական արժեքները և վարվեցողության կանոնները։

- Պահանջմունքները – կենսաբանական, սոցիալական, կառուցվածքները, նշանակությունները (ո՞ր կարիքներն են առավել կարևոր)։
- Գնահատականներն ու պատկերացումները – մարդու տեղն ընդհանրապես և կոնկրետ միջավայրերում (ընտանիք, կոլեկտիվ, ժողովուրդ, ազգ, իշխանություն, երկիր, բնություն)։
- Առասպելները, պաշտամունքի օբյեկտները, տաբուները։
- Մշակութային պատկանելությունը և դրա հետ կապված հատկանիշները՝ լեզու, ավանդույթներ, նորմեր, պատկերացումներ։
- Պատմական հիշողությունը։

Ա. Անտոնովան քաղաքական շահարկումներին նվիրված իր աշխատություններից մեկում քննության է առնում համոզման և շահարկման տարբերությունների վերաբերյալ տարբեր հեղինակների մոտեցումները։ Նա առաջարկում է՝ կախված հասցեատիրոջ արձագանքից ու դրա վերահսկելությունից կամ անվերահսկելիությունից, առանձնացնել ազդեցության երեք մակարդակներ՝ ներշնչում, համոզում, ապացուցում։ Ներշնչումը տեղի է ունենում փոխանցվող տեղեկատվության նկատմամբ քննադատական գնահատականի լրիվ բացակայության պայմաններում, ինչը ազդեցություն է գործում նյարդային-հոգեկան գործընթացների վրա։ Ներշնչումը ներառում է հիպնոսը, և նեյրոլեզվական ծրագրավորումը կամ սուգեստիան։ Ապացուցումը կարելի է սահմանել իբրև ազդեցություն հասցեատիրոջ բանականության վրա և ամբողջական վերահսկում գիտակցական ռեակցիաների վրա, որն ուղեկցվում է մատուցվող տեղեկատվության քննադատական գնահատականով։ Համոզումը միջանկյալ օղակ է ներշնչման և ապացուցման միջև, որը կարելի է սահմանել իբրև ներգործութ-

յուն՝ ուղղված հասցեատիրոջ չվերահսկվող կամ վատ վերահսկվող ռեակցիաների վրա, որոնք ներառում են ինչպես գիտակցության, այնպես էլ հուզական ոլորտները և ենթադրում են մասնակի քննադատական գնահատում: Անտոնովան խոսքային շահարկումը դիտում է իբրև համոզելու գործընթաց: Նա առանձնացնում է շահարկման երեք մակարդակներ.

1. Էթոֆիզիոլոգիական – ներառում է. ա/կենսաբանությամբ պայմանավորված մկանների համախումբը, որոնք առնչվում են բնազդային ծրագրերին և ռեակցիաներին և ձևավորվել են դրանց գործունեության արդյունքում; բ/ընկալման ֆիզիոլոգիական առանձնահատկությունները; գ/մատերիայի ձևերն ընկալելու առանձնահատկությունները; դ/կենսաբանական հիմք ունեցող բազային հույզերը; ե/կենսաբանական հիմք ունեցող ցեղային բարոյականությունը:
2. զանգվածային գիտակցության յուրահատկությունները:
3. տվյալ իրադրության համար նախատեսված վարքի կարծրատիպերը:

Գ. Գրաչև ու Ի. Մելնիկը շահարկման թիրախ են համարում հետևյալ 5 հոգեկան գոյացությունները.

1. Ակտիվության խթանիչներ՝ պահանջմունքներ, հետաքրքրքրություններ, հակումներ:
2. Ակտիվության կարգավորողներ՝ խմբային նորմեր, ինքնագնահատում (արժանապատվություն, հարգանք, հպարտություն), սուբյեկտիվ հարաբերություններ, աշխարհայացք, համոզմունքներ, հավատալիքներ, իմաստային, նպատակային, օպերացիոնալ կառուցվածքներ:
3. Կոգնիտիվ (ճանաչողական) խթանիչները կամ կառուցվածքները՝ գիտելիքները շրջակա աշխարհի, մարդկանց

և տարբեր բաների մասին, որոնք հանդիսանում են մարդու ակտիվության տեղեկատվական աջակցությունը։

4. Օպերացիոնալ (գործառնական) խթանիչները՝ մտածելու եղանակը, վարքի և հարաբերվելու ոճը, սովորույթները, կարողությունները, ընդունակությունները և այլն։
5. Հոգեբական խթանիչները՝ հոգեկան վիճակը՝ ֆոնային, ֆունկցիոնալ, հուզական։

Լ. Ֆարագոն խոսելով քարոզչության մասին, կարծում է, որ այն պիտի ավելի շատ ազդի հույզերի, քան գիտակցության վրա։ Լ. Ֆրեզերն իր հերթին մանրամասնում է, թե որ հույզերի վրա կարող է ազդել քարոզչությունը.բոլոր սովորական հույզերի, որպիսին, օրինակ վախն է, նաև բարդ հույզերի վրա, ինչպիսիք են հպարտությունն ու արկածախնդրությունը, նաև անարժան ու արժեքավոր հույզերի վրա, ինչպիսիք են ժլատությունը, ապրումակցումը, ինքնասիրությունը, էգոիստական հույզերի վրա՝ պատվասիրություն, կամ ուրիշներին ուղղված հույզերի վրա՝ ընտանիքասիրություն։ Բոլոր հույզերը ինչոր ժամանակ օգտագործվել են տարբեր քարոզիչների կողմից որպես շահարկման ազդեցության թիրախներ։

Շահարկման սահմանումներին և թիրախներին վերաբերող տարբեր մոտեցումների և օրինակների ծանուցումը այսքանով կարելի է սահմանափակել, հուսալով, որ եղածը բավարար է ուղեցույցում ներկայացվող շահարկման հնարքների նշանակությունը ըստ էության ընկալելու համար։ Մնում է միայն վարժվել այն հասկացությունների իմաստներին, որոնք առանցքային գործառույթ ունեն այս ուղեցույցում.

- *Շահարկու* կամ *շահարկող* – շահարկման դիմող անձ կամ կազմակերպություն:
- *Շահարկման օբյեկտ* կամ *շահարկվող* – շահարկման ենթակա անձը կամ անձանց խումբը:
- *Շահարկման հնարք* – միջոց կամ եղանակ, որն օգտագործվում է շահարկման նպատակով:
- *Շահարկման թիրախ* – մարդկային պահանջները, հետաքրքրությունները, կողմնորոշումները, կարծրատիպերը, գիտակցությունը, հույզերը և այն ամենը, որոնք դառնում են շահարկման առարկա:
- *Շահարկման ցուցիչ* – միջոց, որի օգնությամբ հնարավոր է բացահայտել կամ նույնականացնել շահարկումը: Որպես ցուցիչ կարող են ծառայել շահարկման հնարքները:

ՄԱՍ
ԵՐԿՐՈՐԴ

ՇԱՀԱՐԿՄԱՆ ՀՆԱՐՔՆԵՐԸ

Շահարկման հնարքներն այն միջոցները կամ եղանակներն են, որոնք շահարկողները բանեցնում են շահարկման օբյեկտներին՝ իրենց համար ցանկալի գործողությունների հրահրելու կամ անգործության դատապարտելու համար։ Մասնագիտական գրականության մեջ նույնականացվում են մարդկանց շահարկելու շուրջ երեք տասնյակ միջոցներ, որոնց մեծ մասը վերաբերում է զանգվածային լրատվամիջոցներին, առևտրային գովազդին կամ նեղ միջանձնային հարաբերություններին։ Ֆեյսբուք սոցիալական ցանցում այդ միջոցների մի մասը կամ կիրառություն չունի կամ սակավ է կիրառվում։ Օրինակ «տեղեկատվության միտումնավոր բարդացումը» կամ «այսրոպեական մասնակցության իլուզիայի ստեղծումը», «բումերանգի էֆեկտը» և այլն։

Մյուս կողմից, շահարկում բացահայտելու առումով տարբեր ուսումնասիրողների կողմից դիտարկված հնարքների մի մասը ձևակերպվում է այլաբանությունների և փոխաբերությունների միջոցով, կարծես նպատակ ունենալով ցուցադրելու դրանց նրբաճաշակությունը։ Օրինակ՝ «սև տեղեկություն», «փայլուն անորոշություն», «տրոյական ձի», «մատաղացու կով», «աղջկական հիմնավորում», «թունավոր սենդվիչ», «քաղցր սենդվիչ», «ընդհանուր վագոն» և այլն։ Որոշ հնարքների ձևակերպման մեջ ամրագրվում է շահարկուների վերջնանպատակը, ինչը սկզբնապես դժվար է կռահել։ Օրինակ՝ «քննադատական մտածողության բլոկադա», «սոցիալական հաստատում» և այլն։ Նշված

հանգամանքները սովորական, ոչ մասնագիտական կրթություն ունեցող լսարանի համար դժվարացնում են շահարկման նույնականացումը։

Նկատի ունենալով այս ուղեցույցի ենթադրյալ հասցեատերերին, ինչպես նաև Ֆեյսբուք սոցիալական ցանցի հայալեզու տեղեկատվական հոսքերում հանդիպող շահարկման հիմնական հնարքները, մենք նպատակահարմար ենք համարել առաջարկելու.

1. Հնարավորինս հեշտ նույնականացնող ցուցիչներ։ Դրանք ենթադրում են հնարքների գործառութային նկարագրություն՝ պարզ բառերի ու արտահայտությունների կիրառմամբ։ Փոխաբերական, այլաբանական, շահարկման ընթացքը և վերջնանպատակը նկարագրող հոմանիշ անվանումները տեքստում հղվում են որպես հնարքների այլընտրանքային անվանումներ։

2. Ֆեյսբուք սոցիալական ցանցում առավել հաճախ հանդիպող շահարկման հնարքները կամ դրանց նույնականացման ցուցիչները։

3. Շահարկման հնարքների հնարավորինս համակարգված ներկայացում։ Այսինքն նմանվող և միմյանց հետ փոխկապակցված հնարքները խմբավորվել են որոշակի տիպերի մեջ և ներկայացվում են իբրև դրանց ենթատեսակներ։

Եվս երկու կարևոր հանգամանքի մասին, որոնք արժանի են ուշադրության.

1.Ուղեցույցում ներկայացվող շահարկման հնարքների մեծ մասը կիրառվում է ինչպես բացասական, այնպես էլ դրական շահարկումների ժամանակ։ Սակայն, դրանց կիրառման հաճախականությունը տարբեր է։ Օրինակ պիտա-

կումները և սպառնալիքի հնչեցումը առավել հաճախ հանդիպում են բացասական շահարկումների ժամանակ։

2.Շահարկման հնարքները կամ ցուցիչները կարող են փոխարինել միմյանց, բայց ավելի հաճախ լրացնում են իրար և կարող են հանդիպել միևնույն տեքստերում։ Չնայած այդ հանգամանքին, դրանց հետ մեկուսի ծանոթացումը կարող է առավել արդյունավետ լինել։ Ուստի դրանք ներկայացվում են առանձին-առանձին։

1 Փաստերին առնչվող շահարկումներ

Փաստը – եղելություն կամ իրականություն է, որը հնարավոր է ստուգել։ Իբրև փաստ կարող են հանդես գալ վիդեո, աուդիո, տպագիր և ձեռագիր տեքստերը, փաստաթղթային արձանագրումները, լաբորատոր փորձերի արդյունքները, հարցումների և հարցազրույցների տվյալները և այլն։

Շահարկումներում հանդիպող հնարքների մեծ մասը վերաբերում է փաստերին։ Հատկապես Ֆեյսբուք սոցիալական ցանցում, որտեղ օգտատերերը շատ դեպքերում ազատված են իրենց գրառումների և կիսումների համար իրավական և բարոյական պատասխանատվություն կրելուց, փաստերի օգտագործումը դառնում է կամայական։

Փաստերին առնչվող շահարկման հնարքները հաշվվում են շուրջ մեկ տասնյակ։ Դրանցից առավել հաճախ հանդիպում են 7-ը.

1. Առանց փաստի պնդումներ և դատողություններ
2. Դատողություններն ու ենթադրությունները ներկայացվում են որպես փաստ
3. Կեղծ կամ հորինված փաստի օգտագործում
4. Փաստի կիսով չափ կամ ամբողջովին նենգափոխում
5. Փաստի համատեքստազրկում կամ ինֆոմիավորի վերածում
6. Փաստի փոխարեն որևէ հեղինակության վկայակոչում
7. Փաստի փոխարեն երաշխավորող բառերի օգտագործում

1.1 ԱՌԱՆՑ ՓԱՍՏԻ ՊՆԴՈՒՄՆԵՐ ԵՎ ԴԱՏՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐ

13.05.2019թ. սեռաբան դոկտոր Նարինե Ներսիսյանը մի հարցազրույցի * առիթով ֆեսյբուքյան իր էջում գրառել է.

> Հայկական ավանդական ասելիս՝ չգիտես ինչու, այսօր փորձում են հասկանալ այն ընտանիքը, որտեղ տիրում են խավարամտություն և վայրագ բարքեր, որտեղ տղամարդը գերիշխում է կնոջը, անգամ բռնության ենթարկում նրան: Սա լրիվ ԹԱՐՍ պատկերացում է: ՇԻՏԱԿՆ այն է, որ ավանդական ընտանիքում տիրում է սեր և հանդուրժողություն, ամուսինների միջև կա փոխադարձ խնամք և հոգատարությունը:

Սեռաբան Նարինե Ներսիսյանը ըստ էության տալիս է ավանդական ընտանիքի և ներընտանեկան հարաբերությունների կամայական ձևակերպում, քանի որ չի նշում, թե ինչպիսի գիտական փաստերի վրա է հիմնված իր դատողությունը և կոնկրետ ո՞ր ժամանակահատվածի ընտանիքին են դրանք վերաբերում: Այս հարցադրումները կարեվորություն են ստանում հատկապես այն հանգամանքով պայմանավորված, որ դատողություն անող անձը գիտնական է և ոչ թե քաղաքական կամ կրոնական գործիչ: Այսինքն, գիտնականը պետք է քաջածանոթ լիներ իր ասե-

---

* Քանի որ ուղեցույցում օգտագործված հղումները հիմնականում ունեն էլեկտրոնային հասցեներ և դրանց մեծ մասը հնարավոր է գտնել միայն էլեկտրոնային գրադարաններում և համացանցում, անիմաստ ենք համարել տողատակերում դրանց հասցեների նշումը: Փոխարենը դրանք հասանելի են ուղեցույցի **pdf** տարբերակում: Թե՛ տպագիր թե՛ էլեկտրոնային տարբերակներում հղում ենթադրող նախադասությունները կամ դրանց անդամ հանդիսացող բառերը ընդգծված են: Ուղեցույցի pdf տարբերակը ունենալ ցանկացողները կարող են դիմել հեղինակին՝ հետևյալ էլեկտրոնային հասցեին նամակ ուղարկելով. **n.m.margaryan@inbox.ru**

լիքը որոշակի հասկացությունների ստույգ ձևակերպմամբ և հետազոտական որոշակի նյութերի հիման վրա ներկայացնելու գիտական նրբություններին: Հիմնվելով 19-րդ դարավերջի ազգագրական նյութերի և, իմասնավորի, այն հաղորդումների վրա, որ ընտանիքների մեծ մասը ստեղծվում էին ոչ թե ամուսնացող զույգերի, այլ գերադաստանի ավագ անդամների կամքով ու փոխհամաձայնությամբ և, որ ընտանիքի վերարտադրության մեջ նախապատվությունը տրվում էր արու զավակների ծննդյանը, Դետեկտորը պնդում է, որ հիմքեր չկան նման դատողություն անելու համար:

* * * * *

31.08.2019թ. Արցախի հերոս, Արցախի Հանրապետության անվտանգության խորհրդի նախկին քարտուղար Վիտալի Բալասանյանը Առավոտ օրաթերթի հետ զրույցում, անդրադառնալով հայաստանյան երկու հասարակական կազմակերպությունների կողմից Արցախի տեղական ինքնակառավարման մարմինների ընտրություններում դիտորդական առաքելություն իրականացնելուն, պնդում է, որ դա «անմիջական միջամտություն է Արցախի սուվերենությանն ու Սահմանադրությանը»:

Մեղադրանք պարունակող նման պնդում հնչեցնելու համար անհրաժեշտ են որոշակի իրավական հիմքեր, որոնք սակայն Վ. Բալասանյանը չի հիշատակում: Իսկ իրավական հիմքերն այլ բանի մասին են վկայում: Հարցազրույցը վերլուծող Ս. Ղազարյանը պարզաբանում է՝ «Հայաստանյան կազմակերպությունների կողմից դիտորդական առաքելություն իրականացնելը, չի կարող դիտվել որպես Արցախի Սահմանադրության միջամտություն, քանի որ ԷՂՀ

Ընտրական օրենսգրքով հստակ սահմանվում է դիտորդական առաքելություն իրականացնելու իրավունքը: Օրենսգրքի 29-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետով ասվում է, որ ընտրությունների ժամանակ դիտորդական առաքելության իրավունք ունեն Լեռնային Ղարաբաղի Հանրապետության և օտարերկրյա հասարակական այն կազմակերպությունները, որոնց կանոնադրական խնդիրները ներառում են ժողովրդավարության և մարդու իրավունքների պաշտպանության հարցեր, և որոնք չեն աջակցում թեկնածուներին կամ կուսակցություններին, կուսակցությունների դաշինքներին»:

* * * * *

13.01.2020թ.«Առաջատար տեխնոլոգիաների ձեռնարկությունների միության» (ԱՏՁՄ) գործադիր տնօրեն Կարեն Վարդանյանը Lratvakan.am ռադիոյի եթերում հայտարարում է, որ Կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարությունում /ԿԳՄՄՆ/ սաբոտաժ են անում. դադարեցվել է «Արմաթ» լաբորատորիաների տեղադրման ֆինանսավորումը:

Եթերի ընթացքում Կարեն Վարդանյանը իր հայտարարությունը հաստատող որևէ փաստ չի հղում: Որպես այդպիսի փաստ կարող էր ծառայել Արմաթ լաբորատորիաների ֆինանսավորումը դադարեցնելու մասին ԿԳՄՄՆ որոշումը կամ հայտարարությունը, ինչը գոյություն չունի: Հետևապես Կ. Վարդանյանի հայտարարությունը անհիմն է: Այդ հայտարարությանը իր ֆեյսբուքյան էջում արձագանքել է ՀՀ ԿԳՄՍ նախարար Արայիկ Հարությունյանը, նշելով, որ Կարեն Վարդանյանն ընդամենը վեց աշխատանքային օր առաջ է ստացել ավելի քան 800 միլիոն դրամ՝ երեք

մարզում 284 նոր լաբորատորիա ներդնելու համար և «իր լավագույն երազում չէր տեսնի լաբորատորիաների թվի կրկնապատկում ընդամենը չորս ամսում»: Այնուհետ նախարարն ավելացրել է. «Ինֆորմացիոն տեխնոլոգիաների ձեռնարկությունների միության» (ԱՏՁՄ-ի նախկին անվանումը-խմբ.) հարգելի անդամներ, ձեր գործընկերոջ շարունակական նման պահվածքը ձեզ այլևս անվստահելի գործընկեր է դարձնում Կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության համար: ԿԳՄՄՆ հավատարիմ է Հայաստանի բոլոր դպրոցներն ինժեներական լաբորատորիաներով հագեցնելու իր հանձնառությանը՝ կլինի դա ԻՏՁՄ-ի, թե այլ կազմակերպության հետ»:

* * * * *

17.10.2019թ. «7or.am» կայքը «Ինչպես ուրախացնել «Պողոսին» վերնագրով իր հրապարակման մեջ գրում է.

> ՀՀ պետբյուջեն 5 միլիոն դոլարից ավելի գումար է վերցնելու իր վրա, որպեսզի Միլան թոնելը էժանանա, Նիկոլը փիառվի, Տաթևիկ Ռևազյանը աչոնիկից դառնա հարց լուծող լավ աղջիկ, իսկ պողոսներն էլ ֆեյսբուքներում մայեն:

Հրապարակման հեղինակը ներկայացնում է ենթադրություններ առանց հիմնավորման: «Փաստերի ստուգման հարթակը»՝ հիմնվելով վարչապետի մամուլի քարտուղար Վլադիմիր Կարապետյանի պատասխանների և վարչապետ Ն. Փաշինյանի՝ այդ առիթով ֆեյսբուքյան գրառման վրա, հերքում է վերոհիշյալ ենթադրությունը: «Ինչպես նշել ենք, կառավարությունը եվրոպական մեր գործընկերների հետ համատեղ մշակել է թռիչքներ իրականացնելու ֆորմուլա, որը կնպաստի տուրիզմի զարգացմանը, և լոուքոստերի ներկայությունը կապահովվի նաև մեր երկրորդ օդա-

նավակայանում: Բյուջեից որևէ լրացուցիչ գումար չի հատկացվի», ասել է Վ. Կարապետյանը:

1.2 ԴԱՏՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐՆ ՈՒ ԵՆԹԱԴՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՆԵՐԿԱՅԱՑՎՈՒՄ ԵՆ ՈՐՊԵՍ ՓԱՍՏ

Ազգային անվտանգության ծառայության նախկին տնօրեն Ա. Վանեցյանը 2019թ. հունվարի 17-ին գրառում է արել Twitter-ի իր միկրոբլոգում՝ անդրադառնալով Արմաթ լաբորատորիաների ֆինանսավորմանը.

> Արմաթ լաբորատորիաների ֆինանսավորումը վտանգելը ծանր հետևանքներ է ունենալու տեղեկատվական տեխնոլոգիաների ոլորտի ապագայի համար: Չի հնչել ծրագիրը դադարեցնելու վերաբերյալ որևէ ողջամիտ բացատրություն:

Ա. Վանեցյանը իր գրառման սկզբում անհիմն դատողություն է ներկայացնում և հետո այդ դատողության հիման վրա պահանջում է «ողջամիտ բացատրություն»՝ ըստ էության դատողությունը փաստի վերածելու հնարքի օգնությամբ: Ինչպես արդեն վերը նույն առիթով նշել ենք՝ Արմաթ ինժեներական լաբորատորիաների ֆինանսավորումը որևէ կերպ չի դադարեցվել: Սրան ուղղակի արձագանքել է նաև ԿԳՄՍ նախարարությունը և «Արմաթ» լաբորատորիաների հետ կառավարության համագործակցությունը ներկայացրել է թվերով:

* * * *

Անդրադառնալով սահմանադրական փոփոխությունների հանրաքվեին գրող և հրապարակախոս Վ. Իշխանյանը 28.02.2020թ. իր ֆեյսբուքյան հրապարակման մեջ գրում է.

> Հանրաքվեի է դրված մի կողմից լինչի դատաստանը և զոհ մատուցելու մշակույթը այդով, մյուս կողմից Իրավական պետությունը, ան-

կախ դատարանը՝ ոչով և բոյկոտով։ Սակայն այդի կողմնակիցները եթե հաղթեն, իրենց ուզածն էլ չի լինելու, մոլորության մեջ են, չգիտեն որ իրենց նախահիրավական կամ նախաարդիական ժամանակների գիտակցության վրա ուղղակի վարչապետը խաղում է, որ նրանց ձեռքով դատարան հասկացությունը վերացնի, և ինքը լինի միակ դատողը։

Այս գրառման առաջին հատվածն ըստ էության իբրև փաստ ներկայացվող դատողություն է, որի հիման վրա հեղինակն այդուհետ ենթադրություններ է անում։

* * * *

Օգտատեր Ն. Սամսոնյանը 30.04.2020թ. իր ֆեյսբուքյան էջում անդրադառնալով վարչապետ Փաշինյանի ֆեյսբուքյան «լայվին», գրում է.

Մարդ ու կնիկ խմել են ու մտել ուղիղ եթեր. գժանոց բաց երկնքի տակ։ Էս մարդը գնալով գժվում ա, մտել ա ուղիղ եթեր ու մարդկանց ասում ա մոտավորապես հետևյալը՝ «պետությունը ձեզ փող ա տվել ու, եթե դուք սոցիալական պրոբլեմ չունեք, հանեք ձեր գրպանից տվեք սոցիալապես անապահովներին ու ընդ որում դա ձեր փողերը չեն այլ կառավարության»։
Իրոք էս ամեն ինչը արդեն զավեշտալի ա, այսինքն դուրս ա գալիս ես որպես քաղաքացի պետք ա իմ սաղ գործերը թողնեմ ու կառավարության փոխարեն անապահով ընտանիքներ գտնեմ ու իմ գրպանից փող տամ էդ մարդկանց՝ Նիկոլի անունից։ Իսկ, եթե ես վատ քաղաքացի եմ ու դա չե՞մ անում, հետո՞, բա պետությո՞ւնը։ Այսինքն Սոցապնախարարությունը պարգևավճար ստանա, իսկ իրա տեղը սովորական քաղաքացին գնա անապահով ման գա՞։ Դե տենց տենց ա էդ ձեր թանկարժեք մեքենաների ու լափած լափի փողն էլ տվեք մենք որոշենք ոնց ծախսեք էլի...

Հ.Գ. Լավ դուք լուրջ աննորմալ ե՞ք, այսինքն դուք մարդ ու կնիկ խմեք մտնեք ուղիղ եթեր ու մեզ ձեռ առնե՞ք մենք էլ նստենք ձեր հարբած երևալայությունների հետևանքով նյարդայնանա՞նք։ Ախպեր եկեք դուք մի խմեք էլի, մեր ներվերը ափսոս ա։

Ն. Սամսոնյանն ըստ էության իր գրառման սկզբում դատողություն է հնչեցնում, որից հետո իբրև փաստ է մեջբերում Ն. Փաշինյանի խոսքերի՝ իր մեկնաբանությունը և դրանց հիման վրա որոշակի ենթադրություններ է անում՝ հետգրության մեջ կրկին վերադառնալով իր նախնական դատողությանը: Գրառման բուն շարադրանքում ակներև է դառնում, որ Ն. Սամսոնյանը այդ հնարքն օգտագործում է իր հետևորդների աչքում Ն. Փաշինյանին ու նրա ընտանիքը վարկաբեկելու նպատակով:

1.3 ԿԵՂԾ ԿԱՄ ՀՈՐԻՆՎԱԾ ՓԱՍՏԻ ՕԳՏԱԳՈՐԾՈՒՄ

14.01.2020թ. «Politik.am»-ի հոդվածագիրը անդրադառնալով Շվեյցարական «Berner Zeitung» թերթում ՀՀ կառավարությանը գովաբանող հոդվածին. հայտարարում է, որ այն եղել է պատվիրված և արժեցել է 6 մլն 900 հազար դրամ: Այնուհետ հարցնում է թե ո՞վ է վճարել դրա համար: «Politik.am»-ի այդ նյութը վերահրապարակվում է «news.am», «tert.am» և այլ կայքերում, ինչպես նաև լայնորեն տարածվում է ֆեյսբուքյան մի շարք օգտահաշիվների էջերում:

Իպատասխան «Politik.am»-ի հրապարակման, ՀՀ վարչապետի աշխատակազմի «Հանրային կապերի և տեղեկատվության կենտրոն» ՊՈԱԿ-ի «Տեղեկատվության ստուգման կենտրոնը» (infocheck.am) հրապարակում է հերքում՝ նշելով, որ կառավարությունը գումար չի հատկացրել և, որ թերթը ևս հերքում է դա. «Հայտնում ենք, որ հոդվածը չի կրում որևէ կոմերցիոն բնույթ և գրվել է առանց որևէ պատվերի»: Հատկանշական է, որ այս հերքումը «Politik.am»-ը չի հրապարակել: «Փաստերի ստուգման հարթակի» փորձագետ Հ. Նազարեթյանը կապվել է «Berner Zeitung»-ում հրա-

պարակված հոդվածի հեղինակի՝ Ֆրանկ Նինհույսենն (Frank Nienhuysen)-ի հետ, որը ևս հերքել է հոդվածի համար վճարելու փաստը։

Հ. Նազարեթյանը պարզել է, որ նույն հոդվածը «Berner Zeitung»-ից մեկ շաբաթ առաջ՝ դեռ հունվարի 1-ին, հրապարակվել է գերմանական «Suddeutsche Zeitung» օրաթերթի կայքում՝ sueddeutsche.de։ Այն գրեթե ամբողջովին նույն հոդվածն է՝ բացառությամբ մի քանի աննշան տարբերությունների։ Օրինակ, անդրադառնալով ՀՀ նախկին նախագահ Սերժ Սարգսյանի մեղադրանքին, պետությանը պատճառած վնասի չափը գերմանական թերթում արտահայտված է եվրոյով, իսկ շվեյցարականում՝ տեղական արժույթով՝ ֆրանկով։

* * * *

2020թ. հունվարի 26-ին օգտատեր Ն. Սամսոնյանը ֆեյսբուքյան իր էջում գրառում է.

> 3000$ 1կգ սև իկռա առնող Վարչապետը
>
> Անհամաչափ փաստերից խոսացիք չդիմացա... Ուրեմն սա մեր առաջին ձեռից, խիստ հավաստի աղբյուրի փոխանցած լուրն ա, որը էսօր չէ, որ պետք ա հրապարակեի, բայց դե Նիկոլը անհամաչափություն էր ուզում։ Ուրեմն … Վարչապետի միջնեկ աղջիկը, հոր՝ վարչապետ դառնալուց հետո շատ շատ ա հավանել սև իկռան։ Ու դե քանի որ մեր Վարչապետն էլ ալամ աշխարհի գերագույն գլխավոր խմբագիրն ա, երեխու խաթրը չի կարողանում կոտրել ու տենց երևանյան ռեստորաններից մեկից (ռեստորանի անունը հատուկ չեմ տալիս դեռ) հաճախակի 1 կիլոգրամը 3 հազար դոլարով մեր «սուրբ» Նիկոլը երեխու համար իկռա ա առնում։ Տենց 2019-ի դեկտեմբերի սկզբին հերթական 3.000 դոլարանոց ուտելիքն են առնում ու ամսվա վերջում երեխեն էդ մի կիլոյի գլուխը կերած ա լինում։ Ախռանայի տղերքը գնում են էդ ռեստորան ու նորից նույն չափ սև իկռա են ուզում, բայց ասում են «էս անգամ փոխանցումով առնենք էլի», ռես-

> տորանի ադմինիստրացիան ասում ա, որ փոխանցումով առնելու դեպքում 3 հազարի փոխարեն 5 հազար դոլար կլինի կիլոգրամը: Ու էս մեր «սրբության սրբոց» վարչապետն իմանում ու ջղայնանում ա և որոշում ա տվյալ ռեստորանին հարկայինով պատժել հենց տեղում:

Ն. Սամսոնյանի գրառումն ունեցել է 1000-ից ավելի հավանում և 90 կիսում: Գրառման հիմքի վրա Ն. Սամսոնյանի նկատմամբ քրեական գործ է հարուցվել, որի վարույթն իրականացնում է Հատուկ քննչական ծառայությունը /ՀՔԾ/: ՀՔԾ-ն քննվող քրեական գործի նախաքննության ընթացքում ձեռք բերված բավարար ապացույցների համակցությամբ հիմնավորում է, որ «Քաղաքացիական գիտակցություն» ՀԿ նախագահ Նարեկ Սամսոնյանը, գիտակցելով իր տրամադրած տեղեկատվության կեղծ լինելը, Հայաստանի Հանրապետության վարչապետի նկատմամբ կատարել է սուտ մատնություն՝ նրան վերագրելով պաշտոնական լիազորությունները չարաշահելու՝ ՀՀ քրեական օրենսգրքի 308-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված հանցագործության կատարում: Հանցագործության մասին սուտ մատնություն կատարելու համար Նարեկ Սամսոնյանին մեղադրանք է առաջադրվել ՀՀ քրեական օրենսգրքի 333-րդ հոդվածի 1-ին մասով:

1.4. ՓԱՍՏԻ ԿԻՍՈՎ ՉԱՓ ԿԱՄ ԱՄԲՈՂՋՈՎԻՆ ՆԵՆԳԱՓՈԽՈՒՄ

Ներքոբերյալ օրինակը վերաբերում է Ֆեյսբուք սոցիալական ցանցում ամենից շատ շահարկված թեմաներից մեկին՝ Ստամբուլյան կոնվենցիային: 04.07.2019թ. փաստաբան Արա Զոհրաբյանը իր ֆեյսբուքյան էջում գրում է.

> «...կոնվենցիան պարտադրում է պետություններին արմատախիլ անել այն նախապաշարմունքները, սովորույթները, ավանդույթները

և մյուս բոլոր այն երևույթները, որոնք հիմնված են օրինակ՝ կանանց և տղամարդկանց կարծրատիպային դերաբաժանման գաղափարի վրա...»:

Վերլուծելով այդ գրառումը Ա. Ավետիսյանը նկատում է, որ Զոհրաբյանի մեջբերումը թերի է: Այն պետք է լիներ. «Մասնակից պետությունները պետք է անհրաժեշտ միջոցներ ձեռնարկեն՝ կանանց և տղամարդկանց վարքագծի սոցիալական և մշակութային վարվելակերպում փոփոխություններ մտցնելու նպատակով՝ որպեսզի արմատախիլ արվեն նախապաշարմունքները, սովորույթները, ավանդույթները և բոլոր այն երևույթները, որոնք հիմնված են կանանց ստորադասվածության կամ կանանց և տղամարդկանց կարծրատիպային դերաբաժանման գաղափարի վրա»: Միաժամանակ, Զոհրաբյանը առաջարկում է վերոնշյալը հասկանալու համար նայել Կոնվենցիայի 4-րդ հոդվածի 53-րդ կետում «գենդերային ինքնություն» եզրույթի բացատրությունը, որը սակայն, լույս չի սփռում իր թերի մեջբերման վրա: 53-րդ կետը թվարկում է խտրականության և բռնության ենթարկվելու տարաբնույթ պատճառներ, ինչպես նաև այն անձանց, ովքեր ենթարկվում են բռնության՝ այդ պատճառներից ելնելով: Ա. Զոհրաբյանը «սեռ», ««գենդեր» ու «գենդերային ինքնություն» բառախաղի միջոցով փորձում է կոնվենցիան պտտել միայն ԼԳԲՏՔ մարդկանց շուրջ: Այսպիսով, Ա. Զոհրաբյանը հիշատակում է փաստի մի մասը, իսկ մյուս մասը իր ենթադրությունն է ներկայացնում»:

* * * * *

Մեկ այլ տեղ Ա. Զոհրաբյանը դիմում է փաստի ամբողջական նենգափոխման, որը արձանագրել է Ս. Չանդիրյանը.

08.07.2019թ «TV5» –ում ունեցած հարցազրույցում Ա. Զոհրաբյանը պնդում է անում, որ Կոնվենցիան նպատակ ունի «անսահմանափակ

լիազորություններ տալ ԼԳԲՏ համայնքին» (տես՝ 08:30-08:50 րոպեներ)։

Ս. Չանդիրյանը քննելով այդ պնդման հիմքերը, պարզաբանում է, որ «Կոնվենցիան որևէ կերպ չի անդրադառնում ԼԳԲՏ անձանց համար իրավունքներ և/կամ լիազորություններ սահմանելու հարցին և որևէ կերպ չի քննարկում նույնասեռ անձանց կողմից երեխաների որդեգրման հարցը։ Այն պարզապես ներկայացնում է, որ ինչպես հաշմանդամություն ունեցող կանայք, ազգային փոքրամասնություններին պատկանող կանայք, ՄԻԱՎ-ով կամ ՁԻԱՀ-ով ապրող կանայք, այնպես էլ ԼԳԲՏ համայնքի ներկայացուցիչները կարող են ենթարկվել խտրականության՝ Կոնվենցիայով նախատեսված աջակցության ծառայությունները ստանալիս և պաշտպանական մեխանիզմներից օգտվելիս»։

* * * * *

Նախկին ՀՀ վարչապետ Հրանտ Բագրատյանը 2019թ. նոյեմբերի 20-ին «TV5» ալիքի եթերում, անդրադառնալով արտագաղթի նվազման մասին հայտարարություններին, պնդում է արել, թե իրականում արտագաղթը կրկնապատկվել է, իսկ մեկնածների և ժամանածների դրական սալդոն Հայաստան եկած հնդիկների «հաշվին» է։ Նա հայտարարում է.

35,000 այս տարի ինն ամսում գնացել է (2019 առաջին ինն ամսում երկրից հեռացածների թիվը- խմբ.)։ Այս տարի ինն ամսում եկել ա 37,519 հնդիկ։ Ես կարամ էս 35,000-ին էս 37-ը գումարեմ։ Բացի էն, որ հայերը շարունակում են գնալ՝ տեմպը չի նվազում, տեղի է ունենում ռակիրովկա՝ replacement, հայերը փոխարինվում են հնդիկներով։

Հ. Նազարեթյանը քննության առնելով նշված ժամանակաշրջանին վերաբերող վիճակագրական տվյալները, արձանագրում է, որ «Հայաստան եկած հնդիկների մեծ մասն արդեն հեռացել է: Ըստ միգրացիոն ծառայության ներկայացրած վիճակագրության, 2019-ին ավելի շատ Հնդկաստանի քաղաքացի լքել է Հայաստանը, քան ժամանել Հայաստան: Այսպես, 2019-ին Հայաստան է եկել Հնդկաստանի 38,735 քաղաքացի և մեկնել 39,181-ը: Տարբերությունը բացասական է՝ -446: Այսինքն, 446-ով ավել հնդիկներ դուրս են եկել Հայաստանից, քան մուտք գործել Հայաստան: Այսպիսով, ըստ Հ. Նազարեթյանի. «Հրանտ Բագրատյանի պնդումները, թե՝ Հայաստանում արտագաղթը կրկնապատկվել է, և մեկնածների ու ժամանածների դրական սալդոն Հայաստան եկած հնդիկների «հաշվին» է, չեն համապատասխանում իրականությանը»:

1.5 ՓԱՍՏԻ ՀԱՄԱՏԵՔՍՏԱԶՐԿՈՒՄ ԿԱՄ ԻՆՖՈՄԻԱՎՈՐԻ ՎԵՐԱԾՈՒՄ

Փաստը կարելի է շահարկման միջոց դարձնել համատեքստից զրկելով, նույն տեքստում այլ փաստերի հետ դրա կապը զանց առնելով: Այդ դեպքում փաստը վերածվում է ինֆոմիավորի կամ արհեստականորեն կապվում է այլ փաստերի հետ:

25.09.2019թ. Մամլո ասուլիսի ժամանակ ԱԺ ՀՀԿ-ական նախկին պատգամավոր Կարինե Աճեմյանը ասում է.

> Ուզում եմ նշել, որ Նիկոլ Փաշինյանը, լինելով Ամերիկայի Միացյալ Նահանգներում, արել է երկու աննախադեպ հայտարարություն: Դրանցից մեկը վերաբերում է Հայ-առաքելական եկեղեցուն և նրա սպասավորներին ծնկի բերելուն: Մենք բոլորս գիտենք, թե պատմու-

թյան ընթացքում ովքեր են մեր թշնամիներից ցանկացել ծնկի բերել եկեղեցուն։

Կ. Աճեմյանը աղավաղում է Նիկոլ Փաշինյանի խոսքը՝ վերջինից մի դրվագը առանձնացնելով կամ համատեքստից դուրս բերելով։ Վարչապետը իրականում հայտարարել էր . «Երբ մենք ասում ենք, որ եկեղեցու ներքին կյանք չենք մտնում, որոշ եկեղեցականներ եզրակացնում են՝ սա նախկին կառավարության նման չէ, սա թույլ կառավարություն է, եկեք քանդեք այս կառավարության ոտքերի տակ։… Շատ ուժեղ հակահարված կստանան ու ծնկի կբերվեն բառիս բուն և փոխաբերական իմաստով։ Իսկ ընդհանուր իմ դիրքորոշումը չի փոխվում. եկեղեցին կառավարվում է ծխական կառույցների միջոցով և պետք է շարունակի էդպես լինել, իսկ կառավարությունը չպետք է միջամտի եկեղեցու ներքին … (գործերին-խմբ.)»։ Փաստացի, Փաշինյանը «սպառնում է «ծնկի բերել» ոչ թե Հայ-առաքելական եկեղեցուն, այլ «որոշ եկեղեցականների»։

Նույն իրադարձությանը համատեքստազերծման նույն հնարքով էր արձագանքել նաև Վատիկանում նախկին ՀՀ դեսպան Մ. Մինասյանը՝ 23.09.2020թ. ֆեյսբուքյան իր գրառման մեջ.

Երեկ ԱՄՆ-ում իր հնչեցրած խոսքում նա սպառնաց, որ «ծնկի է բերելու» Հայ առաքելական եկեղեցին։ «Ատելության առաքյալը» խոստովանեց այն, ինչի մասին գրում էր միշտ, խոսում էր միշտ անուղղակի և ինչը հստակ անում է արդեն երկու տարի։ Հայ առաքելական եկեղեցին ամեն գնով ցանկացել են «ծնկի բերել» պարսիկ, բյուզանդացի ու արաբ նվաճողները ու չեն կարողացել։ Չի հաջողվել նաև սելջուկներին ու մոնղոլներին։ Չի հաջողվել թյուրք-օղուզներին և մնացած արնախում թշնամիներին։ Մեր հայրենիքի բոլոր զավթողներն են փորձել, բայց չի հաջողվել ու չի հաջողվելու։ Թույլ չենք տա։ Հայ առաքելական եկեղեցին «ծնկի բերել» փորձողների ծնկներն են ջարդվելու։

* * * * *

Համատեքստազերծման օրինակ է մեկ այլ ժամանակ տեղի ունեցած իրադարձությունը կամ հնչեցրած տեքստը այլ ժամանակահատվածում և այլ հանգամանքներում ներկայացնելը։

2020թ ապրիլի 28-ին ՎԵՏՕ –ի հիմնադիր Ն. Մալյանը ֆեյսբուքյան իր էջում տեղադրում է «168 ժամ» կայքէջից մի նկար, որի ստորին հատվածում Դավիթ Սանասարյանի հետևյալ խոսքերն են. «Այսօրվանից հրաժարվում ենք վճարել կոմունալները»։ Իրականում, այդ խոսքերը Դ. Սանասարյանը հնչեցրել է երկու տարի առաջ՝ 2018թ ապրիլի 21-ին՝ Թավշյա հեղափոխության բուռն ծավալման շրջանում, ինչը նույն ամսաթվով հրապարակվել է «168 ժամի» կայքէջում։ Ն. Մալյանի գրառումը՝ տվյալ կոչին ծանոթ օգտատերերի համար կարող է հեգնական թվալ։ Բայց անծանոթները այն ընկալում են որպես տվյալ պահին տեղի ունեցող իրադարձություն, ինչը հաստատվում է նրա գրառման տակ արված տարբեր օգտատերերի արձագանքներում։ Կորոնավիրուսի համաճարակով պայմանավորված արտակարգ իրավիճակում ՀՀ իշխանությունները կոչեր են հնչեցնում կոմունալ վճարները ժամանակին վճարելու մասին ու այդ նպատակով բնակչությանը ֆինանսական օժանդակության ծրագրեր են իրականացնում։ Այնինչ, նման գրառումները կարող են հակառակ ազդեցություն ունենալ և խրախուսել կոմունալ վճարները չվճարելը։ Ավելացնենք նաև, որ Ն. Մալյանի վերոհիշյալ գրառումը Ֆեյսբուքում ունեցել է 66 կիսում։

* * * * *

2020թ. ապրիլի 30-ին օգտատեր Անահիտ Մութաֆյանը իր ֆեյսբուքյան էջում գրում է.

> Մինչ մենք այստեղ նստած իրար ենք ուտում ու որոշում թե ով է անբարոյականի զավակ, ով՝ բարոյականի, սահմանին երկու զոհ ունենք: Հակառակորդը երկու օր է գնդակոծում է մեր սահմանը: Բայց մենք այստեղ Ալենի «տղիկության» հարցն ենք քննարկում:

Իր գրառմանը կից նա տեղադրում է Ռազմինֆո կայքում հրապարակված մի նյութ, որը վերաբերում է 2016 թվականի ապրիլի 30-ի լույս գիշերը տեղի ունեցած իրադարձություններին: Օգտատեր Ռ. Աֆրիկյանի նախազգուշացումից հետո Ա. Մութաֆյանը հեռացնում է իր գրառումը:

1.6 ՓԱՍՏԻ ՓՈԽԱՐԵՆ ՈՐԵՎԷ ՀԵՂԻՆԱԿՈՒԹՅԱՆ ՎԿԱՅԱԿՈՉՈՒՄ

2019թ. սեպտեմբեր-հոկտեմբերին բարձրագույն ուսումնական հաստատություններում «Հայոց լեզու», «Հայ գրականություն» և «Հայոց պատմություն» առարկաների դասավանդմանը վերաբերող՝ «Բարձրագույն կրթության և գիտության» մասին ՀՀ օրենքում նախատեսվող փոփոխությունը վերանայելու շուրջ ծագած դժգոհության տեքստերում առկա են փաստի փոխարեն հեղինակություն վկայակոչելու դրվագներ:

ԵՊՀ Հայոց լեզվի պատմության ամբիոնի դոցենտ Նարինե Դիլբարյանը լրագրողի հետ զրույցում ասում է հետևյալը.

> Սահմանադրությամբ ամրագրված է հայերենի վիթխարի կարևորությունը Հայաստանի համար, միշտ պետք է կարողանանք պաշտպանել մեր լեզվի շահերը: *Աստվածաշունչն* ասում է՝ ի սկզբանե բանն է: Հիմա, եթե մենք այդ բանը՝ հայերենը, չենք պաշտպանում, ապա ինչի մասին է խոսքը:

Տվյալ դեպքում որպես հեղինակություն վկայակոչվում է գիրքը՝ Աստվածաշունչը: Բայց Աստվածաշնչից արված մեջբերումը ուղղակի առնչություն չունի հայոց լեզվի հետ: Այն կապվում է աստծո խոսքի հետ, իսկ ըստ որոշ մեկնաբանությունների՝ շնչի հետ: Հետևապես, մեջբերումը չի կարող փաստարկ հանդիսանալ հայոց լեզվի ուսուցումը բուհերում պարտադիր դարձնելու համար:

* * * * *

Փաստերի փոխարեն հեղինակություններ հղելը հատկապես բնորոշ է կրոնական ուղերձներին: Քահանա Սերոբ Ազարյանը 19.04.2019թ. իր ֆեյսբուքյան գրառման մեջ անդրադառնալով Ազգային ժողովում տրանսգենդերի ելույթին և այդ առթիվ վարչապետ Փաշինյանի՝ հոգևորականներին ուղղված հարցադրմանը. «տրանսգենդերը մարդ է՞ թե՞ չէ», արձագանքում է՝ բազմաթիվ դրվագներում իբրև հեղինակություն հղելով Աստծուն, Աստվածաշունչը և տարբեր սրբերի: Այդ բոլոր հղումների նպատակը մեկն է՝ հիմնավորել, որ տրանսգենդերը մարդ է ֆիզիկական ու ոչ թե բարոյական առումով:

> Դուք Աստուածաշունչ կարդում էք պարոն վարչապետ: Որպէս խորապէս հոգեւորական եւ աղօթքի մարդ՝ պարտք ունեմ ձեզ յիշեցնելու առաքելական սուրբ պատգամը. «Աստծու կամքը այս է. որ դուք սուրբ լինէք, հեռու մնաք պոռնկութիւնից. ձեզնից իւրաքանչիւր ոք գիտենայ իր մարմինը պահել սրբութեամբ ու պատուով, եւ ոչ թէ ցանկութեան կրքով, ինչպէս այլ հեթանոսներ, որ չեն ճանաչում Աստծուն: Թող ոչ ոք այդ բանում չափը չանցկացնի եւ չդիպչի իր եղբօր պատուին, քանզի այդ բոլոր բաների համար Տէրը վրէժխնդիր է, ինչպէս որ առաջուց ասացինք ձեզ եւ վկայեցինք. արդարեւ, Աստուած չկոչեց մեզ պղծութեան, այլ՝ սրբութեան: Ահա թէ ինչու, ով անարգում է այս բանը, մարդո՛ւն չի անարգում, այլ՝ Աստծուն, որը եւ Սուրբ Հոգին տուեց ձեզ:» Ա. Թես. 4:3-8:

Մեր ազգի փրկութիւնը նրանց խոստացած եւրո-ամերիկեան «դրախտներ»ը չեն։ Մեր ազգի փրկութիւնը ՄԵ՛Ր մէջ է, մեր ազգային հաւաքականութեան, մեր բռնցքումին, մեր համահայկական քրիստոնէական արժէհամակարգին, որի հեղինակը Տէրը եւ մեր ազգի փրկիչը մեր Տէր Յիսուս Քրիստոսն է։ Այո՛.., այդ նո՛յն հալածեալ, թքնեալ, պախարակեալ, ծաղրեալ, խաչեալ ու թաղեալ, ու գերեզմանը պատռելով Յարուցեալ եւ յաղթական Քրիստոսը։ Որին գերեզմաններ չեն կարող պարունակել եւ որեւէ մահ չի կարող յաղթահարել.., ինչպէս պատահեց ԻՐ օրինակով մեր ազգին։

Գնացէք Տիրոջ ՆԵՂ շաւիղով պարոն վարչապետ որ դէպի կեանք է առաջնորդում բոլորիս մեր արժէքների պահպանումով եւ մերժելով ամէն աղտեղութիւն եւ չար… մի գնաք Եւրոպաների լայն ճանապարհներով, երբ անցեալին ու ներկայիս բարոյական առումով մեզ առաջնորդում է բոլորիս դէպի կորուստ… (Մատթ. 7:13-14)։

Տէրը ձեզ ու բոլորիս պատուիրում է. «Սո՛ւրբ եղէք, որովհետեւ ես սուրբ եմ»։ (Ա. Պետ. 1:16)։

* * * * *

Որպես հեղինակություն կարող են վկայակոչվել ինչպես համաշխարհային հռչակ ունեցող անձիք, այնպես էլ այսպես կոչված՝ համբավ ունեցող երկրները։ Ռուսաստանի դաշնության /ՌԴ/ Ազգային հետազոտությունների համալսարանի փորձագետ Ա. Մասլովը, անդրադառնալով սոցիալական ցանցերում շրջանառվող շահարկումներին, դրանք հաստատող երկու օրինակ է բերում։ Մեկը առնչվում է «Կարիք չկա մութ սենյակում սև կատու փնտրել, հատկապես եթե սենյակում այն չկա» հայտնի փոխաբերությանը, որը վերագրվում է Ք.ա. 6-5-րդ դդ. չինացի մտածող Կոնֆուցիոսին։ Իրականում վերջինս նման բան չի ասել և նրա աշխատություններում անհնար է նման բան գտնել։ Սակայն Կոնֆուցիոսի անունը վկայակոչվում է փոխաբերությանը կշիռ տալու և այն անհերքելի ճշմարտության վերածելու նպատակով։ Մյուսը օրինակը

վերաբերում է ՌԴ-ում՝ կենսաթոշակների բարեփոխումների հետ կապված (2018թ. սկիզբ առած) հանրային քննարկումներին: Բարեփոխումների կողմնակիցները շրջանառության մեջ են դնում հետևյալ կեղծիքը թե՝ կան երկրներ որտեղ թոշակ չկա: Եվ որպես օրինակ է բերվում Չինաստանը: Այնինչ, Չինաստանում ոչ միայն կենսաթոշակ կա, այլև դրա չափերը նույնիսկ ավելի բարձր են, քան Ռուսաստանի դաշնությունում:

1.7 ՓԱՍՏԻ ՓՈԽԱՐԵՆ ԵՐԱՇԽԱՎՈՐՈՂ ԲԱՌԵՐԻ ՕԳՏԱԳՈՐԾՈՒՄ

Փաստերի բացակայությունը երբեմն փոխարինվում է տարբեր երաշխավորող բառերով և արտահայտություններով՝ «վստահ եմ», «համոզված եմ», «ավելի քան համոզված եմ», «ակնհայտ է», «հայտնի փաստ է», «բոլորին քաջ հայտնի է», «բոլորը գիտակցում են» և այլն:

* * * * *

03.06.2019թ. «tert.am»-ին տրված հարցազրույցում, պատասխանելով Հայաստանի դատական համակարգում վեթինգ անցկացնելու մասին վարչապետի հայտարարություններին, Սահմանադրական դատարանի նախագահ Հ Թովմասյանը ասում է.

> «…նորանկախ երկրներում կամ հետխորհրդային երկրներում քաղաքական իշխանափոխության արդյունքում դատական իշխանափոխության դրսևորումներ կան: Դա առկա է եղել Վրաստանում, Ուկրաինում, Չեխիայում, Ալբանիայում և մի շարք այլ երկրներում: *Ակնհայտ է*, որ այդ արագ փոփոխությունների փորձն այս երկրներում ոչ միայն առկա խնդիրները չի լուծել, այլ երբեմն հանգեցրել է ավելի բարդ անգամ անլուծելի խնդիրների: Լուծման բանալին ոչ ոք չգիտի»:

Հ. Թովմասյանը իր խոսքում հղում է միայն անուններ, որոնք ինքնին փաստեր չեն: Պարզվում է, Չեխիայում վեթինգի անցկացումն այնուամենայնիվ ավելի շատ դրական հետևանքներ է ունեցել: Վեթինգ հաջողությամբ իրականացվել է նաև այլ երկրներում (1, 2, 3), որոնց անունները Հ. Թովմասյանը չի հիշատակում:

* * * * *

26.11.2018թ. Ֆեյսբուքում տարածվեց Լիդիան Արմենիայի հետևյալ պնդումը.

> «*Հստակ է*, որ հանքարդյունաբերության և քաղցկեղի կապի մասին խոսակցությունները չունեն ոչ մի գիտական հիմնավորում»:

ԴԵՏԵԿՏՈՐԸ սա որակում է որպես «անհիմն պնդում և ապատեղեկատվություն, քանի որ կան մի շարք գիտական հետազոտություններ, որոնցում հիմնավորվում է նման կապի առկայությունը: Բացի դրանից, վերջերս չեխ գիտնականների կողմից ՀՀ Լոռու մարզում իրականացված հետազոտությունը փաստում է, որ ծանր մետաղներով աղտոտվածությունը բավականին մեծ է, ազդում է շրջակա միջավայրի և մարդկանց առողջության վրա»:

* * * * *

Լրագրողների հետ զրույցում ԵՊՀ Հայ բանասիրության ֆակուլտետի դոցենտ Արշալույս Գալստյանը անդրադառնալով բարձրագույն ուսումնական հաստատություններում Հայոց լեզու, Հայ գրականություն և Հայոց պատմություն առարկաների դասավանդմանը վերաբերող «Բարձրագույն կրթության և գիտության» մասին ՀՀ օրենքում նախատեսվող փոփոխությանը, ասում է.

Մեր ֆակուլտետի գիտխորհուրդը բացասական կարծիք ունի այս օրինագծի մասին: *Բոլորս* էլ հասկանում ենք, թե 21-րդ դարում ինչ բացասական հետևանքներ կարող է ունենալ մայրենիի նահանջը փոքր ազգի համար»: Այդուհետ նա շարունակում է. «Ֆակուլտետի մեր *բոլոր* ընկերները դեմ են նախարարի այս հայտարարությանը: Բոլոր նրանք, ովքեր համարում են, որ հայոց լեզուն պարտադիր չէ, չեն կարող ազգ պահպանել:

Իրողությունն այն է, որ եթե բոլորը հասկանային, որ 21-րդ դարում մայրենի լեզվի նահանջը կարող է բացասական ազդեցություն ունենալ, ապա ԿԳՄՍ նախարարն այդ որոշումը չէր ընդունի և բազմաթիվ մտավորականներ այն չէին պաշտպանի: Նշանակում է կան մարդիկ, որ բոլորի մեջ չեն: Ինչ վերաբերում է ֆակուլտետի բոլոր ընկերների՝ դեմ լինելուն, ապա նշված խնդրով բողոքի դրսևորումներից երկու օր անց ԵՊՀ բանասիրական ֆակուլտետի դասախոսներից մեկը հյուրընկալվեց Հայլուրի տաղավարում և Պ. Ղազարյանի հետ հարցազրույցի ժամանակ արտահայտվեց նախատեսվող փոփոխության օգտին: Ըստ էության, դոցենտ Ա. Գալստյանի պնդումը թե՝ նախարարի որոշումը ենթադրում է մայրենի լեզվի նահանջ և, որ այն կարող է բացասական ազդեցություն ունենալ փոքր ազգի վրա, գրեթե անհիմնավորելի պնդում է, որը, սակայն քողարկվում է՝ «բոլորս հասկանում ենք», «բոլորը դեմ են» երաշխավորող բառերի օգնությամբ:

ՍԵՎԵՌՄԱՆ ԿԵՏԵՐ

- Ուշադրություն դարձրեք, թե ինչո՞վ է հիմնավորվում ասելիքը: Համոզվեք, որ հիմնավորման հիմքում փաստեր են ու ոչ թե հեղինակի դատողությունները կամ ենթադրությունները:
- Եթե հղվում է որևէ փաստ, ապա փորձեք պարզել թե այն ամբողջությա՞մբ է հղվում, թե ոչ: Փորձեք գտնել փաստի ամբողջական տարբերակը:
- Փորձեք պարզել փաստի եղելությունը: Արդյո՞ք տարբեր աղբյուրներում կամ ականատեսների հաղորդումներում փաստը նույն կերպ է նկարագրվում:
- Փորձեք նաև պարզել թե տեքստում հնչող եզրակացության կամ դատողության համար բոլոր փաստե՞րն են հաշվի առնվել, թե՞ միայն մեկը կամ երկուսը:
- Ուշադրություն դարձրեք, թե տեքստում վկայակոչվող հեղինակությունները կամ երաշխավորող բառերը արդյո՞ք ուղեկցվում են կոնկրետ փաստերով:

2 Շահարկումներ կապված սկզբնաղբյուրների հետ

Վստահության հավակնող փաստերը և ուղերձները ենթադրում են հղում կոնկրետ սկզբնաղբյուրներին։ Այդպիսիք կարող են հանդիսանալ ականատեսները, վավերագիր վիդեո-աուդիո և տպագիր նյութերը, մասնագիտական գրականությունը, իրավական ակտերը, համաձայնագրերը, լուրերն ու հաղորդումները։ Մի խոսքով, այն ամենը, որոնց օգնությամբ հնարավոր է հաստատել որևէ փաստի գոյությունը։

Սկզբնաղբյուրների հետ կապված շահարկումների մեջ առանձնանում են հնարքների 4 տիպեր.

1. Սկզբնաղբյուրի բացակայություն
2. Կեղծ սկզբնաղբյուրի հիշատակում
3. Դեղին սկզբնաղբյուրի հղում
4. Սկզբնաղբյուր ունենալու ձևացում (իմիտացիա)

2.1 ՍԿԶԲՆԱՂԲՅՈՒՐԻ ԲԱՑԱԿԱՅՈՒԹՅՈՒՆ

Լիդիան Արմենիան 2019թ. հոկտեմբերի 27-ին ֆեյսբուքում տարածում է հետևյալ գրառում-գովազդը.

> «Գիտական փաստ է, որ ժամանակակից հանքարդյունաբերությունը չի վտանգում առողջությունը։ Դրա օրինակները բազմաթիվ են՝ Կանադայից Շվեդիա, Իսպանիայից Չեխիա։ Հակառակ պնդումը՝ միֆ է (...)»։

Մ. Բաղդասարյանը անդրադառնալով այդ գրառմանը նկատում է, որ «Լիդիան Արմենիա» կազմակերպության

ներկայացուցիչներն առաջ են քաշում ընդհանուր բնույթի մի պնդում (ժամանակակից հանքարդյունաբերությունը չի վտանգում առողջությունը), որը «գիտական փաստ» են որակում՝ հղում չկատարելով այդ դրույթն ապացուցող որևէ գիտական հետազոտության: Փոխարենը, առանց հիմնավորման, մասնավոր դեպքերի օրինակներ են բերում («Կանադայից Շվեդիա, Իսպանիայից Չեխիա») և տրամաբանական սխալ թույլ տալիս, որովհետև մի քանի մասնավոր օրինակներ, նույնիսկ՝ իրականությանը համապատասխանելու դեպքում (ինչն այդպես չէ), չեն կարող համընդհանուր պնդման ապացույց դառնալ, եթե հակառակն ապացուցող օրինակները բացառված չեն»: Այդուհետ նա թվարկում է բազմաթիվ օրինակներ, որոնք վկայում են, որ ժամանակակից հանքարդյունաբերությունը վտանգ է ներկայացնում առողջության համար:

Ավելացնենք նաև, որ, երբ որևէ փաստ հայտարարվում է գիտական, ապա առավել ևս ենթադրվում է գիտական սկզբնաղբյուրի հղում, որտեղ որոշակի գիտական մեթոդներով (համեմատական, տիպաբանական, գործառութային, կառուցվածքային և այլն) հիմնավորվում է փաստի գոյությունը:

* * * * *

2019թ. հունիսի 1-ին ռուսական «gosnews.ru» կայքում տարածվում է վարչապետ Ն. Փաշինյանի անունից՝ ՆԱՏՕ-ի գլխավոր քարտուղար Յենս Ստոլտենբերգին ուղղված մի նամակ, որում վարչապետը, իբր, պատրաստակամություն է հայտնում ավելի սերտ կապեր հաստատել դաշինքի հետ՝ միևնույն ժամանակ ընդգծելով, որ դրա համար խոչընդոտ է հանդիսանում ղարաբաղյան հակամարտությունը: Ն.

Փաշինյանը նամակում խոստանում էր մեկ տարվա ընթացքում «հայկական զորքերը դուրս բերել Արցախից»։ Այս կեղծ նամակը արագորեն տարածվում է Ֆեյսբուքի տարբեր օգտատերերի էջերում։

«Փաստերի ստուգման հարթակը» անդրադառնալով այդ նամակին՝ հղում է ՀՀ Կառավարության հայտարարությունը, որում ասվում է, որ նամակը կեղծ է։ Իսկ մեդիահետազոտող Սամվել Մարտիրոսյանը կարծում է, որ կեղծ նամակի հեղինակներին, հավանաբար, պետք է փնտրել երկրից դուրս։

2.2 ԿԵՂԾ ՍԿԶԲՆԱՂԲՅՈՒՐԻ ՀԻՇԱՏԱԿՈՒՄ

Կեղծ սկզբնաղբյուրն այս դեպքում այն է, որտեղ անհնար է գտնել հայտարարված փաստի մասին հաղորդում։ Սկզբնաղբյուրն ինքնին կարող է կեղծ չլինել։ Այսինքն կեղծիքը հղման մեջ է։ Ահա երկու օրինակ.

Սեռաբան Նարինե Ներսիսյանը հարցազրույցներից մեկում իր ասելիքը հավաստի դարձնելու նպատակով հղում է սկզբնաղբյուրներ, որոնցում իր պնդումը հաստատող որևէ փաստ չկա։

> «Այո՛, սեռակրթության ծրագրեր չկան։ Ինչի՞ չկան։ Որովհետև հենց հայերն իրենց պատմամշակութային ժառանգությամբ, իրենց մեջ կրելով այդ առողջ հատիկը, էն հայերը, ովքեր իրենց արմատներին մոտ են կանգնած, ինքնությանը հավատարիմ են, իրենք էսպես կրում են, իրենց պետք չի բացատրել, թե ինչպես քո երեխային դաստիարակես։ Իրենք, ոնց որ կրելով իրենց ներսում՝ փոխանցում են, հաղորդում են… Բայց, քանի որ էսօր շատ հայեր, ցավոք, իրենց արմատներից կտրված և իրենց ինքնությունից նույն այդ ազդեցությունների տակ կտրված են… Այ, իրենց համար պետք է երևի այդ ծրագրերը լինեն, որպեսզի իրենք վերադառնան իրենց ակունքներին։ Մեր

երկրում սեռակրթությունը ես պատկերացնում եմ վերադարձ մեր ակունքներին: Այսինքն՝ մեր հիշողության թարմացումը: Էնտեղ մենք ամեն ինչը ունեցել ենք, բայց մոռացել ենք: Մեր սեռական կրթությունը պետք է վերհիշել: Ոչ թե նայենք, թե դրսում ինչ է կատարվում»: Այդուհետ, լրագրողի այն հարցին թե՝ ի՞նչ ակունքների կամ արմատների մասին է խոսքը, արդյո՞ք կան գրականություն, աշխատություններ, Ն. Ներսիսյանն արձագանքեց. «*Հացունու՝ «Հայուհին պատմության մեջ»* և «*Հայոց դաստիարակություն»*, որից մեկը վերաբերում է օրիորդների սեռական դաստիարակությանը, մյուսը՝ ասպետների: Եվ, անշուշտ, մի գիրք էլ կա, որը իմ համար սեռակրթության ամենան է, դա մեր էպոսն է, այսինքն՝ «*Սասունցի Դավթի*» մասին է խոսքը»: (44:50-46:30)

Ն. Մարգարյանն իր վերլուծական հրապարակումներից մեկում պարզաբանում է, որ սեռաբան Ն. Ներսիսյանի հիշատակած սկզբնաղբյուրներից (Վ. Հացունու աշխատություններ, Սասունցի Դավիթ էպոս) ոչ մեկում սեռակրթությանը վերաբերող որևէ տող չկա:

* * * * *

Gayane Ayvazyan անունով օգտատերը 17.09.2019թ. ֆեյսբուքում տարածում է վարչապետ Փաշինյանին վերագրվող մի փաստաթուղթ, որի վրա գրված է «գժի թուղթ»: Փաստաթուղթն իբր թե վկայում է, որ այն 2001 թվականին Կրասնոդարի քաղաքային հոգեբուժարանը ուղարկել է նույն քաղաքի դատախազությանը:

КРАСНОДАРСКАЯ
ГОРОДСКАЯ ПСИХИАТРИЧЕСКАЯ БОЛЬНИЦА
Диспансерное отделение

г. Краснодар - 18
ул. Камвольная, 12
тел. 31-79-08

ПРОКУРАТУРА г.Краснодар
ст.следователю КС Лес

№ 15773
«16» 11 200 г.

На № 15-1 от « 05 » 200 г.
Сообщает, что гр-н (гр-ка) Никол Вас Нашинян
01 06 19 75 года рождения,
проживающий (ая) по адресу: г. ул
на диспансерном наблюд Сост
Зам. главн врач
Аргинян А.А.
Медстатис
Осикина Е.В.

ГАЗ. 5000, № 566

ԳԺԻ ԹՈՒՂԹ

ՀՀ Կառավարությունն արձագանքելով այդ փաստաթղթի շուրջ ստեղծված աղմուկին՝ հայտարարում է, որ փաստաթուղթը կեղծ է և առնչություն չունի Նիկոլ Փաշինյանի հետ: Որպես ապացույց՝ ուշադրություն է հրավիրվում փաստաթղթում զետեղված լուսանկարին. «Կեղծված փաստաթղթում օգտագործվել է հենց ստուգման գրքույկից վերցրած լուսանկարը»: Իսկ 1991 թվի համալսարանական ստուգման գրքույկը 2018-ին վարչապետն ինքն էր հրապարակել իր ֆեյսբուքյան էջում:

2.3 ԴԵՂԻՆ ՍԿԶԲՆԱՂԲՅՈՒՐՆԵՐ

Դեղին սկզբնաղբյուր կամ դեղին մամուլ են համարվում այն աղբյուրները, որոնք հրապարակում են հիմնականում կենցաղային բնույթի նորություններ, սկանդալային և ինտրիգային բնույթի տեղեկություններ, հաղորդվող տեղեկությունները սովորաբար հիմված են ասեկոսեների ու բամբասանքների վրա, հազվադեպ են հանդիպում վերլուծական հրապարակումներ: Այս հնարքի ամենատիպական

դրսևորումներից մեկը վերաբերում է պատվաստումների և հատկապես գարդասիլի դեմ արտահայտվող կայքերին։

> «News.am» կայքը 2019թ. հոկտեմբերի 27-ին հրապարակել է «Գարդասիլով» պատվաստելուց հետո դեռահասների մոտ ցրված սկլերոզ են հայտնաբերել» վերնագրով հոդվածը, որը նույն կայքը անգլերեն տարբերակում հրապարակել է հետևյալ վերնագրով՝ "It's Official – Teens Diagnosed With MS After Gardasil Vaccines" («Պաշտոնական է՝ գարդասիլով պատվաստելուց հետո դեռահասներն ախտորոշվել են ցրված սկլերոզով»)։

«News.am» կայքը հոդվածում հղում է կատարում «americanheal-thnews.info» կայքին, որը նյութը հրապակել էր 2018թ. սեպտեմբերի 16-ին։ Իսկ վերջինս էլ օգտվել է «collective-evolution.com» կայքից, որն էլ դրա մասին հրապարակել է 2018թ. փետրվարի 23-ին։ Շահարկմանը անդրադարձած Հ. Նազարեթյանը նկատում է, որ «Նյութը լի է անհիմն պնդումներով։ Նրա սկզբնաղբյուրը՝ «collective-evolution.com» կայքը, հայտնի է իր կեղծ գիտական նյութերով և դավադրության տեսությունների տարածմամբ։ Ըստ փաստերի ստուգմամբ զբաղվող «Media Bias/Fact Check (MBFC News)» ամերիկյան անկախ հարթակի, այն կեղծ գիտական և «քլիքաբեր» (clickbait) կայք է, որը ներկայանում է որպես այլընտրանքային լրատվամիջոց»։ Նա նաև ավելացնում է, որ. «Այս տարվա մայիսին ամերիկյան առողջապահական գիտական պարբերական «Human Vaccines & Immunotherapeutics»-ում հրապարակված ուսումնասիրությունը որևէ էական կապ չէր գտել գարդասիլի պատվաստման և ցրված սկլերոզի միջև»։

* * * * *

Դեղին սկզբնաղբյուրները նաև ակտիվ դերակատարություն ունեն կորոնավիրուսի ներկայիս համաճարակի

պայմաններում տարբեր առասպելների ու դավադրական տեսությունների տարածման գործում: Օրինակ հետևյալ նյութը իր էջում է տեղադրել shamshyan.com-ը.

> Թենիսի աշխարհի նախկին առաջին ռակետ Մարատ Սաֆինը կորոնավիրուսի համաճարակը համարել է համաշխարհային ստվերային կառավարության դավադրություն, որը թույլ կտա մարդկանց չիպավորել:
>
> «Կարծում եմ, մարդկանց պատրաստվում են չիպավորել: Դեռ 2015-ին Բիլ Գեյթսը ասել էր, որ մեր մոտ պանդեմիա է լինելու, հաջորդ թշնամին՝ վիրուսն է, այլ ոչ թե՝ միջուկային պատերազմը: Նրանք Դավոսի համաժողովում ցուցադրել էին, թե ինչպես է ամեն ինչ լինելու:
>
> Չեմ կարծում, որ Բիլ Գեյթսը նման կանխագուշակ է. նա պարզապես գիտեր: Բայց ես կարծում եմ, որ կան ավելի հզոր տղաներ, քան՝ համաշխարհային առաջնորդներն են, որոնք աշխարհի, փողերի իրական տիրակալներն են: Նրանց կարելի է համարել ստվերային կառավարություն, ոնց ասեք: Կարծում եմ, մենք նույնիսկ չենք կռահում, որ նրանք գոյություն ունեն: Ռոտշիլդներն ու Ռոկֆելներները՝ դրանք տիրաժավորված անուններ են, իսկ նրանց ետևում ինչ-որ ուժեր են կանգնած», ասել է նախկին թենիսիստը:

Փաստն այն է, որ Բիլ Գեյթսի «<համաշխարհային դավադրության» մասին ֆեյք լուրերն ու տեսայութերը տարածվել են այն բանից հետո, երբ նա քննադատել է ԱՄՆ իշխանություններին՝ ժամանակավորապես Առողջապահության համաշխարհային կազմակերպության (ԱՀԿ) ֆինանսավորումը դադարեցնելու վերաբերյալ:

2.4 ՍԿԶԲՆԱՂԲՅՈՒՐ ՈՒՆԵՆԱԼՈՒ ՁԵՎԱՅՈՒՄ (ԻՄԻՏԱՑԻԱ)

Հաճախ տարբեր տեքստերում կարելի է հանդիպել արտահայտությունների, որոնք վստահեցնում են սկզբնաղբյուր-

ներ ունենալու մասին, բայց դրանք չեն բացահայտվում: Օրինակ՝ «մեր աղբյուրներով», «մեր տեղեկություններով» և այլն: Նման դեպքերում շահարկուներն օգտվում են «ԶԼՄ մասին» ՀՀ օրենքի (2003թ.) ընձեռած հնարավորությունից, որը պաշտպանում է տեղեկության աղբյուրը չնշելու իրավունքը՝ բացառությամբ դատարանի որոշման արդյունքում ներկայացված պահանջի.

Զանգվածային լրատվության մասին ՀՀ օրենք, հոդված 5, մաս 2

Տեղեկատվության աղբյուրի բացահայտումը լրատվական գործունեություն իրականացնողին, ինչպես նաև լրագրողին կարող է պարտադրվել դատարանի որոշմամբ՝ քրեական գործի առիթով՝ ծանր կամ առանձնապես ծանր հանցագործության բացահայտման նպատակով, եթե հասարակության շահերի քրեաիրավական պաշտպանության անհրաժեշտությունն ավելի ծանրակշիռ է, քան տեղեկատվության աղբյուրը չբացահայտելու հասարակության շահագրգռվածությունը, և սպառված են հասարակական շահերի պաշտպանության մնացած բոլոր միջոցները:

* * * * *

Անդրադառնալով 2019թ. նոյեմբերի 4-ին սոցիալական ցանցում մեծ աղմուկ բարձրացրած «Հուզանք ու զանգ» ներկայացմանը, ֆեյսբուքյան օգտատեր Նարեկ Մալյանը նշել է, որ *իրենց տեղեկություններով*՝ ԲՀՀ գրասենյակը նույնպես ֆինանսավորել է այն:

«Փաստերի ստուգման հարթակը», կապ հաստատելով ԲՀՀ գրասենյակի հետ, պարզել է, որ այդ հայտարարությունը անհիմն է: «Միանշանակ սուտ է, ոչ մի լումա դուրս չի գրվել «Հուզանգ ու զանգ» ներկայացման համար, անգամ այդպիսի պահանջ կամ խնդրանք չի եղել: Մեզ չեն էլ դիմել»,

- հայտնել է Հիմնադրամի հայաստանյան գրասենյակի ղեկավար Լ. Մինասյանը: Իսկ իրողությունն այն է, որ ներկայացումն իրականացվել էր Կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության տրամադրած դրամաշնորհով: Համաձայն կնքված պայմանագրի՝ նախարարությունը շուրջ 2 միլիոն 700 հազար դրամ էր տրամադրել ներկայացման համար:

* * * * *

«168 ժամ» թերթը 2019թ հուլիսի 3-ին նյութ է հրապարակում, որտեղ պնդում է արվում, որ Աշխատանքի և սոցիալական հարցերի նախարար Զարուհի Բաթոյանը նախարարությունում կառուցվածքային փոփոխություններ է նախատեսել և «գաղտագողի խցկել է ՀՀ-ում երրորդ սեռի հիմնահարցերով զբաղվող վարչություն»: Թերթը նաև պնդում է, որ վարչությունը զբաղվելու է նույնասեռական մարդկանց իրավունքների պաշտպանությամբ: Նյութի վերջում ասվում է.

> Նախարարության *մեր աղբյուրները* նշում են, որ Սոցապնախարարությունը, փաստորեն, գաղտագողի պատրաստվում է ԱԺ աշնանային նստաշրջանին քննարկվելիք Ստամբուլյան կոնվենցիայի հաղթանակին: Փորձեցինք նախարարության լրատվական ծառայությունից մեր տեղեկությունները հաստատող կամ հերքող պարզաբանում ստանալ և մանրամասներ ճշտել, հատկապես, թե ինչու են կառուցվածքային այդ փոփոխությունները թաքուն կերպով անում, սակայն մեր հեռախոսազանգերն անպատասխան մնացին:

Համաձայն «Փաստերի ստուգման հարթակի»՝ ինչպես Աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարությունը, այնպես էլ տարեվերջյան ասուլիսին՝ նախարար Բաթոյա-

նը հերքում են այդ լուրը՝ այն անվանելով «բացարձակ սուտ»:

* * * * *

14.01.2020թ. «Politik.am»-ի հոդվածագիրը անդրադառնալով շվեյցարական «Berner Zeitung» («Բեռներ Ցայտունգ») թերթում Հայաստանը գովերգող հոդվածին, հայտարարում է, որ այն փողով պատվիրված հոդված է և ավելացնում հետևյալը.

> *Մեր աղբյուրների փոխանցմամբ*, կառավարությանը գովաբանող հոդվածի դեպքում պատվիրատուն օգտվել է նաև հավելյալ ծառայություններից: Հոդվածի հեղինակը հայտնի լրագրող FRANK NIENHUYSEN է, ով գրում է քաղաքական և տնտեսական թեմաներով: Եթե հաշվի առնենք նաև այս հանգամանքը, ապա կառավարությանը գովաբանող հոդվածը պատվիրատուի վրա նստել է ավելի քան 6 մլն 900 հազար դրամ:

Այս տեղեկությունը հերքել են ինչպես վարչապետի աշխատակազմի «Հանրային կապերի և տեղեկատվության կենտրոն»ը, այնպես էլ ՊՈԱԿ-ի «Տեղեկատվության ստուգման կենտրոնը» (infocheck.am): Վերջինիս հրապարակային հերքման մեջ ասվում է, որ կառավարությունը գումար չի հատկացրել և, որ թերթը ևս հերքում է դա: «Հայտնում ենք, որ հոդվածը չի կրում որևէ կոմերցիոն բնույթ և գրվել է առանց որևէ պատվերի», հայտնել են թերթի խմբագրությունից: Այս տեղեկությունը հերքել է նաև «Berner Zeitung»-ում հրապարակված հոդվածի հեղինակ Ֆրանկ Նինհույսենը (Frank Nienhuysen):

ՍԵՎԵՌՄԱՆ ԿԵՏԵՐ

- Համոզվեք, որ տեքստում առկա է սկզբնաղբյուրի հղում: Ցանկալի է, որ սկզբնաղբյուրի հղումը ուղեկցվի դրանից վերցված ուղղակի մեջբերումով:
- Հնարավորության դեպքում ստուգեք սկզբնաղբյուրի իսկությունը: Ճշտեք՝ արդյո՞ք սկզբնաղբյուրում առկա են հայտարարված փաստերին վերաբերող հաղորդումներ:
- Համոզվեք, որ սկզբնաղբյուրը վստահելի հեղինակություն ունի:
- Փորձեք գտնել նույն փաստին վերաբերող այլ սկզբնաղբյուրներ և համեմատեք զետեղված տեղեկության բովանդակությունը:
- Վերապահությամբ մոտեցեք «մեր տեղեկություններով», «մեր աղբյուրների համաձայն» և նման արտահայտություն-ներով ուղեկցվող հրապարակումներին ու գրառումներին: Հատկապես, եթե դրանք չեն ամրապնդված սկզբնաղբյուրների վերաբերյալ կոնկրետ տեղեկություններով (անուններ, հասցեներ և այլն):

3 Հասկացություններին առնչվող շահարկումներ

Հասկացությունը մտքի տարրական ձև է, որն արտացոլում է առարկան (առարկայացված իրողությունը) իր էական հատկություններով: Վարը ներկայացվող շահարկման հնարքներում խոսքն ըստ էության առանցքային հասկացությունների հետ կապված շահարկումների մասին է: Առանցքային հասկացություններ են հանդիսանում այնպիսիք, որոնց օգնությամբ կազմակերպվում է տեքստի բուն ուղերձը և պատումը: Այսինքն դրանք ծառայում են որոշակի երևույթները, համակարգերը մեկնաբանելուն և գնահատելուն: Կախված համատեքստից հասկացությունները կարող են մեկնաբանվել տարբեր կերպ: Այդ պատճառով անհրաժեշտություն է առաջանում, որ հեղինակները բացատրեն, թե ինչ են հասկանում այն հասկացությունների տակ, որոնք պատրաստվում են օգտագործել իրենց ուղերձներում:

Հասկացությունների հետ կապված շահարկման հնարքները սովորաբար երեքն են.

1. Հասկացության կիրառում առանց այն սահմանելու
2. Հասկացության աղճատում կամ փոխարինում մեկ այլ՝ կամայական սահմանումով
3. Հասկացության իմաստի սահմանափակում

3.1 ՀԱՍԿԱՑՈՒԹՅԱՆ ԿԻՐԱՌՈՒՄ ԱՌԱՆՑ ԱՅՆ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ

Այս հնարքը որոշ հեղինակներ անվանում են «հասկացության նենգափոխում»: Տ. Լանինայի կարծիքով, հնարքը տեղ ունի այն ժամանակ, երբ հայտնի հասկացությունը մեկ շարքի մեջ է դրվում պոզիտիվ կամ նեգատիվ հասկացությունների հետ, ինչը նպաստում է հասկացության նախնական իմաստը վերջիններիս իմաստներով փոխարինելուն: Ներքոբերյալ օրինակում «ժամանակակից» հասկացությունը կիրառվում է այդ նպատակով:

> 27.10.2018թ. Ֆեյսբուքում տարածած իր գովազդային նյութում Լիդիան Արմենիան օգտագործում է *ժամանակակից հանքարդյունաբերություն* հասկացությունը. «Գիտական փաստ է, որ ժամանակակից հանքարդյունաբերությունը չի վտանգում առողջությունը: Դրա օրինակները բազմաթիվ են՝ Կանադայից Շվեդիա, Իսպանիայից Չեխիա»:

Մ. Բաղդասարյանը անդրադառնալով Լիդիան Արմենիայի վերոհիշյալ տեքստին հարցնում է. «..արդյո՞ք կան «ժամանակակից հանքարդյունաբերության» համընդհանուր չափանիշներ, որոնք նույնն են բոլոր երկրներում, արդյո՞ք այդ տերմինը բացառում է որոշակի ռիսկային հանքարդյունաբերական մեթոդներ, արդյո՞ք այն ենթադրում է տարբեր երկրների պետական մարմինների կողմից կիրառվող միանման խիստ չափանիշներ և փորձաքննություն, և արդյո՞ք այս տերմինը վերաբերում է միայն մի քանի երկրի, այլ ոչ թե ցանկացած «ժամանակակից հանքարդյունաբերությանը»: Օրինակ, պնդու՞մ է արդյոք Լիդիանը, որ Ամուլսարում նախատեսվող՝ ցիանիդի միջոցով ոսկու կորզումը պատկանում է «ժամանակակից հանքարդյունաբերության» մեթոդներին: Եթե այո, ապա ինչու՞ է այդ մեթոդն ամ-

բողջությամբ կամ մասնակի արգելված բազմաթիվ երկրներում, այդ թվում՝ ԱՄՆ որոշ նահանգներում, Գերմանիայում և Չեխիայում (որը նույնպես Լիդիանի կողմից վկայակոչվում էր որպես «ժամանակակից հանքարդյունաբերության» դրական օրինակ)»: Այդուհետ, արևմտյան տարբեր երկրներում ժամանակակից հանքարդյունաբերության վերաբերյալ տարբեր ու հակասական օրինակներ քննարկելուց հետո Մ. Բաղդասարյանը ամփոփում է. «Այսինքն կարելի է ենթադրել, որ Լիդիանը խուսափում է բացատրել ժամանակակիցը, որովհետև այն միանշանակ բան չէ: Սակայն ժամանակակիցը պոզիտիվ ազդեցություն ունեցող տերմին է, որի օգտագործմանը շահարկողները հաճախ են դիմում՝ իրենց համեստ ձեռքբերումները ուռճացնելու կամ մոլորության հասցնելու համար»:

* * * * *

Քահանա Սերոբ Ազարյանը 19.04.2019 իր ֆեսյբուքյան գրառման մեջ անդրադառնալով Աժ-ում տրանսգենդերի ելույթին, քանիցս օգտագործում է «բարոյական» հասկացությունը, բայց այն չի բացատրում: Ավելին, այն հակադրրում է ֆիզիկական իմաստին: Օրինակ, թվարկելով տարբեր զբաղմունքներ ու խնդիրներ ունեցող մարդկանց, նա եզրակացնում է, որ նշված կատեգորիաների մարդիկ մարդ են միայն ֆիզիկական իմաստով, իսկ բարոյական իմաստով՝ ոչ: Ահա մի հատված այդ գրառումից.

> «Ի հարկէ մարդ էին ֆիզիքական իմաստով, բայց բարոյակա՛նը, մանաւա՛նդ ԲԱՐՈՅԱԿԱՆԸ մարդու անգնահատելի, անբաժանելի մի մասը պէտք է լինի կեանքում, որպէսզի իրաւամբ ՄԱՐԴ կոչուի»:

Անդրադառնալով այդ գրառմանը Մ. Դեմիրճյանը պարզաբանում է. «Սա անորոշ հասկացություններով կամ էմո-

ցիոնալ երանգավորում ունեցող հասկացություններով հայտնի մանիպուլյացիա է: Խնդիրն այն է, որ մարդու ֆիզիկական գոյությունը հստակ է, կոնկրետ և կախված չէ դիտարկողի ճաշակից, գաղափարական կամ մշակութային համակարգից: Մինչդեռ մարդու բարոյական չափումն անորոշ է՝ կախված գաղափարական, մշակութային, կրոնական և այլ համակարգերից: Սա նշանակում է, որ բարոյականությունը չունի մեկ՝ բոլորի համար պարտադիր իմաստ և նշանակություն: Այդ պնդմամբ՝ Տեր Սերոբ քահանա Ազարյանն իր պատկերացրած բարոյականության մոդելում մերժում է իր կողմից նշված բոլոր կատեգորիաների մարդկանց բարոյական լինելը: Ընդորում, խոսքը նաև հոգեկան խնդիրներ կամ վարակիչ հիվանդություններ ունեցող, կամ փողոցում աղբ թափող մարդկանց մասին է: Ակնհայտ է, որ սա հակամարդասիրական պնդում է, քանի որ մարդիկ, որոնք ունեն բժշկական օգնության կարիք, հոգևորականի կողմից հավասարեցվում են պոռնոգրաֆիկ նյութեր տարածողներին կամ կաշառակերներին»:

3.2 ՀԱՄԿԱՑՈՒԹՅԱՆ ԱՂՃԱՏՈՒՄ ԿԱՄ ՓՈԽԱՐԻՆՈՒՄ ՄԵԿ ԱՅԼ՝ ԿԱՄԱՅԱԿԱՆ ՍԱՀՄԱՆՈՒՄՈՎ

Անցումային արդարադատության և վեթինգի հարցերին առնչվող մի հարցազրույցում Արդարադատության նախկին նախարարներից՝ Դ. Հարությունյանը ասում է հետևյալը.

> «Միևնույն է, պետք է հասկանալ, իսկ ինչի՞ համար է արվում այդ վեթինգը: Արդյո՞ք վեթինգը այն *լավագույն գործիքն* է, որը բուժելու է երկրի, համակարգի այս կամ այն թերությունը» (տես 4:10-ից):

Վերլուծաբան Մ. Դեմիրճյանը սրա կապակցությամբ նկատում է. «Այստեղ գործ ունենք «հասկացության նենգափոխում» մանիպուլյատիվ հնարքի հետ, որի նպատակն է հանրային գիտակցության մեջ շփոթություն առաջացնել տվյալ դեպքում «անհրաժեշտ գործիք», «արդյունավետ գործիք», փորձված գործիք» և «լավագույն գործիք» հասկացությունների միջև: Անկիայտ է, որ սոցիալական որևէ ոլորտում փոփոխություններ իրականացնելու համար ընտրված մեթոդը (գործիքը) կարող է լինել «անհրաժեշտ», բայց «ոչ լավագույն», կամ «ժամանակակից», բայց «ոչ արդյունավետ» և այլն: Ավելին՝ ՀՀ վարչապետի նշված ելույթում այս հարցին նույնպես անդրադարձ արվել էր. «Հիմա արդեն անցումային արդարադատության մեխանիզմների ներդրումը կենսական անհրաժեշտություն է Հայաստանի Հանրապետության համար»: Այսինքն, խոսքը վերաբերում էր վեթինգի՝ անհրաժեշտ, ոչ թե լավագույն գործիք լինելուն»:

* * * * *

22.01.2019թ. Երկրապահ կամավորների միության նախկին նախագահ Մ. Գրիգորյանի պաշտպան Արսեն Մկրտչյանը, դժգոհություն արտահայտելով իր պաշտպանյալի դատավարության ընթացքի մասին, ֆեյսբուքյան իր էջում գրել է.

> «Հարգելի լրագրողներ խնդրում եմ՝ չզանգել՝ օրենքի, իրավաբանության, տրամաբանության հետ կապ չունեցող և ճնշումների տակ կայացրած *հակահայկական դատական ակտերն* առայժմ չեմ մեկնաբանում»:

Տ. Ղազարյանը անդրադառնալով այդ գրառմանը, նկատում է. «…Մանվել Գրիգորյանի փաստաբան Արսեն Մկրտչյանի կողմից դատական ակտը «հակահայկական» ներկայացնելը մանիպուլյատիվ հնարք է՝ ուղղված Մանվել Գրիգորյանի նկատմամբ քրեական հետապնդումը «հերո-

սի», «հայության», «հայկականության» նկատմամբ հետապնդում որակելուն»: Այդուհետ, Տ. Ղազարյանը ՀՀ Սահմանադրությունից և ՀՀ դատական օրենսգրքից մի քանի հոդվածներ հղելով, հետևեցնում է. «դատավորի միակ պարտականությունն է՝ քննել գործը և կայացնել վճիռ՝ օրենքի, այլ ոչ՝ «հայկական», «ազգային», «բարոյական», «բարի», «հայանպաստ» և նմանատիպ այլ հասկացությունների շրջանակներում:

Օրենսդրական այս պահանջներին հասու լինելով, և իմանալով, որ օրենքին, իրավաբանությանը, տրամաբանությանը հակասող որոշումը կարելի է որակել որպես «հակաօրինական», «հակաիրավական», «հակատրամաբանական», բայց ոչ՝ «հակահայկական», փաստաբան Արսեն Մկրտչյանը, այնուամենայնիվ, «հայկականություն» ածականը շաղկապում է հիշյալ հասկացություններին՝ ելնելով մանիպուլյատիվ որոշ նպատակներից»:

3.3 ՀԱՍԿԱՑՈՒԹՅԱՆ ԻՄԱՍՏԻ ՍԱՀՄԱՆԱՓԱԿՈՒՄ

14.03.2019թ. ֆեյսբուքյան մի շարք օգտատերեր արձագանքելով Օպերայի տարածքը ապօրինի շինություններից ազատագրելու՝ Երևանի քաղաքապետարանի միջոցառումներին, դրանք մեկնաբանեցին իբրև ադրբեջանցիների նկատմամբ իրականացվող գործողություններ.

Հարություն Հարությունյանը (TV5-ի գլխավոր խմբագիր) իր ֆեյսբուքյան էջում գրեց. «Կրիտերիաներն են փոխվել, տղերքը *ազատագրում* էին Արցախը, սրանք՝ օպերայի շրջակայքը: #գոնե բառերը ընտրելուց զգույշ եղեք: Ումի՞ց եք *ազատագրում*: Մարդ կա երազում է հզոր Հայաստան, ազատ ու միացյալ Հայաստան, ուժեղ երկիր, մարդ էլ կա երազել ա ազատագրի օպերայի շրջակայքը»: Իսկ մեկ այլ

օգտատեր՝ Արգիշտի Կիվիրյանը (Armenia Today լրատվական-վերլուծական գործակալության համակարգող), գրեց. «Շուշի ու Աղդամ *ազատագրողները* այդքան չեն հպարտացել իրենց արածով, ոնց որ սրանք Օպերայի հայաթում մի քանի պալատկա քանդելով ու դրա անունը Օպերայի ազատագրում դնելով»: Մոտավորապես նույն կարծիքն արտահայտեց նաև Օպերայի տարածքում գտնվող սրճարաններից մեկի՝ «Շոկոլադնիցայի» մենեջեր Լաերտ Պողոսյանը՝ ասելով, թե. «Մարդիկ *ազատագրում* են Շուշին ոչ թե Օպերան: Էստեղ թուրք չկա: Ազգին պետք չի ըտենց վիրավորել» (Տես՝ 4.20 բոպեից):

Ն. Մարգարյանը անդրադառնալով այդ արձագանքներին, գրում է. «Ազատագրում» բառի գործառնական շրջանակը իրականում բավականին ընդարձակ է և վերաբերում է ցանկացած ֆիզիկական տարածքի ազատագրմանը: Ավելին, այն միայն ֆիզիկական կիրառություն չունի և վերաբերում է նաև տարբեր իրավունքներին (օրինակ՝ կանանց էմանսիպացիա), հոգեկան և ֆիզիոլոգիական կախվածությանը, որոշակի արատավոր սովորույթներից կախվածությանը և այլն: Անցած երեք տասնամյակներում «ազատագրում» բառը հայաստանյան պաշտոնական դիսկուրսում առավելապես օգտագործվել է Արցախի հիմնախնդրի հետ կապված: «Գուգլ» որոնողական համակարգում «ազատագրում» բառի որոնումը առաջին հերթին բերում է «Շուշիի ազատագրում», «Տողի ազատագրում», «Աղդամի ազատագրում» էջերը: Բառի չեզոք՝ բառարանային բացատրությունն իր այցելություններով հազիվ 4–րդ տեղում է: Ուստի՝ այդ հնարքը կիրառողները, նկատի ունենալով «ազատագրում» հասկացության նշանային նմանօրինակ ծանրաբեռնվածությունը, միտում ունեն լսարանի համար վերահաստատել հասկացության՝ թվացյալ նեղ նշանակությունը: Դիմելով նման հնարքի, շահարկողները «ազատագրելը» կիրառե-

լի են դարձնում միայն տարածքային խնդիրներ ունեցող պատերազմող երկրների հարաբերությունների համար:

Այդուհանդերձ, հայաստանյան հանրության որոշակի շրջանակներում «ազատագրում» բառն ընկալելի է նաև քաղաքային հանրային տարածքների ազատագրման խնդրի համատեքստում: Դեռևս 2013թ.-ից Ֆեյսբուքում ստեղծվել է «Ազատագրում» խումբը, որի էջում ծավալվել է նաև ապօրինի զավթված հանրային տարածքների ազատագրման, հանրությանը դրանք վերադարձնելու շուրջ քննարկումներ: (Իդեպ, հանրային տարածքների ազատագրման պայքարին նախկինում աջակցություն է ցուցաբերել նաև Օպերայի ազատագրումը հեգնող Ա. Կիվիրյանը): Քաղաքային տարածքների զավթման դեմ քաղաքացիական պայքարի տարբեր հատվածներում բազմաթիվ անգամներ հնչեցվել է «ազատագրում» բառը: Երևանի նորընտիր քաղաքապետ Հ. Մարությանը ևս ակտիվ մասնակցություն է ունեցել նման կարգի միջոցառումներին: Նրա՝ քննության առարկա դիմումը բխում է նաև Թավշյա հեղափոխության դիսկուրսից, որում հռչակվել է «Ժողովրդից գողացվածը ժողովրդին վերադարձնելու» թեզը: Հանրային բազմաթիվ տարածքներ, այդ թվում՝ Օպերայի շրջակայքի տարածքները, ըստ քաղաքային ադմինիստրացիայի՝ հիմնականում յուրացվել են անօրինական՝ զավթման գործողությունների հետևանքով: Դրա դրսևորումներն են՝ հատկացված տարածքների ապօրինի ընդարձակումը, անթույլատրելի շինությունների կառուցումը և տարածքների վարձակալության համար սահմանված վճարների անհամապատասխան չափերը (օրինակ՝ ամսական 90.000-դրամով վարձակալելը): Ի դեպ, «զավթել» բառը նույնպես ունի գործառնական լայն շրջա-

նակ և չի վերաբերում միայն միջպետական տարածքներին, ինչպես նաև միայն ֆիզիկական տարածքներին»:

ՍԵՎԵՌՄԱՆ ԿԵՏԵՐ

- Փորձեք պարզել, թե ձեզ առաջարկվող տեքստում օգտագործվող առանցքային հասկացությունները բացատրվում կամ սահմանվու՞մ են: Եթե սահմանվում են, ապա դրանք տվյալ հեղինակի՞, թե՞ այլ աղբյուրներից վերցված սահմանումներ են:
- Փորձեք պարզել, թե օգտագործվող հասկացությունը որքանո՞վ է կապված այն խնդրի կամ ոլորտի հետ, որի առնչությամբ, որ օգտագործվում է:
- Բառարաններում և այլ սկզբնաղբյուրներում փնտրեք օգտագործվող հասկացության այլ նշանակություններն ու դրանց համատեքստերը:

4 Շահարկումներ համեմատությունների օգնությամբ

Համեմատությունը երկու կամ ավելի օբյեկտների տարբեր հատկությունների քանակական և որակական համադրումն է, որպեսզի իցույց դրվի դրանցից մեկի առավելությունը կամ հաստատվի այդ օբյեկտների նմանությունները կամ հավասարազորությունը։

Շահարկող տեքստերում համեմատության օգնությամբ շահարկելու հնարքների մեջ առավել հաճախ հանդիպում են հետևյալները.

1. Անհամեմատելի երևույթների համեմատում
2. Տարբերությունների նույնացում
3. Տարբերությունների հակադրում

4.1 ԱՆՀԱՄԵՄԱՏԵԼԻ ԵՐԵՎՈՒՅԹՆԵՐԻ ՀԱՄԵՄԱՏՈՒՄ

06.06.2019թ., ընդդիմանալով վեթինգի անցկացմանը, ՍԴ նախագահ Հրայր Թովմասյանը tert.am-ին տված հարցազրույցում նկատում է.

> «Տեսեք, *կայացած իրավական, ժողովրդավարական պետություններում*, որտեղ իշխանափոխությունը սովորական երևույթ է, որևէ մեկի մտքով չի անցնում քաղաքական իշխանության գալուն պես փոխել ողջ դատական համակարգը: Դուք պատկերացնու՞մ եք՝ այդ դեպքում ինչ կկատարվեր»:

Հ. Թովմասյանը դիմում է շահարկման, քանի որ իր մոտեցումը հաստատելու համար իբրև համեմատության օրինակ է բերում անհամեմատելին. կայացած իրավական, ժողովրդավարական պետությունը համեմատում է չկայա-

ցած իրավական, ժողովրդավարական պետության հետ։ Բանն այն է, որ ՀՀ նախորդ իշխանական ռեժիմները չեն կարող կայացած իրավական, ժողովրդավարական ու իրավական համարվել, որովհետև ընտրվել և վերարտադրվել են բոլոր մակարդակի համապետական ընտրությունները կեղծելու ճանապարհով, ինչը հնարավոր է դարձել դատական հաստատությունների գործուն աջակցությամբ։ Հետևաբար հենց ժողովրդավարության կայացման համար են անհրաժեշտ վեթինգն ու դատահիրավական բարեփոխումները։ Չնայած, Թավշյա հեղափոխության շնորհիվ և ժողովրդավարական ընտրությունների միջոցով Հայաստանում այսօր ձևավորվել են գործադիր և օրենսդիր իշխանական մարմիններ, դատական մարմինները տակավին նախորդ՝ ավտորիտար ռեժիմի պայմաններում ձևավորված մարմիններն են և գործում են նախկին իներցիայով։

* * * * *

Բարձրագույն ուսումնական հաստատություններում Հայոց լեզու, Հայ գրականություն և Հայոց պատմություն առարկաների դասավանդմանը վերաբերող «Բարձրագույն կրթության և գիտության» մասին ՀՀ օրենքում նախատեսվող փոփոխությանը արձագանքելով՝ բանասեր, դոցենտ Սերժ Սրապիոնյանն նկատում է.

> «Անգամ Թուրքիայում, ճիշտ է, հայկական թերթեր ու դպրոցներ են փակվել, բայց հայոց լեզուն պարտադիր առարկա է եղել բոլոր հայկական դպրոցներում»։

Ինչպես կարելի է տեսնել. Ս. Սրապիոնյանը ոչ թե մի երկրի բուհը, այլ դպրոցն է համեմատում մեկ այլ երկրի բուհի հետ։ Սրանք, ճիշտ է, երկուսն էլ կրթական հաստատություններ են, բայց առաքելությունները տարբեր են։ Դպրոցը քաղաքացի է կրթում և դաստիարակում, իսկ բուհը մասնագետ է պատրաս-

տում: Նշանակում է լեզվի ընդհանուր հիմունքների դասավանդումը և դրա կարևորումը այդ երկու տարբեր տիպի կրթական հաստատություններում չի կարող նույն կերպ հիմնավորվել:

4.2 ՏԱՐԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՆՈՒՅՆԱՑՈՒՄ

09.09.2019թ. «168 ժամ» կայքում հրապարակված մենախոսության մեջ Մ. Մինասյանը ասում է.

> «Այս իշխանությունը հին է, այս իշխանությունը հնի շարունակությունն է: Այս իշխանությունը ոչնչով չի տարբերվում այն հնից, որի դեմ պայքարել է, որովհետև այս իշխանությունը ոչինչ չփոխեց, այս իշխանությունը փոխեց հնի երեսը: Սա՞ էր հեղափոխությունը, հնին վերադարձ չկա»:

Ա. Թադևոսյանը վերլուծելով Միքայել Մինասյանի խոսքերը, գրում է. «Այստեղ նկատելի են հնի ու նորի նույնացման, ոչ համարժեք երևույթների միջև տարբերությունը չեզոքացնելու՝ «ոչինչ չի փոխվել», «իշխանությունը չի ուզում վերցնել պատասխանատվություն» և այլ մանիպուլյատիվ պնդումներ: Դրանցից վերջին երկուսն արվում են պարզապես հայտարարության ձևով՝ առանց փաստարկված հիմնավորումների: Պարզապես, փորձ է արվում դա հիմնավորել հնի ու նորի նույնացման մանիպուլյացիայի հետ կապերի ստեղծման միջոցով: Հռետորաբանության մեջ փորձված մանիպուլյատիվ հնարքներից մեկը ոչ համարժեք և նույնիսկ հակասող երևույթները մեկ շարքի մեջ դասելու և այդ ձևով դրանք նույնականացնելու փորձն է: Այս հնարքը տեսնում ենք հարցազրույցում՝ հներին ու նորերին իրար կողք, մի շարքի մեջ դնելու դրվագներում»:

* * * * *

24.07.2019թ. «Առավոտ» թերթն իր խմբագրականում անդրադառնալով փողոցներ փակելու խնդրին՝ գրում է.

> Որոշակի քաղաքական ուղղվածություն ունեցող մարդիկ վստահ են, որ մինչեւ 2018 թվականի մայիսը ոստիկանների պահանջները չէին կատարում, նրանց հետ բախվում էին, միջպետական ճանապահներ էին փակում հպարտ քաղաքացիները, ռեժիմի դեմ պայքարողները, եւ եթե նրանք բերման էին ենթարկվում կամ ազատազրկվում էին, ապա նրանց անհրաժեշտ էր քաղբանտարկյալ ճանաչել: Նույն ուղղության ներկայացուցիչները համոզված են, որ, օրինակ, Իջևանում մարդիկ խախտում էին օրենքը, զանգվածային անկարգությունների էին դիմում, կատարում էին ՀՀԿ-ականների և «փայտի մաֆիոզիների» պատվերը, և իշխանությունը շատ էլ ճիշտ է վարվել, որ կոշտ միջոցներ է կիրառել նրանց դեմ: Բայց այդպես չի լինում. Կամ երկու դեպքերում իշխանությունները ճիշտ էին, կամ երկու դեպքերում էլ՝ սխալ:

Իրականում այդ երկու դրսևորումներ ունեն բազային տարբերություններ: Իշխանական ռեժիմի դեմ պայքարող և միջպետական ճանապարհ փակող քաղաքացիները կիրառում էին պայքարի ոչ բռնի մեթոդներ և պայքարում էին հանուն հանրային շահի: Իջևանում փողոց փակելով սպառնացողները դիմում են բռնությունների /ոստիկաններ են ծեծում/ և հետապնդում են անձնական շահը: Ա. Թադևոսյանի կարծիքով. «փողոց փակելու» բոլոր դեպքերը նույնականացնելը և դրանցում եղած առանցքային տարբերության (ցուցարարների կողմից բռնի ուժի գործադրման) անտեսումը տեղին չէ: Ավելին, դա ունի մանիպուլյատիվ բնույթ, քանի որ փորձ է արվում համեմատել երկու ոչ համարժեք երևույթ՝ նախապես դրանց միջև եղած առանցքային տարբերությունն անտեսելով կամ քողարկելով»:

* * * * *

2019թ. հուլիսին համանցանցում և ֆեյսբուք սոցիալական ցանցում բուռն քննարկումների առիթ տվեց Վարդավառի ծեսի անցկացման ժամանակ Երևանի Բաղրամյան պողոտայում գորգերի լվացման միջոցառումը: ՀՀ ԱԺ պատգամավոր Հռիփսիմե Գրիգորյանը, անդրադառնալով Վարդավառի միջոցառմանը՝ հայկական գորգի բաղադրիչ ավելացնելու պատճառներին, ասում է հետևյալը.

> Վարդավառը մեր ամենաժողովրդական տոներից է, որը նշվում է դարեր ի վեր ինչպես Հայաստանում և Արցախում, այնպես էլ Սփյուռքի գաղթօջախներում: Գորգագործությունը ևս կենդանի մշակույթ է, քանի որ այսօր էլ այն զարգանում և կատարելագործվում է և մեծ կարիք ունի հանրահռչակման: Պայծառակերպության, ինչպես և հայտնության խորհուրդը, որն ունի Վարդավառը, որոշեցինք *համադրել* նաև հայկական գորգերն առավել ճանաչելի դարձնելու գաղափարին»: Հ. Գրիգորյանի խոսքով՝ միջոցառման հեռահար նպատակներից է օրակարգային դարձնել Հայաստանում հայկական գորգի ժամանակակից, ինտերակտիվ թանգարան ունենալու հարցը, ինչը հնարավորություն կտա հայոց հարուստ մշակույթի այս մասնիկն ըստ արժանվույն ներկայացնելու աշխարհին:

Եթե Վարդավառը դարեր իվեր նշվող ծես է, ապա գորգերի լվացումը՝ ոչ: Վարդավառի ծեսի քրիստոնեական և ժողովրդական կազմակերպումը, իտարբերություն գորգերի լվացման միջոցառման, գովազդման և հանրահռչակման /ճանաչման/ նպատակ չեն հետապնդում: Բացի այդ, ազգագրական աղբյուրներում բացակայում են Վարդավառի ծեսի ժամանակ գորգերի լվացման մասին հաղորդումները: Հետևապես գորգերի լվացումը համադրելի չէ Վարդավառի ծեսի հետ:

4.3 ՏԱՐԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԱԿԱԴՐՈՒՄ

Այս ենթախմբում ներկայացված շահարկման հնարքներում երկու տարբեր, բայց ոչ հակադրելի երևույթներ արհեստականորեն հակադրվում են միմյանց։ Օրինակ, փոքրամասնության իրավունքները հակադրվում են մեծամասնության իրավունքներին։ Կամ՝ երեխաների իրավունքները՝ չափահասների իրավունքներին և այլն։ Սա նույնքան անհեթեթ է, որքան տարբեր մասնագիտությունները (օրինակ պատմագիտությունն ու լեզվաբանությունը) իրար հակադրելը։ Դրանք ըստ էության նույն համակարգի փոխկապակցված բաղադրիչներ են. պատմագիտությունն ու լեզվաբանությունը՝ գիտական համակարգի, իսկ փոքրամասնության և մեծամասնության իրավունքները՝ իրավական համակարգի։ Այնուամենայնիվ, այդ հանգամանքը ոչ միշտ է, որ հաշվի առնվում։ Օրինակ.

07.04.2019թ. արձագանքելով Ազգային ժողովում տրանսգենդեր համայնքի ներկայացուցչի ելույթին և ԼԳԲՏ համայնքի իրավունքներին, ԱԺ պատգամավոր Սոֆյա Հովսեփյանը ասում է հետևյալը։

> Սա շատ զգայուն թեմա է, եթե մենք նայենք մարդու իրավունքների տեսանկյունից, ապա ոչ մեկս իրավունք չունենք ոտնահարելու իր իրավունքները։ Բայց քանի որ հայ ժողովրդի համար սա շատ զգայուն թեմա է, ապա *պետք է հաշվի նստել բացարձակ մեծամասնության կարծիքի* հետ և որևէ կերպ չփորձել այլոց իրավունքները ոտնահարել։ Երբ որ նայում ենք ազգայինի տեսանկյունից, որևէ համաշխարհային կառույց մեր շահերի հետ հաշվի չի նստում։ Մենք պարտավոր ենք հաշվի նստել, հարգել մեր շահերը և յուրաքանչյուր հայ մարդու էմոցիոնալ բռնկումներին տեր լինել… ստիպված ենք յուրաքանչյուրս ընդունել բացարձակ մեծամասնության (դիրքորոշումը)… պաշտպանում եմ նաև այն մարդկանց իրավունքները, ովքեր էմոցիոնալ դաշտում բախումներ են ունենում... Եթե ավելի ուշադիր լինենք, իրենք էլ պրովոկացիոն քայլերով ամեն անգամ չեն

փորձի ցնցումներ առաջացնել երկրում: Յուրաքանչյուրս լուռ իրացնում ենք մեր իրավուքները, և իրենց էլ է տրված այդ հնարավորությունը... Տրամաբանական է, որ պետք է լինի զայրույթ, բողոքի ակցիաներ, որովհետև մեր ժողովրդի համար զգայուն թեմա է: Իրենք էլ պետք է հասկանան՝ իրենց քայլը անեն: Մենք դեմ ենք, որ որևէ ցնցումներ ամեն անգամ առաջանան երկրում: Պետք է զգոնությունը չկորցնելով՝ երկիրը ցնցումներից զերծ պահենք:

Գ. Մադոյանը Ս. Հովսեփյանի վերոհիշյալ մեկնաբանությունների մասին գրում է. «Կեղծ հակադրությունների ընտեղծում» հնարքի միջոցով Սոֆյա Հովսեփյանը արժեզրկում է մարդու իրավունքների ողջ հայեցակարգը: Խոսելով հասարակության տարբեր խմբերի՝ իբրև թե հակադրվող իրավունքների մասին, նա, մասնավորապես, նշում է. «Եթե մարդու իրավունքներ ենք պաշտպանում, այս մարդը նույնպես ունի իր իրավունքները, և արդյոք, այն մարդիկ, ովքեր ուղղակիորեն չեն կարողանում հաշվի նստել այս իրականության հետ, ապա իրենց իրավունքները ինչպե՞ս պետք է լինի»: Նա նաև նշում է. «Եթե առանձնացնում ենք ԼԳԲՏ համայնք, ապա խտրականություն ենք անում, այսօր այնքան են խոսում իրենց իրավունքներից, որ մնացածի իրավունքն են ոտնահարում: Ես ինքս իմ իրավունքները չեմ քննարկում, ուստի իրենք էլ պետք է չքննարկեն»: Սոֆյա Հովսեփյանը վերոնշյալ հնարքի միջոցով ցանկանում է ապացուցել, որ առանձին խմբերի իրավունքների մասին բարձրաձայնելը խախտում է այլոց, ենթադրաբար՝ ժողովրդի մեծամասնության իրավունքները: Մինչդեռ, բոլոր մարդիկ ունեն հավասար իրավունքներ. Ինչը նշանակում է, որ առանձին վերցրած՝ որևէ մարդու, կամ մարդկանց կոնկրետ խմբի իրավունքները հազիվ թե հակադրության մեջ լինեն այլոց իրավունքների հետ: Այլ բան է, իհարկե, եթե որևէ մեկի կամ թեկուզ ժողովրդի մեծամասնության

գործողությունների արդյունքում ոտնահարվեն որոշ մարդկանց իրավունքները: Սակայն, սեփական իրավունքների մասին բարձրաձայնումը չի կարող դիտարկվել որպես այդպիսի գործողություն: Հակառակ դեպքում՝ կիմաստազրկվի մարդու իրավունքների ողջ հայեցակարգը:

Գ. Մաղոյանը Ս. Հովսեփյանի հնչեցրած արտահայտություններում տարբեր բաները հակադրելու մեկ այլ դրսևորում էլ է արձանագրում. «Կեղծ հակադրությունների ստեղծման հնարքի մեկ այլ օրինակ է համաշխարհայինի և ազգայինի հակադրությունը: Մարդու իրավունքներին առնչվող՝ ՀՀ Սահմանադրությունից բխող ներհայաստանյան օրակարգը ներկայացվում է որպես օտարածին՝ «դրսից մեր վզին փաթաթվող»: Այսպես՝ Սոֆյա Հովսեփյանը նշում է. «Ես վստահ եմ, որ համաշխարհային տեսանկյունից նայելով՝ իհարկե, պետք էր հրավիրել, բայց երբ որ նայում ենք ազգայինի տեսանկյունից, որևէ համաշխարհային կառույց մեր շահերի հետ հաշվի չի նստում»: Սոֆյա Հովսեփյանն անուղղակի ակնարկում է, որ մենք պետք է պայքարենք այդ «համաշխարհային, արհեստածին» օրակարգի դեմ՝ անտեսելով, որ մարդու իրավունքները մեր ազգային քաղաքական համակարգի հիմքն են»:

* * * * *

14.03.2019թ. Օպերայի տարածքը ապօրինի կառույցներից ազատագրելու Երևանի ՏԻՄ-ի միջոցառումը բախվեց սրճարանների սեփականատերերի և որոշակի քաղաքական ուժերի դիմադրությանը, որոնց հակափաստարկներից մեկը գործազրկության դատապարտված քաղաքացիներին պաշտպանելն էր:

Անդրադառնալով այդ մտահոգություններին Ա Թադևոսյանը գրում է. «Մանիպուլյացիոն մեկ այլ հնարք էլ՝ սեփականատերերի և նրանց կողմնակիցների կողմից շրջանառվող՝ «կանաչ գոտիներ՝ ընդդեմ գործազրկության» բանաձևի հանրայնացում է: Դրանով գործազրկությունը հակադրվում է կանաչ գոտիների վերականգման՝ քաղաքապետարանի նախաձեռնությանը, և փորձ է արվում ստորադասել դրա հանրային կարևորությունը: Այստեղ իրականացվում է հանրայնորեն գերակա խնդիրը ածանցյալին հակադրելու և ըստ կարևորության դրանց տեղերը փոխելու մանիպուլյացիոն հնարքը: Այն իրավացիորեն ենթարկվեց հանրության տարբեր շրջանակների քննադատությանը: Հատկապես կարևորվեց հանրային կանաչ գոտիները բիզնես տարածքների վերածելու անթույլատրելիությունը, շեշտվեց, որ դա ժամանակին իրականացվել է ստվերային եղանակով՝ առանց հաշվի առնելու համայնքի բնակչության կարծիքը: Օրինակ՝ Երևանի ավագանու անդամ Գայանե Մելքոմյանը իր ֆեյսբուքյան էջում ցուցադրելով տարիներ առաջ Օպերայի բակում իրականացվող սրճարանների շինարարությունը՝ նշում է. «Լավ նայեք այս լուսանկարներին, որ նկարվել է մի քանի տարի առաջ: Ո՞վ է քանդում հանրայինը, կանաչ տարածքը, հուշարձանի պահպանության գոտին, որ սարքի սրճարան... Այս սրճարանների մեծամասնությունը ինքնակամ է կառուցվել, առանց թույլտվության: Մենք վերակառուցում ենք ապօրինաբար քանդված հանրայինը»: Ուշագրավ է նաև, որ գործազուրկների ճակատագրով «մտահոգված» «սեփականատերերը շատ ագրեսիվ ու թշնամական վարքագիծ դրսևորեցին «Ապերիտիվո» սրճարանի ներկայացուցչի հանդեպ, որը տեղում առաջարկում էր լուծել գործազրկության խնդիրը՝ իրենց և այլ սրճարանների կողմից պոտեն-

ցիալ գործազուրկներին աշխատանքի առաջարկ ներկայացնելու միջոցով: Սա ցույց է տալիս, որ իրականում, նրանց մտահոգությունը ոչ այնքան իրենց աշխատակիցների՝ գործազուրկ դառնալու հեռանկարն է, այլ տվյալ խնդրի շահարկումը»:

ՍԵՎԵՌՄԱՆ ԿԵՏԵՐ

- Ուշադրություն դարձրեք համեմատությունների հարթությանը: Դրանք պետք է համեմատվեն միևնույն հարթությունում:
- Համեմատվող երևույթները պետք է նման լինեն իրենց էական, առանցքային հատկանիշներով կամ տարբեր:
- Տարբերությունների նույնացումը հակառակ է տրամաբանության կանոններին: Եթե տեքստում առկա է նման փորձ, ուրեմն գործ ունեք շահարկման փաստի հետ:
- Արտաքնապես տարբեր ներկայացող երևույթները կարող են լինել մեկ ամբողջական համակարգի բաղադրիչները: Երբ փորձ է արվում դրանք հակադրել, հավանական է, որ հակադրողը փորձում է դրանցից մեկը ստորակարգել մյուսին:

5 Թեմայի հարթության փոփոխում

Հրապարակային մի շարք տեքստերում ու գրառումներում հանդիպում են թեմայի գծից, դրանում արծարծվող խնդիրներից շեղումներ։ Այդպիսի դեպքերը երբեմն պատահական չեն և հետապնդում են կոնկրետ նպատակներ։ Ինչպես օրինակ անցանկալի փաստերից լսարանի ուշադրությունը շեղելը և թեման ցանկալի ուղղությամբ տանելը, ինչ-որ կարևոր բան թաքցնելը, թեման փակուղի մտցնելը կամ որևէ մեկին վարկաբեկելը։ Հայալեզու տեքստերում հանդիպում են «թեմայի հարթության փոփոխման» հնարքի հետևյալ տեսակները.

1. Քննարկվող խնդրի ընդհանրացում
2. Հարթության ամբողջական կամ արմատական փոփոխում
3. Արժանիքների վկայակոչում

5.1 ՔՆՆԱՐԿՎՈՂ ԽՆԴՐԻ ԸՆԴՀԱՆՐԱՑՈՒՄ

Այս ենթահնարքը կարող է կիրառվել ինչպես հարցից խուսափելու, այնպես էլ բոլորին վարկաբեկելու նպատակով։ Երկու դեպքում էլ քննվող խնդրին հստակ պատասխան չի տրվում։

06.06.2019թ. tert.am կայքին տված հարցազրույցում լրագրողի հնչեցրած հետևյալ հարցին. թե՝ «Ինչպե՞ս վարվել այն դատավորների հետ, որոնք նախորդ իշխանություն-

ներին ծառայություններ են մատուցել», Հ. Թովմասյանը պատասխանում է.

> «*Բոլորին նույն կաթսան գցելու* փորձը վտանգավոր է: Կարծում եմ՝ վտանգավոր է նաև մի ողջ համակարգ անվանել նախորդ իշխանությունների մնացորդ, այդ դեպքում, նույն հաջողությամբ նախորդ իշխանության մնացորդ կարելի է անվանել ոստիկանությանը, դատախազությանը, քրեակատարողական ծառայությանը, դիվանագիտական կորպուսը, քննչական մարմիններին և այլն. դա, կարծում եմ, սխալ է»:

Ակնհայտ է, որ լրագրողը հարցնում է ոչ թե բոլոր դատավորների, այլ միայն նրանց մասին, ովքեր ծառայություն են մատուցել նախորդ իշխանություններին: Սակայն, Հ. Թովմասյանը նախընտրում է ընդհանրական պատասխան տալ: Որովհետև ընդհանրացնելով նա՝ մի կողմից լրագրողի և ընթերցողի ուշադրությունը դատարաններից շեղում է այլ ոլորտների (ոստիկանություն, դատախազություն, քրեակատարողական ծառայություն, դիվանագիտական կորպուս, քննչական մարմիններ) վրա, մյուս կողմից փորձում է մոռացության տալ լրագրողի հարցում դատավորների կոնկրետ խմբի մասին հիշատակումը և վերջինիս հետ կապված խնդիրը:

* * * * *

19.11.2019թ. անդրադառնալով ծանրամարտիկ Մ. Դալուզյանի մասին ֆիլմ նկարելու պատրվակով համացանցում և սոցիալական ցանցերում սկիզբ առած բուռն քննարկումներին, օգտատեր Ն. Սամսոնյանը իր ֆեյսբուքյան էջում գրում է.

> Մարզաշխարհը մերժեց Նիկոլին ու Ջուլֆալակյանին
> Մարզաշխարհի շուրջ 30 ֆեդերացիաներ և հարյուրից ավել մարզիկներ հայտարարությամբ թարս կապուտ են արել Դալուզյանին իրենց

անձնական պաշտպանության տակ վերցնողներին ասելով՝ ՆԱ ՄԵԶԱՆԻՑ ՄԵԿԸ ՉԷ՛: Կարճ ասած մարզաշխարհն ասում ա տարեք ձեր սեռափոխվածին ձեր տներում պաշտպանեք: Իսկ թե Արսեն Զուլֆալակյանը խի իրան տենց վատ դրության մեջ դրեց էդ էլ թողնենք թող ինքը մտածի, բայց մեկա չեմ կարծում, որ մի հատ մանդատն էդ գինն արժե էլի:
Ապրի թասիբով ու սկզբունքային մարզաշխարհը!!!

Նախ մարզիկների վերոհիշյալ հայտարարությանը միացել են ոչ թե 30, այլ 28 ֆեդերացիաներ: Բայցի այդ, 28 ֆեդերացիաները և 116 մարզիկները ՀՀ ամբողջ մարզաշխարհը չեն: ԿԳՄՄՆ-ի ցանկում հաշվառված են տարբեր մարզաձևերի 35 ֆեդերացիաներ: Դրանցից զատ կան չհաշվառված շուրջ 10 ֆեդերացիաներ: Իսկ տարբեր մարզաձևերում ներգրավված մարզիկների թիվը 10 000-ից ավելի է: Ըստ էության ընդհանրացման այս հնարքին դիմելով Ն. Սամսոնյանը անտեսում է չեզոք կամ այլ կարծիք ունեցող՝ ավելի մեծ թիվ կազմող մարզիկների գոյությունը: Այլապես իշխանություններին քննադատելու հիմքերը կարող են թույլ լինել:

* * * * *

04.12.2019թ. արձագանքելով ԿԳՄՄ նախարարի տեղակալ Գ. Լոռեցյանին՝ կաշառք ստանալու կասկածանքով ԱԱԾ-ի կողմից բերման ենթարկվելու լուրին, օգտատեր Ն. Սամսոնյանն իր ֆեյսբուքյան էջում գրում է.

Հայաստանում կոռուպցիա չկա, չեմ հասկանում դժվար է համակերպվել այդ փաստի հետ» Ն. Փաշինյան 2018 թվական
Խոշոր չափերով կաշառք ստանալու կասկածանքով բերման է ենթարկվել ԿԳՄՄ նախարարի տեղակալ Գևորգ Լոռեցյանը: Երևան 2019-ի դեկտեմբեր:
Ապրի Gevorg Loretsyan-ը, բա ինքն ինչո՞վ ա պակաս Նիկոլ Փաշինյանից ու Աննա Հակոբյանից:

Այս գրառման մեջ ընդհանրացման հնարքին դիմելով Ն. Սամսոնյանը փորձում է լսարանի ուշադրությունը կոնկրետ դեպքից շեղել դեպի վարչապետ Փաշինյանը և նրա կնոջը՝ Ա. Հակոբյանը, և այդպիսով հնարավորություն է ստանում նրանց կաշառք ստանալու մեջ մեղադրելու համար։

5.2 ՀԱՐԹՈՒԹՅԱՆ ԱՄԲՈՂՋԱԿԱՆ ՓՈՓՈԽՈՒՄ

13.01.2020թ ֆեյսբուքյան իր էջում ՀՀ Առողջապահության նախարար Արսեն Թորոսյանը տեղադրում է՝ նույն օրը Հ1-ի լուրերում իր տված հարցազրույցը, որտեղ հիմնավորում է, որ ծննդօգնության ծառայություն մատուցող կազմակերպությունների օպտիմալացման որոշման ընդունման համար հիմք են հանդիսացել ոչ միայն ծնունդների քիչ լինելը, այլև մասնագետների և համապատասխան տեխնիկայի բացակայությունը։ «Դա մինիմում 150 ծնունդների շեմն է, բայց ոչ միայն։ Չկան նեոնատոլոգ, անեսթեզիոլոգ։ Պատկերացնո՞ւմ եք՝ նորածին երեխայով զբաղվող առանձին մասնագետ և նարկոզի բժիշկ չկա։ Չկա հղիների ինտենսիվ թերապիայի պալատ, չկա նորածնային ինտենսիվ թերապիայի բաժին։ Սրանք այնպիսի բաներ են, որոնց բացակայությունն ուղիղ վտանգի տակ է դնում թե՛ ծննդկանին, թե՛ երեխային»։

Մինչ այդ առողջապահության նախարարի՝ 2018 թվականի հուլիսի 30-ի հրամանով հաստատվել էին ծննդօգնության բժշկական կազմակերպությունների գնահատման չափանիշներ, համաձայն որոնց՝ ծննդատունը տարեկան առնըվազն 150 ծնունդ պետք է ընդունի՝ գործունեությունը շարունակելու համար։ Բացի այդ, անհրաժեշտ է, որպեսզի ունենա վիրահատարան, հղիների ինտենսիվ հսկողության,

նորածինների վերակենդանացման և ինտենսիվ թերապիայի, արյան բանկի, 30 բոպեի ընթացքում անհետաձգելի բուժօգնության իրականացման հնարավորություններ: Այս պահանջները չապահովող կառույցները ֆինանսավորում չեն ստանա առողջապահության նախարարությունից:

Ըստ ուսումնասիրությունների՝ այդ չափանիշներին չեն համապատասխանել 8 ծննդատուն՝ Մարալիկի առողջության կենտրոնը (ԱԿ), Աչաջրի ԱԿ-ն, Արտենիի ԱԿ-ն, Ծաղկահովիտի բժշկական կենտրոնը (ԲԿ), Արծվաբերդի ԱԿ-ն, Քաջարանի ԲԿ-ն և Գառնիի ԱԿ-ն»:

Իպատասխան այդ հայտարարությանը «Panorama.am» կայքում 13.01.2020թ. հրապարակվում է մի հոդված «Ծնունդներն «ավելացնելու» համար փակում են ծննդատները» վերնագրով, որում հարցված բուժաշխատողները Նախարարի հայտարարությունը մեկնաբանում են իբրև բժիշկներին գործազուրկ թողնելու և մարզային հիվանդանոցներն ու ծննդատները «անդամահատելու» որոշում:

«Panorama.am» կայքում հրապարակված հոդվածը ըստ էության միտումնավոր կերպով փոխում է առողջապահության նախարարի մոտեցման իմաստը՝ խնդիրը գործազրկության հարթություն տեղափոխելով: Պատճառներից մեկն այն է, որ նշված բժշկական հաստատություններն իսկապես չեն համապատասխանում նախարարության հռչակած պայմաններին: Մասնագիտական և տեխնիկական ռեսուրսները ստուգելու նպատակով նշված հաստատություններում ուսումնասիրություններ է անցկացրել «Փաստերի ստուգման հարթակը» և պարզել, որ «թվարկված բուժհաստատություններն իսկապես չեն համապա-

տասխանում առողջապահության նախարարության սահմանած պարտադիր չափորոշիչներին»:

* * * * *

2019թ. նոյեմբերին լուր է տարածվում Երևանի քաղաքապետարանին գույք նվիրած ձեռներեցների վերաբերյալ: Մի շարք լրատվամիջոցներ և քննադատներ կասկածում են, որ նվիրաբերությունները կատարվել են շինարարության թույլտվություն ստանալու նպատակով: Երևանի ՏԻՄ մամլո քարտուղար Հակոբ Կարապետյանը 28.11.2019թ. ֆեյսբուքյան իր էջում, արձագանքելով այդ քննադատություններին, գրում է.

> Ինչպես արդեն տեղեկացրել ենք, մի շարք տնտեսվարող կազմակերպություններ և անհատներ, քաղաքային տնտեսության զարգացմանն օժանդակելու նպատակով նվիրատվություններ են արել քաղաքին: Տեղեկացրել ենք նաեւ, որ քաղաքապետը մտադիր է տարեմուտից առաջ ամփոփել այս նվիրատվությունները և շնորհակալագրեր ու պատվոգրեր հանձնել սոցիալական բարձր պատասխանատվություն դրսեւորած անհատներին ու կազմակերպություններին: Հասկանալի է, որ պարգեւատրվածների անունները հանրության սեփականությունն էին դառնալու:
>
> Այնուհանդերձ, հաշվի առնելով վերջին օրերին մամուլի հետաքրքրությունը հարցի շուրջ, և ձգտելով կասեցնել տարատեսակ շահարկումների հոսքը, հրապարակում ենք այն անհատների ու կազմակերպությունների անունները, որոնց հետ այս պահի դրությամբ առկա են գույքի նվիրաբերման պայմանագրեր: Ընդգծում եմ, մի շարք այլ կազմակերպությունների կողմից գույքի (տեխնիկա, բնակմակերես եւ այլն) նվիրաբերման գործընթացը այս պահին դեռ չի ավարտվել: Մնացած անունները կհրապարակվեն պայմանագրերի ստորագրումից հետո:
>
> Եվս մեկ անգամ նշենք, որ Երեւանի քաղաքային իշխանությունը որդեգրել է բիզնեսի սոցիալական պատասխանատվության ինստիտուտի խթանման սկզբունքը, ինչը միջազգայնորեն տարածված պրակտիկա է: Երեւանի քաղաքապետ Հայկ Մարությանը հրավի-

> րում է Հայաստանում կամ արտերկրում բիզնես ծավալող բոլոր հայրենակիցներին՝ մասնակցել Երեւանի զարգացմանը:
>
> Եվ այսպես, այս պահի դրությամբ նվիրատու կազմակերպություններն են…

Երևանի քաղաքապետարանի մամլո քարտուղար Հակոբ Կարապետյանը փաստացի չի պատասխանում այն հարցին, թե շինթույլտվության դիմա՞ց են եղել արդյոք նվիրատվությունները: Փոխարենը նա խոսում է ուրիշ բաներից՝ շնորհակալագրերից, պարգևատրումներից, Երևանի զարգացման ծրագրերից և տողերի արանքում նշում է, որ շահարկումներից խուսափելու համար մի ցանկ է հրապարակելու, որտեղ ներկայացվում է նվիրատուների ոչ լրիվ կազմը: Այսինքն խոսնակը իր տեքստում այնպես է զարգացնում թեման, կարծես թե քննադատները ընդամենը պահանջել են ներկայացնել նվիրատուների ամբողջ ցուցակը և ոչ թե պատասխանել այն հարցին, թե նվիրատվությունները արդյո՞ք շինթույլտվության դիմաց են արվել, թե՞ ոչ: Ինչպես հետո պարզվում է «Փաստերի ստուգման հարթակի» ուսումնասիրությունների արդյունքում, խոսնակի ներկայացրած ցանկում առկա են կազմակերպություններ («Էյչ բի էմ գրուպ» ՍՊԸ, «Ն և Ս Քոնսթրաքշն» ՍՊԸ և այլն), որոնք շինթույլտվություններ են ստացել իրենց նվիրատվություններից ոչ շատ առաջ, այսինքն նոր իշխանությունների օրոք:

* * * * *

2020թ. փետրվարին պարզվեց, որ Սահմանադրական հանրաքվեի՝ «Այո» լոգոյի համար հայտարարված մրցույթում «Գարուն» անունով կազմակերպության կողմից առաջարկված և մրցույթում հաղթած լոգոյի տարբերակը գրագողություն է և կրկնօրինակված է 1991թ. «Երեկոյան Երևան» թեր-

թում տեղ գտած նկարազարդումից /poster-ից/։ «Գարուն» կազմակերպության ներկայացուցիչը արձագանքելով այդ մեղադրանքներին, պարզաբանում է.

> Հարգելի հայրենակիցներ, ստորև պարզաբանում եմ ստեղծված իրավիճակը։ Հանդիսանալով մարքեթինգային կազմակերպություն և ծանոթ լինելով հեղինակային իրավունքի խախտման մասին օրենքներին, ինչպես նաև տիրապետելով դիզայնի, առաջխաղացման և գովազդի բոլոր մանրամասներին՝ պաշտոնապես հայտարարում ենք, որ մենք, իհարկե, տեղյակ ենք եղել պաստառի գոյությանը։ Պարզաբանում ենք, որ 1991 թվականի «Երեկոյան Երևան» թերթում տեղ գտած նկարազարդման/poster գաղափարը հանդիսացել է ոգեշնչման աղբյուր։
>
> Այն իր մեջ ամփոփում է շղթաներից ազատման կոչի և, իհարկե, ԱՅՈ՛-ի ոգին։ «Գարուն»-ը տեղին է համարել օգտագործել պաստառի տառատեսակը և, մշակելով այն, վերածել է ԱՅՈ՛ արշավի լոգոտիպի։ Նշեմ, որ ՀՀ օրենսդրությունը հստակ տարբերակում է պաստառի և լոգոտիպի սահմանումը, ինչպես նաև հեղինակային իրավունքի խախտման կարգը։ «Գարուն»-ը որևէ մեկի հեղինակային իրավունքը չի՛ խախտել»։

Իրենց արարքը «ոգեշնչման» և ոչ թե «գրագողության» արդյունք համարելով «Գարուն մարքեթինգային կազմակերպությունը» ըստ էության փորձում է խնդիրը իրավական հարթությունից տեղափոխել հոգեբանական և արվեստային հարթություն և այդպիսով խուսափել իրավական պատասխանատվությունից։ Ինչ վերաբերում է Կազմակերպության այն պնդմանը, որ իրենք մշակելով են փոխել 1991թ. «Երեկոյան Երևան» թերթում հրապարակված նկարազարդումը, ապա այդ պնդումը խաբեություն է որակվել ֆեյսբուքյան բազմաթիվ օգտատերերի կողմից՝ այն պատճառաբանությամբ, որ բնօրինակի և այսպես կոչված «մշակված» օրինակի միջև տարբերությունները աննշան

են։ Ահա օրինակ Ասպարեզ ժուռնալիստների ակումբի նախագահ Լ. Բարսեղյանի արձագանքը.

> Էս կարգի անլրջություն. «ոգեշնչվել» այս մեկնաբանությամբ, նշանակում է արտանկարել, ուղղակի կտրել հանել, մի քիչ պտտել ու դեմ տալ որպես հեղինակային արդյունք։ Նույն տրամաբանությամբ, ցանկացած պատաշար իր շարած ցանկացած քարը կամ աղյուսը կհայտարարի նոր հեղինակային արժեք։ Այս պարոնն է Մեծ հեղինակը, Ոգեշնչման գուրուն և Արարման մագիստրոսը, ծանոթացեք եւ հեռու մնացեք, եթե չեք կամենում, որ հետո ձեր անունով եւ կերպարանքով ներկայանա և արդարանա, թե ոգեշնչվել է ձեզնով ...»։ Իր գրառմանը կից Լ. Բարսեղյանը ներկայացնում է տեսանյութեր, որտեղ ցույց է տրվում poster-ի մշակման պարզագույն տեխոնլոգիան։

5.3 ԱՐԺԱՆԻՔՆԵՐԻ ՎԿԱՅԱԿՈՉՈՒՄ

Արժանիքների, կոչումների, աստճանների վկայակոչումը ինքնին դրական կամ առավելագույնը պոզիտիվ շահարկման միջոցներ են, երբ կիրառվում են որոշակի համատեքստերում՝ տարեդարձ, հոբելյան, տոն։ Բայց օրինակ դատական վճռի կայացման համար չեն կարող որոշիչ նշանակություն ունենալ, որովհետև օրենքի առջև հավասար են բոլորը։ Սակայն հետհեղափոխական ժամանակահատվածում նման վկայակոչումները հաճախակի երեվույթներ են և հանդիպում են մի շարք բարձրաստիճան պաշտոնյաների (Ռ. Քոչարյանի, Մ. Գրիգորյանի, Ա. Մինասյանի, Յու. Խաչատուրովի և այլոց) դատավարությունների ժամանակ։ Դիմելով արժանիքների հիշատակմանը շահարկուներն ըստ էության ցանկանում են, որ օրենքը կիրառվի անհավասար։ Ահա մի քանի օրինակներ.

* * * * *

Գրավի դիմաց գեներալ Մ. Գրիգորյանի խափանման միջոցը փոփոխելու նպատակով Երևանի ընդհանուր իրավասության դատարանի կայացնելիք որոշման վրա ամեն կերպ ազդած լինելու համար, նրա փաստաբան Արսեն Մկրտչյանը ցանկացած առիթով շեշտում է իր պաշտպանյալի արժանիքները: Ահա թե ինչ է գրում այդ մասին Տ. Ղազարյանը.

> «Այս մտայնությունը կարմիր թելի պես անցնում է Արսեն Մկրտչյանի՝ սույն գործով տրված գրեթե բոլոր հարցազրույցներում: Այսպես, 01.11.2019թ. Արսեն Մկրտչյանը հայտարարել էր. «Մանվել Գրիգորյանը ադրբեջանական գերության մեջ դիմակայած Արցախի հերոս է», կամ՝ 30.11.18թ. «Ազատություն» ռ/կ լրագրողի հետ զրույցում նշել էր. «Մանվել Գրիգորյանը ազատամարտի հերոս է, և այդ ճանապարհը անցնելիս ձեռք են բերում ոչ միայն թշնամիներ, կան նաև հարազատներ, ընկերներ, մարտական ընկերներ, որոնք որ իրենց համեստ լուման կունենան»: Ավելի վաղ՝ մեկ այլ լրատվամիջոցի հետ հարցազրույցում հայտարարել է. «Սխալ է զուգահեռներ անցկացնել Մանվել Գրիգորյանի և այն անձանց միջև, որոնց խափանման միջոցը փոխվել է, քանի որ վերջիններս ազգի հերոսներ չեն, հայրենիքի համար ներդրած լուման չունեն (…)», իսկ 21.08.2018թ., ֆեյսբուքյան իր էջում գրել է. «Արցախի հերոսը ՀԵՐՈՍ Է... մայկով, առանց մայկա, մեկուսարանում, ազատության մեջ, ՀՀ-ում, Արցախում, արտերկրում, ընկերների, թշնամիների, դավաճանների, չկողմնորոշվածների, սխալվածների շրջապատում և ամենուրեք, իսկ նրա չուզողը՝ Աբիժնիկ բոլոր նույն աշխարահագրական վայրերում (…)»:

Ըստ Տ. Ղազարյանի «Դա առաջին հերթին արվում է, որպեսզի Մանվել Գրիգորյանի գործը դուրս բերվի սովորական քրեական հետապնդման ենթակա գործի տիրույթից և հանրային որոշ շրջանակներում դիտարկվի որպես հետապնդում «Արցախի հերոսի» նկատմամբ՝ ինչը ենթա-

տեքստում «Հայաստանի» կամ «հայկականության» դեմ ոտնձգություն է ենթադրում: Սրանով նաև փաստաբան Մկրտչյանը փորձ է անում շեղել հանրային ուշադրությունը Մանվել Գրիգորյանին մեղսագրվող՝ ՀՀ քրեական օրենսգրքի 179-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին կետով (առանձնապես խոշոր չափերով յուրացումը) և 235-րդ հոդվածով (ապօրինի կերպով զենք, ռազմամթերք, պայթուցիկ նյութեր կամ պայթուցիկ սարքեր ձեռք բերելը, իրացնելը, պահելը, փոխադրելը կամ կրելը) նախատեսված արարքներից»: Ամփոփելով Տ. Ղազարյանը եզրակացնում է. «…նման մանիպուլյացիաները՝ այս և նմանօրինակ հանրային հնչեղություն ունեցող քրեական գործերի առնչությամբ, ուղղված են մարդկանց հայրենասիրական զգացողությունների շահարկմանը և նպատակ ունեն նպաստել՝ նախկին ռեժիմի կարկառուն ներկայացուցիչներից քաղաքական հալածյալի կերպար ստեղծելուն»:

* * * * *

2018թ հուլիսի 27-ին ՀՀ Առողջապահության նախարարի որոշմամբ Արա Մինասյանը ազատվում է «Սուրբ Գրիգոր Լուսավորիչ» բժշկական կենտրոնի տնօրենի պաշտոնից: Իր ֆեյսբուքյան գրառման մեջ նախարար Ա. Թորոսյանը բացատրում է. «Սուրբ Գրիգոր Լուսավորիչ ԲԿ ՓԲԸ տնօրենը ազատվել է աշխատանքից՝ հաշվի առնելով ՀՀ ԱՆ ուսումնասիրության արդյունքում հայտնաբերված խախտումների ահռելի ծավալը և դրանց մինչ օրս կրկնվող բնույթը: Նոր տնօրենի մրցույթը տեղի կունենա օրենքով սահմանված կարգով, ինչի մասին լրացուցիչ կտեղեկացնեն»: Արձագանքելով այս լուրերին Սամվել Ֆարմանյանը (նախկին ԱԺ պատգամավոր, Արա Մինասյանի որդու՝

Միքայել Մինասյանի ընկեր) թվարկում է իր ընկերոջ հոր արժանիքները և շրջանցում է խախտումների թեման.

> Այսօր, արձակուրդ մեկնած վարչապետի «չիմացությամբ» կայծակնային արագությամբ երկու լուր տարածվեց՝ Սուրբ Աթոռում ՀՀ-ի դեսպան Միքայել Մինասյանն ազատվել է զբաղեցրած պաշտոնից, իսկ նրա հոր՝ *առողջապահական գործի փորձառու կազմակերպիչ, պրոֆեսոր* Արա Մինասյանին առաջադրվել է մեղադրանք, հայտարարվել է հետախուզում, կայացվել է կալանավորման միջնորդությամբ դատարան դիմելու որոշում: Մնում է այս երկու լուրերը դնել մի փաթեթում, ավելացնել ավանդական դրմփ-դրմփ-հու-ն ու հերթական, արդեն՝ նախընտրական վառ տեսարանը պատրաստ է հանրային մատուցման: Կասկածու՞մ եք, որ վարչապետ Փաշինյանը այս ամենից տեղյակ չէ: Չէ՞, որ նա արձակուրդում է:
>
> Պրոֆեսոր Արա Մինասյանին, *առողջապահական գործի վաստակավոր կազմակերպչին*, ևս կարելի է առանց շնորհակալություն հայտնելու ազատել աշխատանքից, մեղադրանք առաջադրել, հետախուզում հայտարարել, կալանավորել, անգամ հին աշխարհի օրենքներով օստրակիզմի ենթարկել, բայց այդ ամենից դուրս, էլի, իրականությունն է, որտեղ *առողջապահական համակարգում կատարյալ քաոս* է, բարձիթողի իրավիճակ, որտեղ մի ողջ համակարգ, իր հարյուրավոր երախտավորներով, հազարավոր սպասավորներով ու հարյուրհազարավոր սպառողներով, «գրավադրված» են իր արարքներով ու վարքագծով ֆոնվիզինյան անմեղսունակի կատարյալ կերպարը հիշեցնող նախարարացուի հիվանդագին մտասևեռումներին:

Արա Մինասյանի «վաստակավոր գործիչ» լինելը կամ «պրոֆեսորի կոչում» ունենալը թմբկահարելով, Ս. Ֆարմանյանն ըստ էության նպատակ ունի լսարանի ուշադրությունը շեղել նրա հանցավոր գործունեությունից: Ինչպես ԱՆ մեկ այլ հաղորդման մեջ էր նշվել. «Սուրբ Գրիգոր Լուսավորիչ» ԲԿ-ում ԱՆ ուսումնասիրությունների արդյունքներով՝ պետությանը հասցվել է 545 մլն դրամի վնաս»: Մյուս կողմից, հայտարարելով, որ «ամբողջ առողջապահական համակարգն է քաոտիկ վիճակում», Ս.

Ֆարմանյանը փորձում է հիմնովին փոխել թեմայի հարթությունը և մեղադրանքի թիրախը տեղափոխել Առողջապահության նախարարություն:

ՍԵՎԵՌՄԱՆ ԿԵՏԵՐ

- Հատկապես հարց ու պատասխանով ուղեկցվող տեքստերում ուշադրություն դարձրեք հնչող հարցերին տրվող պատասխանների համապատասխանությանը:
- Որակումների և գնահատականների հանդիպելիս փորձեք պարզել, արդյո՞ք դրանք վերաբերում են կոնկրետ փաստերին ու դրանց բովանդակությանը, թե՞ կամային բնույթ ունեն:

6 Սխալ հասցեագրում

Շահարկումներում հաճախ հնչեցվում են մեղադրանքներ ու պահանջներ, որոնք հասցեագրվում են ոչ իրական հասցեատերերին: Սա միշտ չէ, որ անտեղյակության հետևանք է և արվում է որոշակի պետական հաստատություններին և պաշտոնական անձանց վարկաբեկելու, ինչպես նաև խնդրի քննարկումը այլ հարթություն տեղափոխելու նպատակով: Հետհեղափոխական ժամանակահատվածում այդ կարգի շահարկումներից ամենից շատ հանրային հնչեղություն ստացածը հետևյալն է.

07.05.2019թ. Արցախի գործող նախագահ Բակո Սահակյանը և նախկին նախագահ Արկադի Ղուկասյանը դիմեցին ՀՀ գլխավոր դատախազ Արթուր Դավթյանին՝ մայիսի 9-ին ընդառաջ ՀՀ երկրորդ նախագահ Ռոբերտ Քոչարյանի խափանման միջոցը փոխելու խնդրանքով:

Իպատասխան դիմումի Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազությունը տարածեց պարզաբանում, որում ասվում է.

> ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 151-րդ հոդվածի համաձայն՝ խափանման միջոցը կարող է փոփոխվել քրեական վարույթն իրականացնող մարմնի կողմից: ՀՀ հատուկ քննչական ծառայությունում նախաքննությունը մեղադրական եզրակացության կազմմամբ ավարտված քրեական գործը՝ ըստ մեղադրանքի նաև Ռոբերտ Քոչարյանի, 2019 թվականի ապրիլի 29-ին ըստ էության քննելու համար ուղարկվել է Երևան քաղաքի ընդհանուր իրավասության դատարան: Քանի որ տվյալ քրեական գործը ներկայումս գտնվում է Երևան քաղաքի ընդհանուր իրավասության դատարանում, ՀՀ դատախազությունը տվյալ քրեական գործով վարույթն իրականացնող

մարմինը չէ, հետևաբար Նախագահների կողմից ՀՀ գլխավոր դատախազին հասցեագրված դիմումի քննարկումը ներկա փուլում դուրս է ՀՀ դատախազության լիազորությունների տիրույթից:

Չգիտեի՞ն դիմման այս կարգի մասին դիմողները: Դժվար թե: Հաշվարկել էի՞ն, որ Դատախազը չի միջնորդի: Ամենայն հավանականությամբ: Ուրեմն ինչու՞ են դիմել Դատախազին ու ոչ թե Երևանի ընդհանուր իրավասության դատարան: Մ. Գաբրիելյանը իր վերլուծության մեջ պարզաբանում է, որ դիմումի նպատակը Հայաստան-Արցախի հարաբերությունների կեղծ օրակարգ ձևավորելու փորձն է: Ըստ նրա. «Ուղերձը, այսպիսով, իրավական կարգավորում պահանջող խնդիրը փորձում է տեղափոխել քաղաքական հարթություն, որտեղ մեծ է շահարկումների հնարավորությունը (արցախյան խնդիր, հաղթանակած նախագահ)»:

ՀՀ գլխավոր դատախազի կողմից Ռ. Քոչարյանի խափանման միջոցը փոխելու մասին դիմումի մերժումը իսկապես մեծ աղմուկ բարձրացրեց Ֆեյսբուքում և համացանցում: Շահարկուները այն ներկայացրեցին իբրև քաղաքական պատվերի կատարում, որն իջեցվել է ՀՀ գործադիր իշխանության կողմից: Ինչպես և սպասվում էր՝ Դատախազի պատասխանը ստանալուց հետո նրանք չդիմեցին ճիշտ հասցեով. այսինքն Երևան քաղաքի ընդհանուր իրավասության դատարան:

* * * * *

08.11.2019թ. անդրադառնալով բարձրագույն ուսումնական հաստատություններում Հայոց լեզու, Հայ գրականություն և Հայոց պատմություն առարկաների դասավանդմանը վերաբերող «Բարձրագույն կրթության և գիտության» մասին ՀՀ օրենքում նախատեսվող փոփոխությանը և այդ առիթով

նախարար Արայիկ Հարությունյանի հրաժարականը պահանջող ցուցարարներին, նախկին վարչապետ և ԱԺ նախկին ՀՀԿ-ական պատգամավոր Խ. Հարությունյանը իր ֆեյսբուքյան էջում գրում է.

> Բողոքի հասցեատերը ճիշտ է ընտրված
>
> Ակնհայտ է և միանգամայն անվիճելի, որ այդ ռազմավարական նպատակներին հասնելու ճանապարհը սկսվում է կրթության ոլորտում արմատական բարեփոխումների իրականացումից:
>
> Սակայն նույն չափ ակնհայտ է և նույն չափ անվիճելի, որ կրթական բարեփոխումները չեն սկսվում և չեն կարող սկսվել բուհական կրթական ծրագրերից Հայոց լեզվի կամ Հայոց պատմության, իսկ հանրակրթական դպրոցների ծրագրերից՝ Հայ եկեղեցու պատմության առարկաների դուրս բերումով, ինչպիսի հիմնավորմամբ էլ այն հանրությանը հրամցվի:
>
> Ավելին, կրթության նախարարության ղեկավարի կողմից մեր ազգային ավանդական արժեհամակարգի հանդեպ հայեցողական մոտեցումների կողքին սեռական փոքրամասնությունների խնդիրների քարոզչությանը ընդգծված ուշադրության պարագայում կրթական ծրագրերի հանդեպ նշված մոտեցումը ոչ անհիմն կարող է որակվել որպես ոլորտի քաղաքականության կոնկրետ դրսևորում:
>
> Ուստի միանգամայն բնական է նախարարի դեմ ուղղված ՀՅԴ և ԵՊՀ երիտասարդների բողոքը:

Իրականում ԿԳՄՄՆ կողմից «Հայոց լեզու», «Հայ գրականություն» և «Հայոց պատմություն» առարկաների դասավանդմանը վերաբերող «Բարձրագույն կրթության և գիտության» մասին ՀՀ օրենքում նախատեսվող փոփոխությունը վերաբերում է ոչ թե վերոհիշյալ առարկաները բուհական առարկայացանկից հեռացնելուն, այլ դրանց պարտադիր կամ ոչ պարտադիր լինելու հարցը թողնվում է բուհերի ներքին հայեցողությանը: Նախագծում ասվում է հետևյալը. «յուրաքանչյուր բուհ իրավասու է «Հայոց լեզու», «Հայ գրականություն» և «Հայոց պատմություն» առարկաները

դարձնել պարտադիր»։ Հետևապես բողոքի ու դժգոհությունների հասցեատեր կարող են լինել բուհերի ղեկավարներն ու իմասնավորի՝ առարկայական ցանկեր կազմողները՝ եթե նրանք հաշվի չառնեն իրենց ուսանողների հետաքրքրությունները նշված հարցում։

Փաստն այն է, որ վերոհիշյալ առարկաների մեծ մասը բուհերի ոչ մասնագիտական ֆակուլտետներում դասավանդվում են հանրակրթության բարձր դասարանների ծրագրերի մակարդակում։ Բացի այդ, բուհերի գլխավոր նպատակը մասնագետներ պատրաստելն է և այդ առումով առավել արդյունավետ կարող է լինել մասնագիտական դասընթացներով առարկայական ցանկերը համալրելը։

ՍԵՎԵՌՄԱՆ ԿԵՏԵՐ

- **Փորձեք պարզել, թե ովքեր կամ որ հաստատություններն են տեքստում հնչող խնդրանքների, պահանջների կամ մեղադրանքների իրական հասցեատերերը։**
- **Կարևոր է նաև հաշվի առնել, թե ովքեր են հասցեագրողները։ Որքանո՞վ է հնարավոր նրանց անտեղյակ լինելը՝ մեղադրանքների, խնդրանքների կամ պահանջների հասցեագրման կարգից։**

7 Կեղծ դիրքավորում կամ նմանակում

Շահարկուները հաճախ ներկայանում են իբրև մեծ հումանիստներ, հանդուրժողականության կոչեր են հնչեցնում կամ խոսում են հայրենիքի նկատմամբ անսահման սիրուց, հանցագործությունների դեմ պայքարից և մարդու իրավունքների պաշտպանությունից: Նման դեպքերում ուղերձի բովանդակության, դրանում օգտագործվող փաստերի, հասկացությունների, համեմատությունների ու մեկնաբանությունների, ինչպես նաև արտահայտությունների և բառերի քննության միջոցով շահարկման նույնականացումը դժվարանում է: Ուստի մի վերջին միջոց կամ ցուցիչ կարող է լինել ուղերձի հեղինակի կենսագրության որոշակի մանրամասներին ուշադրություն դարձնելը, նրա վարքի, գործողությունների և խոսքերի միջև կոգերենտությունը (համապատասխանությունը) պարզելը: Վարը բերված օրինակներում, շահարկումը նույնականացնելու նպատակով, վերլուծողներն օգտագործել են կոգերենտության ցուցիչը:

* * * * *

15.05.2019թ. «5TV»-ին տված հարցազրույցում Ռ. Քոչարյանը քննադատում է ՀՀ ներկայիս իշխանություններին գաղափարախոսություն չունենալու համար և եզրահանգում. «Եթե չկան իզմերը, ապա մնում է մեկ և ամենից վատ իզմը, որը կոչվում է պոպուլիզմ»:

Ն. Մարգարյանը քննության առնելով ՀՀ նախագահ եղած տարիներին Ռ. Քոչարյանի քաղաքական գործունեությունը, բացահայտում է, որ գաղափարախոսության կարևո-

ության մասին վերջինիս պնդումները իրականում նրա համոզմունքը չեն և հետապնդում են շահարկման նպատակ: Իրականությունն այն է, որ ՀՀ նախագահ եղած տարիներին Ռ. Քոչարյանը որևէ քաղաքական կուսակցության անդամ չի եղել, իր քաղաքական տեքստերում որևէ քաղաքական գաղափարախոսության հղում չի կատարել, իսկ 1998թ. ՀՀ նախագահի ընտրություններին մասնակցել է «Իմ կուսակցությունը իմ ժողովուրդն է» կարգախոսով:

* * * * *

Ա. Թադևոսյանը մի վերլուծականում հատուկ անդրադարձել է պոզիտիվ անվանումների ու հայտարարությունների տակ հանդես եկող կազմակերպություններին և անհատներին, որոնց գործողությունները հակասում են նրանց անվանումներին ու պոզիտիվ հայտարարություններին.

«Կարելի է փաստել, որ Հայաստանում ի հայտ են եկել քաղաքացիական ակտիվիզմի անունից հանդես եկող անձինք ու խմբավորումներ, որոնք աղերսներ չունեն մարդու իրավունքների և քաղաքացիական արժեքների պաշտպանության հետ: Ավելին, հաճախ հանդես են գալիս մարդու իրավունքների պաշտպանությամբ զբաղվող և քաղաքացիական հասարակության կայացմանը նպաստող կազմակերպությունների դեմ գործունեությամբ: Դրանք աչքի են ընկնում բռնության, ատելության խոսքի և պրակտիկաների քարոզչությամբ, տարածում ազգայնական կոչեր, հանդես գալիս Հայաստանում շուրջ քսան տարի ընտրակեղծարարությամբ ու բռնաճնշումներով հաստատված ՀՀԿ-ական բռնատիրական համակարգի ու նրանց առաջնորդների պաշտպանությամբ և զբաղվում հեղափոխական երիտասարդության պիտակավորմամբ ու հակաքարոզչությամբ: Այդպիսիք են, օրինակ, Նարեկ Մալյանը և իր գլխավորած «Վետո» հասարակական-քաղաքական շարժումը, «Քաղաքացիական գիտակցություն» ՀԿ-ն, «Ադեկվատ» անունը կրող կազմավորումը, Ռոբերտ Քոչարյանի աջակիցների խմբավորումները և այլն: Նրանք հաճախ ներկայանում են որպես հանրահավաքային պայքար, բողոքի ակցիա անողներ, իրական քաղաքացիներ, քաղաքացիական ակտիվիստ: Հարց է

առաջանում, որքանո՞վ է հիմնավոր բռնությունը արդարացնող և պաշտպանող խմբավորումների գործողությունները անվանել քաղաքացիական ակցիա կամ շարժում, իսկ դրա իրականացնողներին՝ քաղաքացիական ակտիվիստներ: Եվ ամենակարևորը՝ ինչու՞ են քաղաքացիական ակտիվիզմի հետ աղերս չունեցող այս խմբավորումներն ու միջոցառումները ներկայացվում այդ անվան տակ:

Այս հարցին պատասխանելու համար, հենց սկզբից նկատենք, որ նրանք ոչ միայն քաղաքացիական չեն, այլև՝ հակառակը, իրենց գործողություններով հիմնականում ուղղված են քաղաքացիական բնույթ ունեցող երևույթների, արժեքների և մարդու իրավունքների պաշտպանությամբ զբաղվող քաղաքացիական ակտիվիստների դեմ: Նրանց հռետորաբանությունը լի է խտրականության, ատելության ու բռնության բառապաշարով: Օրինակ՝ Նարեկ Մալյանը «Բաց հասարակություն հիմնադրամներ-Հայաստանի» դեմ կազմակերպված ակցիայի ժամանակ արտասանած իր ճառում, բազմիցս օգտագործում է «այլասերվածներ, պիղծեր, կեղտոտներ» և այլ մակդիրներ՝ մարդու իրավունքներով և քաղաքացիական հասարակության զարգացմամբ զբաղվող կազմակերպությանը ու նրա հետ համագործակցող մարդկանց և կազմակերպություններին քննադատելու համար: Իսկ Ռ. Քոչարյանի դատավարության ժամանակ նրա, այսպես կոչված, աջակիցների ակցիայի առաջնորդներից մեկը՝ TV5 հեռուստաընկերության սեփականատեր Արմեն Թավադյանը, ջրի շշով հարվածեց ու ֆիզիկական վնասվածք պատճառեց մարդու իրավունքների պաշտպանությամբ զբաղվող և հանրության լայն շրջանակներում հայտնի Վարդգես Գասպարիին»:

Շարունակելով, Ա. Թադևոսյանը պարզաբանում է, որ նմանակման կամ «միմիկրիայի միջոցով փորձում են ներկառուցվել քաղաքացիական ակտիվիստ ու քաղաքացիական ակցիա սոցիալական երևույթներին, դրանով իսկ փորձելով ներազդել դրանց բնույթի վրա, ձևավորելով քաղակտիվիստի և քաղաքացիական ակտիվիզմի հիբրիդային կերպարներ ու պրակտիկաներ: …Մանիպուլյացիան հենց այստեղ է. դրական երևույթի տակ փորձ է արվում քողարկել բացասական երևույթներ: «Հիբրիդային» քաղակ-

տիվիզմի ձևավորման նմանատիպ փորձերում (երբ ներհյուսված են նախկին ավտորիտար ռեժիմի ներկայացուցչի կամ դրա համակրի ու քաղակտիվիստի հատկանիշները) մանիպուլյատիվ այս հնարքի միջոցով կարող են հասարակությանը զցել թյուրիմացության ու խաբկանքի մեջ»:

ՍԵՎԵՌՄԱՆ ԿԵՏԵՐ

- Համեմատեք հրապարակված տեքստերում շարադրված ուղերձները (պատումները) և դրանց հեղինակներին վերաբերող կենսագրական և գործնական բնույթ ունեցող տվյալները: Իմասնավորի կարևոր է ուշադրություն դարձնել հեղինակների՝ նախկինում և տվյալ պահի գործունեության և խոսքերի միջև կոգերենտությանը (խոսքի և գործի համապատասխանությունը), նաև, թե՝ հեղինակներն ինչ քաղաքական ուժի կամ խմբավորման անդամ են, ինչպիսի զաղափարական կողմնորոշումներ ունեն և այլն:
- Ուշադրություն դարձրեք նաև այն հանգամանքին, թե ինչ լրատվական կայքերով են նման նյութերը տարածվում: Հնարավորության դեպքում պարզեք, թե ինչ առնչություն ունեն այդ կայքերը կամ հրապարակումների հեղինակները կոնկրետ ուղերձների հեղինակների հետ:
- Հաճախ հիշեք «Իսկ ովքե՞ր են դատավորները» հայտնի հարցադրումը:

8 Բացարձակ արտահայտություններ և բառեր

Բացարձակ արտահայտություններ կամ բառեր են համարվում այլի կամ տարբերի գոյությունը բացառող արտահայտությունները, ինչպես օրինակ *բոլորը, ողջ աշխարհը, ողջ ժողովուրդը, ամեն ոք, ոչ ոք, ամենինչ, ոչ մի, միշտ, երբեք* և այլն: Շահարկումներում նման արտահայտությունների օգտագործումը բավականին հաճախ հանդիպող երևույթ է:

* * * * *

09.09.2019թ. «168 ժամ» կայքում հրապարակված մենախոսության մեջ Վատիկանում նախկին ՀՀ դեսպան Մ. Մինասյանը բազմիցս հնչեցնում է բացարձակ կամ ընդհանրական բառեր: Ահա մի հատված.

> *Մենք բոլորս* հասկանում ենք, որ գալիս է աղետը: *Ամեն ինչ* տանում է դեպի դրան: Հայաստանի Հանրապետության քաղաքացիներին՝ հպարտներին և ոչ այդքան, լավ ապրողներին և ոչ այդքան, շատ վատ ապրողներին և ոչ այդքան, սահմանի զինվորներին և բանակից փախածներին, *բոլորին* միավորում է աղետի սպասման այդ տագնապը: *Մենք **բոլորս*** հասկանում ենք, որ *այս ամենն* ավարտվելու է շատ վատ՝ ինչպես, ես չգիտեմ: Բայց մի բան փաստ է. *ոչ ոք* չի ստանձնում պատասխանատվություն՝ կանգնեցնելու *այս ամենը*: Արագությունները ավելանում են, բացասական էներգիան ավելանում է, *ամեն ինչ* ավելանում է, բայց *ոչինչ* չի կատարվում:

Ինչպես ակներև է՝ Մ. Մինասյանը որևէ կոնկրետ փաստ չի հղում բոլորի կամ գոնե մեծամասնության՝ աղետի սպասման վերաբերյալ: Առավել ևս անհեթեթ են այն պնդումները, որ «ամեն ինչ ավելանում է» կամ «ոչինչ չի կատարվում», որովհետև, եթե խոսքը կենդանի համակարգի մասին է,

ապա որոշ բաներ չեն ավելանում և ինչ-որ բաներ կատարվում են։

* * * * *

30.08.2019թ. «tert.am»-ին տրված հարցազրույցում ՀՀ նախկին վարչապետ Վ. Մանուկյանը առնվազն 5 անգամ հնչեցնում է «ոչ մի» արտահայտությունը և հոգնակի թվով այլ ժխտական բայեր.

> Անցումային արդարադատության անցնելու համար Հայաստանում *ոչ մի* նախադրյալներ չկան։ Անցումային արդարադատության անցնում են այն երկրներում, որտեղ ներսում տեղի է ունեցել քաղաքացիական պատերազմ՝ կա՛մ ֆաշիստականից անցնում ես դեմոկրատական ռեժիմի, կա՛մ տոտալիտարից, որտեղ 100-ավոր բանտարկյալներ կան, անցնում ես դեմոկրատականի։ Հայաստանը նախկինում *ոչ մի* ցուցակում չի համարվել տոտալիտար պետություն, անգամ ավտորիտար չի համարվել։ Այսինքն՝ *ոչ մի* ձևով արդարացված չէ»։ Վազգեն Մանուկյանի խոսքով նաև՝ հեղափոխությունից հետո *ոչ մի* լուրջ համակարգային փոփոխություններ տեղի *չեն* ունեցել։

Գ. Մաղոյանը անդրադառնալով այդ հարցազրույցին, տարբեր փաստերի օգնությամբ պարզաբանում է, որ Վ. Մանուկյանի բոլոր պնդումները անհիմն են և եզրահանգում է, որ «անցումային արդարադատության», «վեթինգի» և դատաիրավական բարեփոխումների նկատմամբ անհիմն, մանիպուլյատիվ դատողություններով Վազգեն Մանուկյանը փորձում է ապակողմնորոշել իր լսարանին։

* * * * *

10.01.2020թ. ֆեյսբուքյան իր էջում վարչապետ Փաշինյանը գրառում է կատարում Հայոց բանակում զոհերի նվազման միտումների վերաբերյալ.

2019 թվականի ընթացքում Հայոց բանակում (բոլոր պատճառներով) զոհերի *պատմական մինիմում*է արձանագրվել: Այսինքն, մեր բանակում *երբեք* ավելի քիչ զոհ չի եղել, քան 2019 թվականին:

Այս տեքստում բացի *երբեք* բառից, բացարձակ է նաև *պատմական մինիմում* ձևակերպումը: Ինչպես և ակնկալվում էր, Ն. Փաշինյանի այս հավակնոտ գրառման վերաբերյալ բազմաթիվ քննադատություններ հնչեցին, որոնց հաջորդեցին տարբեր մեթոդաբանություններ կիրառելու մասին արդարացումները:

ՍԵՎԵՌՄԱՆ ԿԵՏԵՐ

- Փաստն այն է, որ չկան բացարձակ միօրինակ երևույթներ և հատկապես բացարձակ մոտեցումներ ու մեկնաբանություններ: Ժամանակակից դիֆերենցված աշխարհում տարաբնույթ կարծիքներ ու ընկալումներ կան: Հետևաբար, միօրինակ և միակողմանի մոտեցումները վստահություն չեն ներշնչում: Կարող են լինել *շատերը*, *մեծ մասը*, *ոմանք*, *որոշները*, բայց ոչ բոլորը: Հատկապես, որ հաճախ չի նշվում, թե քանիսն են բոլորը, արդյո՞ք խոսքը միայն մեր համախոհների կամ մեր ճանաչած մարդկանց մասին է… Հետևապես, բանավոր և գրավոր խոսքում հանդիպող նմանատիպ արտահայտություններին անհրաժեշտ է վերապահությամբ մոտենալ:
- Օգտակար կարող է լինել նաև բացարձակ բառերով կամ արտահայտություններով հեղեղված տեքստերին վերաբերող մեկնաբանություններին ծանոթանալը: Պատահում է, որ տեքստը կարդալու ընթացքում մեր մտքով չի անցնում, որ դարձել ենք շահարկման հնարավոր օբյեկտ: Մեկնաբանություններում տարբեր արձագանքողներ վիճելի տարբեր հանգամանքերի վրա են ուշադրություն դարձնում: Հնարավոր է, որ այդ հանգամանքերի մեջ նշվեն նաև բացարձակ բառերը և արտահայտությունները:

9 Պիտակումներ և վարկաբեկող արտահայտություններ

Պիտակումներ և վարկաբեկող արտահայտություններ են համարվում ածական անունները, անունների և ազգանունների աղճատումները, անվանարկող բառերը, որևէ մեկի գործունեությունը կամ վարքը ծաղրելն ու հեգնելը, դրանց բացասական մակդիրներ վերագրելը։ Նշվածները կիրառվում են հիմնականում հասցեատերերին վարկաբեկելու, հանրության աչքում վերջիններիս ու նրանց գործունեությունը վարկաբեկելու նպատակով։ Գ. Գրաչևի և Ի. Մելնիկի կարծիքով. «Ծաղրելու հնարքի բարձր արդյունավետությունը իմասնավորի պայմանավորված է սակավ գիտակցվող, չգիտակցվող և ենթագիտակցական հոգեկան ռլորտների վրա անուղղակի ազդեցությամբ, որի նկատմամբ անհատի հոգեբանական պաշտպանվածությունը ցածր է։ Այնտեղ, ուր ուղղակի քննադատությունը և նեգատիվ ազդեցությունը զսպվում են հոգեբանական պատնեշներով, հումորի ձևով ազդեցության նկատմամբ մարդու պաշտպանական ռեակցիաները կտրուկ նվազում են»։

Պիտակումները (բացառությամբ դրական պիտակումների) ունեն նեգատիվ բնույթ, որովհետև վարկաբեկումն ինքնին բացասական երևույթ է։ Բացի այդ, դրանք հրահրում են ագրեսիա կամ իպաշտոնե գործունեության մոտիվացիայի թուլացում։

* * * * *

«Հայկական ժամանակ» թերթը «քյարփինջ է» անվանում Ամուլսարի շահագործման դեմ հանդես եկող բնա-

պահպան ակտիվիստներին։ Այդ պիտակը ամրագրված է թերթի հոդվածներից մեկի վերնագրում. «*Ազնիվ քյարփինջների*» քարոզչական հովա-նավորները»։ Ա. Բարսեղյանը քննելով հոդվածում ներկայացված փաստարկները, պարզում է, որ դրանց մեծ մասը անհիմն են և ունեն հանրային կարծիքը շահարկելու միտում։

* * * * *

23.09.2019թ. Մ. Մինասյանը ֆեյսբուքյան իր գրառման մեջ խոսելով վարչապետ Փաշինյանի մասին, նրան անվանում է «ատելության առաքյալ» և «հիվանդ».

> Նա մեր վախերի ու ատելության ծնունդն է և այդ ամենը սնուցողը։ Նա հայտնվեց հանընդհանուր մաղձի ու զզվանքի գագաթնակետին ու դարձավ «*Ատելության առաքյալ*»։ Նա *հիվանդ* է, առողջ չենք նաև մենք. Նա «քաղցկեղի» այն օջախն է, որը երկար տարիներ ներսից խժռում էր մեր առողջ բջիջները, իսկ հիմա արդեն հասունացել ու մեծացել է այնքան, որ պիտի վերջապես կա՛մ հեռացնենք, որ բուժվենք, կա՛մ քայքայվենք ու վերջնական կործանվենք։ «*Ատելության առաքյալը*» քաղցկեղածին ուռուցքի պես տարածում է իր մետաստազներն ու այդ ամենի մեջ բոլորս ենք։

Իդեպ, Մինասյանը, և ոչ միայն նա, «հիվանդ» պիտակումը կիրառում են նաև այլ գրառումներում և հոդվածներում։ Սա արդեն շահարկման մեկ այլ հնարքի՝ «բառերի կրկնություններ»-ին է վերաբերում, որին անդրադառնում ենք հաջորդ հնարքի նկարագրության մեջ։

* * * * *

Ս. Ֆարմանյանը «tert.am»-ում տեղադրված գրառման մեջ «*ֆոնվիզինյան անմեղսունակ հիշեցնող նախարարացու*» է անվանում Արա Մինասյանին՝ «Ս. Գրիգոր Լուսավորիչ»

ԲԿ տնօրենի պաշտոնից ազատած Առողջապահության նախարարին։

> Պրոֆեսոր Արա Մինասյանին, առողջապահական գործի վաստակավոր կազմակերպչին, ևս կարելի է առանց շնորհակալություն հայտնելու ազատել աշխատանքից, մեղադրանք առաջադրել, հետախուզում հայտարարել, կալանավորել, անգամ հին աշխարհի օրենքներով օստրակիզմի ենթարկել, բայց այդ ամենից դուրս, էլի, իրականությունն է, որտեղ առողջապահական համակարգում կատարյալ քաոս է, բարձիթողի իրավիճակ, որտեղ մի ողջ համակարգ, իր հարյուրավոր երախտավորներով, հազարավոր սպասավորներով ու հարյուրհազարավոր սպառողներով, «գրավադրված» են իր արարքներով ու վարքագծով *ֆոնվիզինյան անմեղսունակի* կատարյալ կերպարը հիշեցնող նախարարացուի *հիվանդագին* մտասևեռումներին։

* * * * *

Հայաստանում և Արցախում անվտանգության հարցերի հետ կապված զանազան պաշտոններ զբաղեցրած Գ. Իսագուլյանը տարբեր հարցազրույցներում պիտակումներ է հասցեագրում Սահմանադրական դատարանի դատավոր Վ. Գրիգորյանին։ Ահա դրանցից մեկը.

> Գրիգորյան Վահեն սովորական գոմիկ է, միասեռական լակոտ, թեպետ ընտանիք ունի։ …Վանեցյան Արթուրն էլ ունի համապատասխան կոմպրոմատ նրա վրա, որը հարկ եղած դեպքում կօգտագործվի, …անգամ Փաշինյան Նիկոլին էլ է ցույց տվել այդ նյութերը։

* * * * *

Պիտակելու կամ վարկաբելու շահարկման հնարքները ներառում են նաև տարբեր ծաղրանկարների (մեծ մասամբ ֆոտոմոնտաժված տարբերակով) պատրաստումն ու հանրայնացումը, որոնցով լիքն է համացանցն ու Ֆեյսբուք սոցիալական ցանցը։

* * * * *

Որոշ օգտատերեր, կարելի է ասել, իրենց վարկաբեկության թիրախներին հիշատակում են մեծամասամբ կամ բացառապես իրենց իսկ տված պիտակումներով: Օրինակ, ֆեյսբուքյան օգտատեր Լ. Բարսեղյանը՝ «Խեռժիկ», «Գյալմառոբ», «Գյալմաբեխաբար» անվանումներով հիշատակում է Սերժ Սարգսյանին և Ռոբերտ Քոչարյանին: Օգտատեր Ռ. Մեհրաբյանը վերջինիս համար օգտագործում է «Մասանդրա» ածականը: Օգտատերեր Կ. Տեր Նակալյանը, Ա. Դանիելյանը և Ն. Սամսոնյանը ՀՀ նախագահ Արմեն Սարգսյանին հիշատակում են՝ «Արմեն Ելիզավետովիչ», վարչապետ Փաշինյանին՝ «Փոքրիկ Լիրիկ», «Նոլիկ», արտաքին գործերի նախարար Զ. Մնացականյանին՝ «Զոհրաբ Սոռոսովիչ» կամ «Լարիսա Մնացականյան» անուններով: Ն. Մալյանը «թավշյա դդում» է անվանում ՀՀ ԿԳՄՍ նախարարին, իսկ ԲՀՀ հետ համագործակցող անձանց՝ «սոռոսի վաստակներ», ԲՀՀ կառույցի ղեկավարին՝ «Լարիսա Սորոսովնա»:

ՍԵՎԵՌՄԱՆ ԿԵՏԵՐ

- Որևէ տեքստում պիտակման կամ վարկաբեկող արտահայտության առկայությունը վկայում է տեքստի հեղինակի կանխակալ վերաբերմունքի մասին: Հետևաբար մեծ է հնարավորությունը, որ տվյալ տեքստում կարող են լինել շահարկման ծուղակներ:
- Եթե նույն մարդկանց հասցեին հնչող պիտակումներն ու վարկաբեկող արտահայտությունները նույն հեղինակների կողմից պարբերական կիրառություն ունեն, ապա շահարկման հնարավորությունն էլ ավելի է մեծանում: Ինչպես նախորդ, այնպես էլ այս կետի դեպքում շահարկման բուն նպատակը մեծ մասամբ պիտակի հասցետիրոջը ընթերցողի աչքում վարկաբեկելն է:

10 Կրկնություններ

Շահարկողների կողմից կիրառվող հնարքներից մեկը իրենց խոսքում որոշակի բառերի, արտահայտությունների բազմանգամյա կրկնությունն է կամ որոշակի տեքստերի պարբերական կրկնությունը: Կրկնությունը շահարկուների կողմից օգտագործվում է լսարանի հիշողության մեջ որոշակի գաղափարներ կամ պատկերացումներ ամրապնդելու նպատակով: Ի. Մաքիշվիլու կարծիքով՝ «կրկնելու հնարքի նպատակն է արհեստականորեն ստեղծել մի «ճշմարտություն», որը մեծ թվով մարդիկ կընդունեն որպես հավաստի…:»:

Կրկնության միջոցով լսարանի վրա ազդելու ամենահին վկայություններից մեկը կապված է Ք.ա. 2-րդ դարում հայտնի հռոմեական զորավար և պետական գործիչ Մարկուս Պորցիոս Կատոն Ավագի հետ: Անկախ այն հանգամանքից թե ինչ թեմայով էր նա ելույթ ունենում սենատում՝ ընտրությունների, սննդամթերքի գների կամ ժողովրդի տրամադրությունների կամ մեկ այլ, իր ցանկացած ելույթ ավարտում էր. «Միևնույն է, Կարթագենը պիտի կործանվի» արտահայտությամբ:

Պարբերաբար կրկնելով նույնիսկ ամենաանհավանական տեղեկությունը, շահարկողը հասնում է նրան, որ լսողների գիտակցության մեջ այդ տեղեությունը վերածվում է ճշմարտության: Ժամանակի ընթացքում մարդիկ սկսում են հավատալ այն բանին, ինչ-որ սկզբում նրանց անհեթեթություն էր թվում: Ինչու՞ է այդպես պատահում: Տեղեկությունը մարդու կողմից մտապահվում և մոռացվում

է անհավասարաչափ։ Տեսածի և լսածի մեծ մասը կորուսվում է արդեն առաջին մեկ ժամվա ընթացքում, եթե չի կրկնվում։ 1885թ. բազմաթիվ փորձերի միջոցով գերմանացի հոգեբան Հերման Էբինհաուզը հայտնաբերեց այսպես կոչված՝ «մոռացության կորը», որը ցույց է տալիս, թե մարդու գլխում որքան երկար է պահպանվում մի անգամ յուրացված տեղեկությունը։

10.1 ԿՐԿՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՄԻԵՎՆՈՒՅՆ ՏԵՔՍՏՈՒՄ

09.09.2019թ. «168 ժամ» կայքում «Մենք ունենք իշխանություն, որը սեփական անկանխատեսելիությունից ուրախանում է» վերնագրով հրապարակված տեսանյութում Մ. Մինասյանը բազմիցս հնչեցնում է *աղետ* և *խրամատ* բառերը.

> Օդում կար հեղափոխություն սպասում, դա տրանսֆորմացվեց հրաշքի սպասման, որն այսօր տրանսֆորմացվում է *աղետի* սպասման։ Մենք բոլորս հասկանում ենք, որ գալիս է *աղետը*։ Ամեն ինչ տանում է դեպի դրան։ Հայաստանի Հանրապետության քաղաքացիներին՝ հպարտներին և ոչ այդքան, լավ ապրողներին և ոչ այդքան, շատ վատ ապրողներին և ոչ այդքան, սահմանի զինվորներին և բանակից փախածներին, բոլորին միավորում է *աղետի* սպասման այդ տագնապը։ Մենք բոլորս հասկանում ենք, որ այս ամենն ավարտվելու է շատ վատ՝ ինչպես, ես չգիտեմ։ Բայց մի բան փաստ է. ոչ ոք չի ստանձնում պատասխանատվություն՝ կանգնեցնելու այս ամենը։
>
> Չես կարող *խրամատում* աշխատել, դժվար է մտածել տնտեսական հեղափոխության մասին։ *Խրամատում* կրակում են, կամ թաքնվում են։ *Խրամատում* չես կարող «երազանքի թիմ» հրավիրել։ Կարող ես «երազանքի գունդ» սարքել։ Նույնիսկ փորձ չի արվում դուրս գալ *խրամատից*, ավելին՝ *խրամատում* լինելը ներկայացվում է՝ որպես քաղա-քական և պատմական առաքելություն։ Ո՞ւմ դեմ եք կռվում, հնի՞, դուք եք հինը։ Այնքան հին եք, որ նույնիսկ չեք պատկերացնում։ Գոռալով, բոռալով չէ, 1.5 տարի է անցել, և կատարվել է ոչինչ։

Հայաստանի Հանրապետությունում կա մի *խրամատ*, և այն Հայաստանի ու Ադրբեջանի միջև է: Ուրիշ *խրամատ* մենք չունենք: Ես ամեն ինչ անելու եմ, որ այդ *խրամատը* լինի պինդ: Մենք բոլորս ենք անելու ամեն ինչ, որ այդ *խրամատը* լինի պինդ: Մենք բոլորս պատրաստ ենք նաև այդ *խրամատից* դուրս գալու, մենք ուրիշ *խրամատ* չունենք: Իսկ այսօր մենք ունենք *խրամատապատ* երկիր: Հայ-ռուսական հարաբերություններում՝ *խրամատ*, հայ-իրանական հարաբերություններում՝ խրամատ: Ամեն վայրկյան կա այդ *խրամատի* հայտնվելու վտանգը: Հայաստան-Սփյուռք, խնդրեմ, իշխանություն-Դաշնակցություն՝ ինչքան ուզեք, իշխանություն-ՀՀԿ՝ չասեմ, այդտեղ *խրամատ* չէ, այդտեղ փոս է: *Խրամատներ*, հներ, նորեր, սևեր, սպիտակներ: Ե՞վ, ինչ-որ մեկը դրանից ավելի լա՞վ է ապրել:

«Աղետ» բառը բազմիցս կրկնելով, Մ. Մինասյանը փորձում է լսարանի մեջ ամրապնդել աղետի զգացումը, իսկ «խրամատ» բառի կրկնության նպատակը պատերազմական վիճակի և սահմանների հետ կապված որոշակի տրամադրություններ ստեղծելն է, որը կրկին աղերսվում է աղետի զգացության հետ: Իրականում, ինչպես արդեն այլ առիթով ասել ենք, «բոլորի կողմից աղետի սպասելու» հայտարարությունը անհիմն է: Ինչպես նաև անհիմն է Հայաստան-Սփյուռք և հայ-իրանական հարաբերություններում՝ իբր թե գոյություն ունեցող անջրպետների մասին մտահոգությունը:

* * * * *

Մեկ այլ տեղ՝ ֆեյսբուքյան մի գրառման մեջ (23.09.2019թ.), Ն. Փաշինյանին բնութագրելու նպատակով, Մ. Մինասյանը բազմիցս կրկնում է «ատել» բառը.

Ինչո՞ւ է նա այդքան *ատում* ամեն ինչ ու բոլորին: *Ատում* է ու քանդում: *Ատում* է նրանց, ում սիրում, մեծարում ու հարգում են, *ատում* է հաջողակներին ու իրենից անկախներին: *Ատում* է անցյալի հերոսներին և նույնիսկ նրանց, ում հերոսացրել է հենց ինքը: *Ատում* է իր

անցյալն ու մեր ապագան: Եվ ակնհայտ է, որ այդ ատելության կենտրոնում հենց ինքն է:Նա *ատում* է ինքն իրեն:

Ի՞նչ է պատահել նրա հետ իր հեռավոր մանկության տարիներին, որ խոստումնալից երիտասարդը դարձավ «*Ատելության առաքյալ*»:

Երեկ ԱՄՆ-ում իր հնչեցրած խոսքում նա սպառնաց, որ «ծնկի է բերելու» Հայ առաքելական եկեղեցին: «*Ատելության առաքյալը*» խոստովանեց այն, ինչի մասին գրում էր միշտ, խոսում էր միշտ անուղղակի և ինչը հստակ անում է արդեն երկու տարի:

Նա չար է և լի *ատելությամբ*. դա է նրա էությունը: Աղմկոտ խոսքի և «վեհ գաղափարների» տակ, պարզվեց, թանքված է ամենապարզունակ նախանձն ու չկայացած անձը: Նա միշտ է եղել այդպիսին: Ու մարդիկ զգում էին, թե ում հետևից են գնում, որովհետև տարիներ ի վեր մեր մեջ սերմանած մաղձն ու *ատելությունը* նա կարողացավ լավագույնս արտահայտել՝ հստակ սահմանելով *ատելության* ու վրեժի թիրախներն ու տանելով այդ ուղով:

Նա մեր վախերի ու *ատելության* ծնունդն է և այդ ամենը սնուցողը: Նա հայտնվեց հանընդհանուր մաղձի ու զզվանքի գագաթնակետին ու դար-ձավ «*Ատելության* առաքյալ»: Նա հիվանդ է, առողջ չենք նաև մենք. նա «քաղցկեղի» այն օջախն է, որը երկար տարիներ ներսից խժռում էր մեր առողջ բջիջները, իսկ հիմա արդեն հասունացել ու մեծացել է այնքան, որ պիտի վերջապես կա՛մ հեռացնենք, որ բուժվենք, կա՛մ քայքայվենք ու վերջնական կործանվենք: «*Ատելության* առաքյալը» քաղցկեղածին ուռուցքի պես տարածում է իր մետաստազներն ու այդ ամենի մեջ բոլորս ենք: Պացիենտի դիագնոզը հստակ է: «Ուռուցքը» պետք է հեռացվի:

Իրականում ատելության կամ բացարձակ ատելության մասին խոսք լինել չի կարող: Դա են հաստատում հետհեղափոխական շրջանում վարչապետի և ՀՀ կառավարության աջակցության ծրագրերը և հանրության տարբեր խմբերի ու անհատների հետ պարբերական բնույթ ունեցող հաղորդակցությունը: Սակայն մեծ հաշվով Մ. Մինասյանին՝ իր իսկ կողմից Ն. Փաշինյանին վերագրվող ախտանիշները չեն հետաքրքրում, նրա վերջնանպատակը վարկաբեկման միջոցով հասցեատիրոջը ասպարեզից հեռաց-

նելն է. «Պացիենտի դիագնոզը հստակ է: «Ուռուցքը» պետք է հեռացվի»:

* * * * *

25.06.2019թ. 5TV-ին տված հարցազրույցում Ռ. Քոչարյանը 19 անգամ կրկնում է **տեսակ** բառը Հարցազրույցը սկսվում է «տեսակին» հղում անելով (3:10-3:38), որի օգնությամբ, ըստ էության, բանախոսը ներկայացնում է Արցախի հարցում (տարածքների ազատագրման և Արցախի խնդրի շուրջ բանակցություններում) իր ձեռքբերումները, ՀՀ նախագահ եղած շրջանում իր ունեցած տնտեսական նվաճումները… և ավարտվում է «տեսակի» մասին առավել ընդհանրական նկարագրի ներկայացմամբ և «տեսակին» սպառնացող վտանգների մասին զգուշացումներով (46:30-58:33): Ինչպես պարզ է դառնում բանախոսի՝ «տեսակին» բնորոշ հատկանիշների ներկայացումից և դրանց ընդհանրացումից, տեսակի հիմնական ներկայացուցիչը ղարաբաղցին է կամ Արցախի ժողովուրդը, որի բնորոշ հատկանիշներն են հող չհանձնելու կամքը, խիզախությունը: Հենց այդ տեսակին է ինքն իրեն վերագրում Ռ. Քոչարյանը: Տեղայնացնելով և հոգեբանական բացառիկ հատկանիշներով օժտելով վերոհիշյալ «տեսակը»՝ Ռ. Քոչարյանը ձևակերպում է նաև «տեսակի»՝ իր հղացքային առանցքի հակառակ կողմում տեղայնացված սուբյեկտին՝ ոչ ղարաբաղցիներին կամ հայաստանցիներին և վերջիններիս բնորոշ հատկանիշները (հող հանձնողներ, վախկոտներ): Այնուհետև, իր՝ ղարաբաղյան տեսակի առավելություններն ընդգծելու նպատակով, Ռ. Քոչարյանը խոսում է հակոտնյա տեսակից (հայաստանցիներից)՝ դրական տեսակին (ղարաբաղցիներին) սպառնացող վտանգի մասին. «պետք է թույլ չտան Հայաստանին այդ տեսակը

ջարդել, նվաստացնել, սենց փոքրացնել Ղարաբաղում» (58:18-58:33):

10.2 ՏԵՔՍՏԵՐԻ ԿՐԿՆՈՒԹՅՈՒՆ

Երրորդ ռայխի գլխավոր քարոզիչ Պ. Գեբելսն ասում էր. «Զանգվածները ճշմարտացի են համարում այնպիսի տեղեկատվությունը, որն առավել ծանոթ է: Սովորական մարդիկ ավելի պարզունակ են, քան մենք ենթադրում ենք: Դրա համար քարոզչությունը, ըստ էության, պետք է միշտ լինի պարզ և անվերջ կրկնվող: Վերջնահաշվում հասարակական կարծիքի վրա ազդեցություն ունենալու գործում նշանակալի ձեռքբերումների կհասնի նա, ով կկարողանա խնդիրները ներկայացնել պարզ բառերով ու արտահայտություններով և ով տղամարդկություն կունենա մշտապես կրկնել դրանք պարզեցված ձևով»: Վ. Մաքիշվիլին հավելում է. «Կարիք չկա ոչինչ բացատրելու, բավարար է միայն ամբողջ ժամանակ կրկնել նույնը»:

Ասվածի համատեքստում շատ տիպական է ֆեյսբուքյան մի քանի օգտատերերի կողմից վարկաբեկող նյութերի պարբերական տեղադրումը իրենց էջերին, որոնք հասցեագրվում են հասարակական որոշակի կազմակերպությունների և արդի իշխանությունների հասցեին: Նշված առումով Ֆեսյբուքում հատկապես ակտիվ է ոստիկանության նախկին աշխատակից, ներկայում ՎԵՏՕ կազմակերպության հիմնադիր Նարեկ Մալյանը, ով իր էջին տեղադրած գրեթե ամեն երրորդ նյութը կամ գրառումը հասցեագրում է Բաց հասարակության հիմնադրամներին, նրա հայաստանյան կառույցի ղեկավարին և կառույցի հետ համագործակցող անձանց: Նման վարկաբեկող կրկնություն-

ների շնորհիվ է, որ նրան հաջողվել է Ֆեյսբուք սոցիալական ցանցի օգտատերերի մի մասի մոտ այսօր բացասական ընկալումներ ձևավորել ԲՀՀ գործունեության և «Սորոս» անվան վերաբերյալ:

Օգտատերեր Ա. Դանիելյանի, Ն. Սամսոնյանի և Կ. Տեր-Նակալյանի վարկաբեկման թիրախը ամիսներ իվեր արդի իշխանություններն են և իմասնավորի վարչապետ Ն. Փաշինյանն ու նախագահ Ա. Սարգսյանը, որոնց մասին գրառումները կազմում են նրանց ֆեյսբուքյան էջերի գրեթե ողջ բովանդակությունը:

ՍԵՎԵՌՄԱՆ ԿԵՏԵՐ

- Ուշադրություն դարձրեք, թե որևէ տեքստում ինչ արտահայտություններ կամ բառեր են առավել հաճախ կիրառվում:
- Ուշադրություն դարձրեք, թե որոշակի կայքեր և օգտատերեր առավել հաճախ ինչ իրադարձությունների կամ ինչ կազմակերպությունների ու անձանց մասին են նյութեր տեղադրում, ինչպիսի մեկնաբանություններով են ուղեկցվում այդ նյութերը կամ տեքստերը:

11 Բռնության սպառնալիքներ

Մի շարք տեքստերում կարելի է հանդիպել բռնության ուղղակի կամ անուղղակի սպառնալիքների։ Այս հնարքի էությունը որևէ անձի կամ անձանց խմբի նկատմամբ բռնություն իրականացնելու մասին բացահայտ սպառնալիք ներկայացնելն է՝ դրա իրագործման եղանակի ուղղակի կամ անուղղակի նկարագրությամբ։ Անկախ այն հանգամանքից թե այդ սպառնալիքներին հետևում են բռնության գործողություններ, թե՝ ոչ, այնուամենայնիվ, նման սպառնալիքները բացասական շահարկման հնարքներ են, որոնց նպատակը վախի մթնոլորտի հարուցումն է, ինչպես նաև որոշակի անձանց և կազմակերպություններին վարկաբեկելը։ Սպառնալիքի անմիջական հետևանքներից մեկն էլ սպառնալիքի հասցեատերերի կողմից ագրեսիվ արձագանքն է։ Վարը բերված օրինակների մի մասը դրա ուղղակի վկայությունն են։

* * * * *

13.11.2019թ. Ազգային ժողովում ելույթի ժամանակ Ն. Փաշինյանը անդրադառնալով ԱԺ պատգամավորներից մեկի մտահոգությանը, թե՝ «Արդյո՞ք միայն իրավական կարգավորումները բավարար են քրեական ենթամշակույթն արմատախիլ անելու գործում», պատասխանեց.

> Եթե կան մարդիկ, այդ թվում՝ քաղաքական գործիչներ, այդ թվում՝ պատգամավորներ, որոնք մտածում են, թե այս հարցում կոմպրոմիսներ են լինելու կամ մտածում են, որ այս օրենքի հետ կապված, ասենք օրինակ՝ կարող են միջնորդավորված ձևով պատգամավորի սպառնալ, օրինակ՝ հարցի հարակից զեկուցողներին, ուղիղ ասում ենք՝

կպառկացնենք ասֆալտին, հանկարծ մտքներով չանցնի, *կպառկեցնենք ասֆալտին* և *կտանք պատերին՝ բառիս բուն իմաստով*: Որևէ մեկը չփորձի՝ նախկին կլինի, ներկա կլինի, որ հանրապետության երկրորդ քաղաքի կեսը թալանել է, հիմա մտածի, թե կարա թպրտա: Կտանք պատերով, կպառկցնենք ասֆալտին, թող ականջներին օղ անեն, եթե օղ չեն անի, այդ տեսարանները դուք կտեսնեք իրականության մեջ:

* * * * *

06.02.2020թ. խոսելով Սահմանադրական դատարանի շուրջ ստեղծված վիճակի մասին Ն. Փաշինյանն ասում է.

Հայաստանի Հանրապետության հպարտ քաղաքացիները երբեմն զայրանում են, չեն հասկանում, կարկամում են, թե էդ ինչպե՞ս, ինչի՞ հաշվին են ժամանակ առ ժամանակ հոխորտում նախորդ կոռումպացված ռեժիմի ներկայացուցիչները, նրանց սպասարկուները և օտարածին մականունով քիլլերները, որոնց օրենքը, իրավունքը, արդարադատությունն ու արդարությունը շուտով, շատ շուտով անխուսափելիորեն *առնելու է սեփական ոտքերի տակ*, և դուք այդ *շնաբարո դուրսպրծուկների վնգստոցն եք լսելու, բոլորով*»: «Ինչի՞ վրա է նրանց հույսը: Միայն ու միայն մի բանի: Հրայր Թովմասյանի ու գործող Սահմանադրական դատարանի:

* * * * *

04.02.2020թ. Ոստիկանություն բերման ենթարկվելուց հետո նախկին ՀՀԿ-ական պատգամավոր Ռուբեն Հայրապետյանը անուղղակի սպառնալիք է հնչեցնում իշխանությունների հասցեին.

Նույնիսկ եթե պառկեցնեին ասֆալտին, ամենայն պատասխանատվությամբ հայտարարում եմ, ամոթ չի ոստիկանի կողմից ասֆալտին պառկելը, բայց որ մի գեղեցիկ օր *ես եմ պառկացնելու, ոտքերս մաքրելու իրենց վրա, այ դա հաստատ լինելու է*:

* * * * *

«Իմ քայլը» խմբակցության ԱԺ պատգամավոր Ա. Փամբուքչյանն իր էջին կատարած գրառման մեջ Ռուբեն Հայրապետյանին հակադարձելով, գրում է.

> Նեմեց Ռուբոների ու մյուսների վրա, որ ժողովուրդը դեռ չի մաքրել իր կոշիկները դա միմիայն Նիկոլ Փաշինյանի և այս իշխանության շնորհիվ է: Բայց թող բոլորը հասկանան, որ մի օր էլ գուցե լցվի այդ համբերության բաժակը և ժողովրդին տրվի հնարավորություն *ոչ միայն սրբել*, այլ նաև *համտեսել տալ իրենց կոշիկների տակացուները*:

* * * * *

10.11.2019թ. «Իմ քայլի» պատգամավոր Արամ Խաչատրյանը անդրադառնալով Հայաստանի իշխանությունների հասցեին՝ Վիտալի Բալասանյանի հնչեցրած ֆիզիկական սպառնալիքներին ասում է.

> Խորհուրդ կտամ Բալասանյանին զգույշ լինել, որ *հանկարծ գլխին ծանր բան չընկնի*»: Լրագրողի հարցին թե. «Սպառնո՞ւմ եք Վիտալի Բալասանյանին»: Նա պատասխանում է. «Չեմ սպառնում, ուղղակի ասում եմ, թող ուշադիր լինի:

* * * * *

Հայաստանում սպառնալիքներն առավել հաճախ հնչեցվում են իշխանության ներկայացուցիչների կողմից: Դրանք բավականին հաճախ կիրառվում էին նաև նախորդ իշխանությունների ներկայացուցիչների կողմից: Ահա երկու օրինակ.

19.12.2012թ. Այսօր Ազգային ժողովում ՀՀԿ-ական պատգամավոր Մհեր Սեդրակյանը սպառնում է «Ա1+»-ի լրագրող Մհեր Արշակյանին, բացականչելով. «Դավա՛յ, դավա՛յ, յալլա՛, *կտամ ծնոտդ կպոկեմ*: Արդեն կապներդ

կտրվել ա, սանձներդ թողեցիք»։ Իսկ երբ Միեր Արշակյանը հարցրել է թե ի՞նչ նկատի ունի պատգամավորը, Միեր Սեդրակյանը ավելացրել է՝ «Իյա…»։

13.12.2014թ. Հայաստանի ոստիկանության պետ Վլադիմիր Գասպարյանի հրամանով նկատողություն է հայտարարվում ոստիկանության պետի տեղակալ, ոստիկանության զորքերի հրամանատար, գեներալ-լեյտենանտ Լևոն Երանոսյանին՝

> Այս երկրում ով լինի, իմ ներկայությամբ հանրապետության նախագահի հասցեին որևիցե մի բան ուզենա ասելու, ես ականջները կկըտրեմ շան թուլի պես» հայտարարության համար։

Լ. Երանոսյանը կասկածվում էր ազատամարտիկներ Մանվել Եղիազարյանին և Ռազմիկ Պետրոսյանին ծեծելու գործողություն կազմակերպելու մեջ։

ՍԵՎԵՌՄԱՆ ԿԵՏԵՐ

Սպառնալիքներ կարող են հանդիպել բազմաթիվ քաղաքական տեքստերում։ Դրանք մեծ մասամբ հնչեցվում են շահարկման նպատակով։ Այսինքն նպատակ ունեն ազդելու հասցեատիրոջ վարքի վրա։ Սակայն, ոչ բոլոր սպառնալիքներն են նեգատիվ։ Օրինակ Ռաֆֆի Հովհաննիսյանի հայտնի. «Պատասխան եք տալու» սպառնալիքը նեգատիվ չէ, որովհետև այնտեղ բռնության մասին խոսք չկա, այլ ակնարկվում է իրավական պատասխանատվությունը։ Հետևապես, կարևոր է ուշադրություն դարձնել սպառնալիք պարունակող տեքստերում բռնության եղանակների նկարագրությանը։ Եթե դրանք առկա են, ուրեմն խոսքը նեգատիվ շահարկման մասին է։

12 Գուշակություններ և գրբացություն

Գուշակությունը ապագա իրադարձությունների կանխատեսումն է՝ որոշակի իռացիոնալ մեթոդների օգնությամբ։ Քաղաքական բնույթի գուշակությունները սովորաբար լինում են վատ և հազվադեպ՝ լավ ու չեզոք բաների մասին։ Մեր օրինակները հիմնականում գուշակություններ են վատ հեռանկարի մասին կամ այլ կերպ ասած՝ չարագուշակություններ են։

Գրբացությունը մի կողմից՝ ապագայի վրա իռացիոնալ մեթոդներով ազդելու գործողություն կամ գործողությունների համախումբ է, մյուս կողմից՝ կախարդությունը կամ չարամետ ազդեցությունները իռացիոնալ մեթոդներով բացահայտելու և կասեցնելու միջոց։ Այս բաժնում դիտարկվում են գրբացության վերջին տեսակին վերաբերող օրինակները։ Թե՛ գուշակությունը, թե՛ գրբացությունը շահարկման հնարքներ են, որովհետև կարող են հրահրել մարդկանց՝ հավանություն տալու այնպիսի գործողությունների, որոնց սովորական վիճակում հավանություն չէին տա, որովհետև համարում են անբարոյական և հակամարդկային։ Հատկապես չարագուշակությունները շահարկման բացասական հնարքներ են, որովհետև շահարկում են մարդկանց վախը և խուճապ են հարուցում։

Սպառնալիքի ստեղծումը բավականին լայն կիրառում ունի քաղաքական և ռազմական քարոզչության մեջ։ Վախեցած մարդիկ հեշտ կառավարելի և վերահսկելի են։ Հենց

այդ հանգամանքի վրա են խաղադրույք կատարում շահարկուները։

12.1 ՉԱՐԱԳՈՒՇԱԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ

09.04.2019թ. քահանա Սերոբ Ազարյանը իր ֆեյսբուքյան գրառման մեջ անդրադառնալով Աժ-ում տրանսգենդերի ելույթին և դիմելով վարչապետ Ն. Փաշինյանին, գրում է.

> Եւրոպան բարոյական առումով մեր ազգին ոչ մի օգուտ է տուել Ո՛Չ անցեալին, Ո՛Չ ներկայիս, եւ Ո՛Չ էլ ապագայում պիտի տայ։ Մեր ազգի փրկութիւնը նրանց քաղաքական կեղծ ժպիտները եւ ազգային թակարդները չեն։ Մեր ազգի փրկութիւնը նրանց խոստացած եւրոամերիկեան «դրախտներ»ը չեն։ Մեր ազգի փրկութիւնը ՄԵ՛Ր մէջ է, մեր ազգային հաւաքականութեան, մեր բռնցքումին, մեր համահայկական քրիստոնէական արժէհամակարգին, որի հեղինակը Տէրը եւ մեր ազգի փրկիչը մեր Տէր Յիսուս Քրիստոսն է։ Այո՛.., այդ նո՛յն հալածեալ, թքնեալ, պախարակեալ, ծաղրեալ, խաչեալ ու թաղեալ, ու գերեզմանը պատռելով Յարուցեալ եւ յաղթական Քրիստոսը։ Որին գերեզմաններ չեն կարող պարունակել եւ որեւէ մահ չի կարող յաղթահարել.., ինչպէս պատահեց ԻՐ օրինակով մեր ազգին։ Գնացէք Տիրոջ ՆԵՂ շաւիղով պարոն վարչապետ որ դէպի կեանք է առաջնորդում բոլորիս մեր արժէքների պահպանումով եւ մերժելով ամէն աղտեղութիւն եւ չար… *մի գնաք Եւրոպաների լայն ճանապարհներով, երբ անցեալին ու ներկայիս բարոյական առումով մեզ առաջնորդում է բոլորիս դէպի կորուստ…* (Մատթ. 7:13-14)։ Եւրոպայից մեր երկրի համար պէտք է առնել ամէն բան որ մեզ պէտք է, զէնք, փող, առեւտուր, շահ, զբօսաշրջիկներ, եւ այլն։ Իսկ նրանց «բարոյակարգը» նետեցէք աղբանոցը։

Քահանա Ս. Ազարյանը չի հիմնավորում, թե ինչ է բարոյական առումը (նույնիսկ քրիստոնեական ուսմունքում դրա հստակ ձևակերպումը չկա), ի՞նչ նկատի ունի «եվրոպայի բարոյականություն» ասելով, ինչու՞ է այն մեզ դեպի կորուստներ առաջնորդում և ի՞նչ կորուստների մասին է

խոսքը: Այսինքն, բոլոր նշված հարցերի պատասխանների բացակայությունը վկայում է իռացիոնալ կանխատեսման կամ չարագուշակության մասին:

* * * * *

23.09.2019թ. համատեքստից կտրելով ԱՄՆ-ում հայ համայնքներից մեկում Ն. Փաշինյանի արտաբերած արտահայտությունը, Մ. Մինասյանը իր ֆեյսբուքյան գրառման մեջ նրան ներկայացնում է որպես եկեղեցու նկատմամբ դավադիր ուժ, իսկ իրեն որպես փրկիչ, որը սպանում է սատանային: Իր գրառմանը նա կցում է Ռաֆայելի «Միքայել հրեշտակապետը սպանում է սատանային» հայտնի կտավի լուսանկարը, իսկ գրառման մեջ գրում է.

> Հայ առաքելական եկեղեցին ամեն գնով ցանկացել են «ծնկի բերել» պարսիկ, բյուզանդացի ու արաբ նվաճողները ու չեն կարողացել: Չի հաջողվել նաև սելջուկներին ու մոնղոլներին: Չի հաջողվել թյուրքօղուզներին և մնացած արնախում թշնամիներին: Մեր հայրենիքի բոլոր զավթողներն են փորձել, բայց չի հաջողվել ու չի հաջողվելու: Թույլ չենք տա: Հայ առաքելական եկեղեցին «ծնկի բերել» փորձողների ծնկներն են ջարդվելու:

Հնարքներից մեկի նկարագրության ժամանակ արդեն պարզաբանել ենք, որ Ն. Փաշինյանի սպառնալիքը վերաբերում է ոչ թե ամբողջ եկեղեցուն, այլ այն հոգևորականներին, ովքեր փորձում են խառնվել քաղաքականությանը: Բայց համատեքստից վարչապետի խոսքերը կտրելով Մ. Մինասյանը այն դարձնում է չարագուշակություն անելու պատրվակ, իսկ վերջում՝ մի առասպելական պատումի օգնությամբ (հանձին Ռաֆայելի հայտնի կտավի) նա իրեն ներկայացնում է փրկչի դերում, ով սաստելու է իբր թե եկեղեցու դեմ ոտնձգությունը:

12.2 ԳՐԲԱՑՈՒԹՅՈՒՆ

Երբեմն շահարկողները շրջանառության մեջ են դնում դավադրապաշտական տեսություններ, որոնց օգնությամբ փորձում են բացահայտել ինչ-ինչ դավադիր ձեռնարկներ և կանխել դրանց իրականացումը: Դրանցից մեկը Օվերթոնի պատուհանի մասին տեսությունն է, որը հայալեզու համացանցում բավականին ակտիվ շրջանառվում էր 2014-2019թթ., հատկապես սեռական փոքրամասնությունների իրավունքների և Արցախի հիմնախնդրի հետ կապված քննարկումների ակտիվ փուլերում: Այդ տեսությունը քարոզողները փորձում են համոզել լսարանին, որ սեռական փոքրամասնությունների իրավունքների պաշտպանության մասին գաղափարները տարածվում են դավադիր նպատակներով, իմասնավորի՝ ավանդական հասարակությունները քայքայելու և պետություններին վնասելու ակընկալիքով:

Դետեկտորի վերլուծականներից մեկում Ն. Մարգարյանը պարզաբանում է, որ Օվերթոնի պատուհանի տեսությունը,

որը կապվում է ամերիկացի քաղաքական վերլուծաբան Օվերթոնի հետ, իրականում փաստարկված չէ, քանի որ այն որպես ամերիկյան քաղաքական կուսակցությունների մարտավարությունների մշակման տեխնոլոգիա հայտնի է դարձել ոչ թե Ժոզեֆ Օվերթոնի, այլ նրա ընկերոջ՝ Ժ. Լեհմանի շնորհիվ: Տեսությունը նախատեսված է զուտ ԱՄՆ ներքին օգտագործման համար: Սակայն ամերիկացի լրագրող ու վիպագիր Գլին Բեքը՝ ինտրիգ տեսնելով «պատուհանի» գաղափարի մեջ, որոշում է ֆանտաստիկ թրիլեր գրել, որը վերնագրում է «Օվերթոնի պատուհանը»: Բայց զավեշտականն այն է, որ այդ գրքում նույնպես որևէ խոսք չկա սեռական փոքրամասնությունների շահերը խորամանկաբար և դավադրաբար տարածելու մասին:

Ինչպես պարզվում է հետագա ուսումնասիրություններից, սեռական փոքրամասնությունների շահերին վերաբերող այդ հատվածը Օվերթոնի պատուհանի մոդելին ավելի ուշ ավելացրել է ոմն Ջո Քարտերը, որը Նոր կտակարանային միության անդամ է և համանուն էլեկտրոնային կայքի ղեկավարը: Այս միախառնումը հետագայում շատ է ոգևորում ռուս բլոգերներից մեկին, ով այն տարածում է ռուսալեզու կայքերում, առանց հղելու Օվերթոնի պատուհանի ծագման պատմությունը: Ռուսաստանում դրա տարածումը խրախուսվում է իշխանությունների կողմից սեռական փոքրամասնությունների իրավունքների դեմ պայքարում: Նույն տարում (2014թ) համացանցում ակտիվ հայազգի օգտատերերից մեկը. Կ. Տեր-Նակալյանը, վերցնում է արդեն նենգափոխված մոդելը և սկսում է տարածել հայալեզու կայքերում՝ որպես սեռական փոքրամասնությունների իրավունքներ դեմ պայքարի տեխնոլոգիա: Նրա գործընկերները, ոգևորված այդ «հայտնագործությունից», Օվերթոնի

պատուհանի մոդելի նենգափոխված տարբերակը ակտիվորեն տարածում են Ֆեյսբուք սոցիալական ցանցում։

* * * * *

Անդրադառնալով բարձրագույն ուսումնական հաստատություններում Հայոց լեզու, Հայ գրականություն և Հայոց պատմություն առարկաների դասավանդմանը վերաբերող «Բարձրագույն կրթության և գիտության» մասին ՀՀ օրենքում նախատեսվող փոփոխությանը, բանասեր, դոցենտ Սերժ Սրապիոնյանը կարծիք է հայտնում, որ բուհերում հայոց լեզվի դասավանդումը ոչ պարտադիր սկզբունքով դարձնելը հատուկ ծրագիր է, որը «*դրսից» է թելադրվում»։*

Սա ևս գրբացության հնարքի կիրառման մի օրինակ է, քանի որ խոսվում է ինչ-որ դավադիր ծրագրի վերաբերյալ, որի մասին իբր գլխի է ընկել բանասերը և «իր առաքելությունն է համարում» դրա մասին իր ժողովրդին անուղղակի զգուշացնելը։

* * * * *

Գրբացությանն առնչվող շահարկումների մի մասի առարկան Արևմուտքն ու արևմտյան արժեքներն են։ Խոսքի ազատության պաշտպանության կոմիտեի կողմից 2019թ. սեպտեմբերի 1-ից դեկտեմբերի 31-ը իրականացված հայկական և ռուսական մի շարք ԶԼՄ-ների մոնտիտորինգի արդյունքում պարզվել է, որ առավել հաճախ շահարկումների արժանացած թեմաները (ԱԺ-ում՝ Ստամբուլյան կոնվենցիայի ընդունում, ծանրորդ Մ. Դալուզյանի մասին ֆիլմի նկարահանում, «Եվրատեսիլ» երաժշտական մրցույթին Հայաստանի մասնակցություն, Երևանի Հանրապետական մետրոյի հարևանությամբ «Հուզանք և զանգ» ներկայացման բերմադրում և այլն) ներկայացվել են իբրև

«Արևմուտքի քայքայիչ ազդեցություն» և առիթ հանդիսացել պնդումների, թե ներկա իշխանությունը Արևմուտքի դրածոն է և կատարում է նրա կամքը»:

ՍԵՎԵՌՄԱՆ ԿԵՏԵՐ

- Ուշադրություն դարձրեք, թե արդյո՞ք ընթերցվող տեքստում կան կանխագուշակության փորձեր:
- Եթե կան, ապա բարի՞ն են գուշակում, թե՞ չարը:
- Եթե չարն են գուշակում, ապա ի՞նչ հիմնավորումներ են օգտագործում: Եթե այդպիսիք չկան, ապա մեծ է հավանականությունը, որ գործ ունեք բացասական շահարկման հետ: Իսկ եթե հիմնավորումներ կան, պարզեք, թե որքանո՞վ են դրանք ռացիոնալ: Ռացիոնալությունը ստուգելու համար տվեք հակառակ կամ ստուգող հարցեր:
- Ուշադրություն դարձրեք, թե ի՞նչ առիթներով և ու՞մ կողմից են տարածվում չարագուշակության և գրբացության մասին վկայող տեքստերը:
- Ուշադրություն դարձրեք, թե ի՞նչ ուծումներ են առաջարկում գուշակություն կամ գրբացություն պարունակող տեքստերի հեղինակները: Եթե լուծումները իռացիոնալ են (ինչպես օրինակ Մ. Մինասյանի տեղադրած նկարի պարագայում), ուրեմն գործ ունեք շահարկման հետ:

13 Շահարկումներ թվերի և վիճակագրության օգնությամբ

Որոշակի հաշվարկման համակարգում կլոր թվեր են համարվում այնպիսիք, որոնք 0-ից բարձր միանիշ թվի կողքին ունեն միայն զրոներ: 10-ը, 200, 3000, 800000-ը կլոր թվեր են: Հասարակական և բնական գիտություններում վիճակագրություն հասկացությունը նշանակում է մասսայական երևույթների վերլուծություն, որը հիմնվում է հավանականությունների տեսության մեթոդների կիրառման վրա: Կլոր թվերի և վիճակագրության օգտագործումը սովորաբար նպատակի ունի ստեղծելու պատրանք՝ առաջընթացի, նվաճումների, զարգացման անշեղ միտումների կամ սպասվող աղետի ու փորձությունների մասին, որպեսզի լավատեսություն ներշնչեն հանրությանը կամ հրահրեն անհնազանդության և ագրեսիայի դրսևորումներ: Շահարկման այդ հնարքների մասին բազմաթիվ հայտնի ասույթներ կան, որոնցից հիշենք մի քանիսը.

«Գոյություն ունի երեք տեսակ սուտ՝ սուտը, նենգ սուտը և վիճակագրությունը»: *Բենջամին Դիզրաելի*

«Կլոր թվերը միշտ ստում են»: *Սեմուել Ջոնսոն*

«Վիճակագրությունը շահարկման առարկա է դառնում բոլոր այն դեպքերում, երբ հանդիսանում է պետական մասշտաբի որոշումներ կայացնելու գործընթացի բաղկացուցիչը»*: Դարել Հաֆ*

* * * * *

Քաղաքագետ Է. Վարդանյանը անդրադառնալով Ամուլսարի խնդրով հնչած տուգանքի սպառնալիքներին, գրում է.

Ակտիվորեն շրջանառվում էր 700 մլն դոլար գումարի մասին լուրը, ըստ շրջանառողների՝ Հայաստանն այդքան գումար պիտի վճարի

միջազգային արբիտրաժում, եթե Լիդիանին չթույլատրվի շահագործել հանքը: Սակայն, այդ պնդման հեղինակները չէին նշում, թե որտեղից են վերցրել այդ թիվը, ինչպիսի հաշվարկների վրա է այն ձեւավորված: Այդ թեզն առաջ քաշողները գիտակցաբար, թե անգիտակցաբար՝ կիրառում էին մանիպուլյատիվ մի հնարք, որի էությունը հետևյալն է. բանավեճի ժամանակ կոնկրետ թիվ հնչեցնելով՝ տպավորություն ստեղծել, որ խորությամբ տիրապետում են խնդրին, մեծ թիվ հնչեցնելով՝ նաև հասկացնել, որ վնասի ծավալն այնքան մեծ է, որ հնարավոր չէ անտեսել իրենց կողմից բարձրացվող հարցը:

Հավելենք միայն, որ Լիդիան Արմենիայի կողմից հնչեցվող թիվը կլոր թիվ է, մյուս կողմից, երբ ՀՀ կառավարությունը սկսեց հիմնավոր զբաղվել այդ ընկերության գործունեությամբ, վերոհիշյալ գումարի մասին խոսակցություններն անհետացան:

* * * * *

Կլոր թվեր և վիճակագրական տվյալներ շրջանառելու մեջ իր ակտիվությամբ հատկապես աչքի է ընկնում վարչապետ Փաշինյանը, որը նոր իշխանության ձեռքբերումները նախընտրում է ներկայացնել 100 փաստերով: Նրա կողմից մինչ հիմա 3 անգամ հանրությանը 100 փաստեր են ներկայացվել: Բնականաբար հարց է ծագում. ինչու՞ ոչ՝ 6 կամ 8 կամ 68, այլ՝ 100 փաստ:

* * * * *

Հ. Բեջանյանը «Ապակողմնորոշում թվերով» հոդվածում անդրադառնում է այն կոնկրետ շահարկումներին, որոնք առկա են գնաճի վերաբերյալ՝ Ն. Փաշինյանի և Հ. Բագրատյանի հնչեցրած տեքստերում: Ամփոփելով վերջիններիս հնչեցրած թվերի ուսումնասիրությունը, նա արձանագրում է, որ գնաճի վերաբերյալ հրապարակումներում վարչապետ Նիկոլ Փաշինյանը և նախկին վարչապետ Հրանտ

Բագրատյանը ներկայացրել են հանրությանն ապակողմնորոշող պնդումներ: Վարչապետ Նիկոլ Փաշինյանի կողմից, որպես 2018 թվականի գնաճի գնահատական, ներկայացվել է 12-ամսյա գնաճի ցուցանիշը, որը մասնագիտորեն ընդունված ցուցանիշից՝ միջին գնաճից, համեմատաբար ավելի լավատեսական է, իսկ Հրանտ Բագրատյանը ներկայացրել է գնահատականներ՝ առանց դրանց մասնագիտական հիմնավորումները ներկայացնելու: «Երկու դեպքում էլ, հնչեցված պնդումները կարող են ապակողմնորոշել տնտեսագիտական գիտելիքներ չունեցող քաղաքացիներին», եզրակացնում է հոդվածի հեղինակը:

* * * * *

Հ. Պատվականյանը անդրադարձել է երկնիշ տնտեսական աճի վերաբերյալ Ռ. Քոչարյանի կողմից կիրառվող շահարկմանը: Վերլուծելով ՀՀ երկրորդ նախագահի իշխանության տարիներին համաշխարհային շուկայում իշխող միտումները և հայաստանյան ներքին տնտեսական գործընթացները, Հ. Պատվականյանը ցույց է տալիս, որ «նավթի գների բարձրացմանը համընթաց, Ռուսաստանում բնակվող հայ աշխատավորների եկամուտները բարձրանում են, վերջիններիս կողմից Հայաստանում բնակվող իրենց բարեկամներին ավելի մեծ գումարներ են ուղարկվում, ինչը վերածվում է սպառողական ծախսերի և ապահովում վճարունակ պահանջարկը և տնտեսական աճը երկրում»: Ինչպես նաև այդ նույն ժամանակահատվածում միջազգային շուկայում կտրուկ նվազում է նավթի գինը: Հետևապես «կարելի է փաստել, որ ՀՀ տնտեսական աճը 2002-2007թթ. հիմնականում չի եղել Ռ. Քոչարյանի արդյունավետ կառավարման արդյունք, այլ պայմանավորված է եղել, մի կողմից՝ ՌԴ նավթի գների դինամիկայով, մյուս կողմից՝ Լինսի

ֆոնդի նվիրատվության միջոցով ապահովված շինարարական բումով: Ուստի, Քոչարյանի հայտարարությունը հիմնված է ուռճացված, համատեքստից կտրված փաստերի վրա և ունի ապակողմնորոշիչ, մանիպուլյատիվ բնույթ»:

* * * * *

Զարուհի Սիմոնյանը իր՝ «Հանրային կարծիքի մանիպուլացիա վիճակագրության միջոցով» հոդվածում անդրադառնում է 2018թ ընթացքում Հայաստանյան իշխանությունների և ընդդիմության վիճակագրական այն շահարկումներին, որոնք վերաբերում են միգրացային, տնտեսական աճին, գրքերի վաճառքի թվաճին, սպանությունների թվի նվազմանը և այլն: Վերլուծողը նկատում է, որ շահարկողները հիմնականում դիմում են հետևյալ հնարքներին.

1) Վիճակագրական ցուցանիշների մեկնաբանությունը թողնում են տողատակում (նշում են ցուցանիշը, սակայն չեն ասում, թե ինչու է այդպես ստացվել, կամ թե ինչ է այդ թիվը նշանակում).
2) Նույն ցուցանիշը մեկնաբանում են տարբեր կերպ.
3) Ստեղծում են կեղծ պատճառահետևանքային կապեր:

Ամփոփելով, Զ. Սիմոնյանը արձանագրում է. «Այսպիսով, վիճակագրական ցուցանիշները՝ որպես իրողությունները ճանաչելու վստահելի միջոց, այսօր ընտրողաբար, իսկ հաճախ նաև՝ ոչ ճիշտ են օգտագործվում քաղաքական ուժերի կողմից՝ իրենց նկատմամբ դրական վերաբերմունք ձևավորելու նպատակով»:

* * * * *

Սոցիալական արդարության ժամանակակից հայտնի տեսաբաններից մեկի՝ Մարթա Նուզբաումի կարծիքով, բարեկեցության մակարդակի մասին՝ ներկայումս տարբեր

երկրների կառավարությունների կողմից շահարկվող չափանիշները՝ ՀԱԱ, ՀՆԱ և այլն, ըստ էության չեն արտահայտում քաղաքացիների բարեկեցությունը և իրական չափանիշները պետք է հիմնվեն քաղաքացիների կարողությունների իրացման վրա: «Վերջնահաշվում գլխավորը մարդկանց հետաքրքրություններն են: Եկամուտները ընդամենը մարդկային կյանքը ապահովելու գործիքային միջոց են: Ժամանակակից զարգացման խնդիրը, ինչպես միջազգային, այնպես էլ ազգային հարթությունում՝ թույլ տալ, որ մարդիկ ապրեն լիարժեք ստեղծագործական կյանքով, զարգացնելով իրենց սեփական ներուժը և կազմակերպելով իրենց գոյությունը՝ համապատասխան բոլոր մարդկանց բնորոշ մարդկային արժանապատվության»: 2011թ. լույս է տեսնում Մարթա Նուզբաումի «Հնարավորություններ ստեղծելով. մոտեցում մարդկային զարգացման տեսանկյունից» գիրքը: Գրքում նկարագրվում է հասարակության հաջողության և արդյունավետության չափանիշների նոր մոտեցումը, որը կոչված է փոխարինելու հնացած ուտիլիտար մոտեցումներին, որոնք չափում են երկրները՝ ներքին համախառն արդյունքի չոր թվերի հիման վրա: Այդ գաղափարներն արդեն մասնակի կիրառում են գտել Մարդկային զարգացման ինդեքսում, որը 1990թ-ից սկսած հրապարակվում է ամեն տարի:

ՍԵՎԵՌՄԱՆ ԿԵՏԵՐ

- Ուշադրություն դարձրեք թվերի «կլորությանը» և մեծությանը:
- Եթե մասնագետ չեք, հրապարակված թվերի վերաբերյալ հարցրեք մասնագետներին կամ կարդացեք նրանց մեկնաբանությունները հրապարակված թվերի մասին:
- Ուշադրություն դարձրեք, թե ինչ առիթով են հրապարակ-վում վիճակագրական տվյալները: Եթե դրանց հրապարակ-ման առիթը կոնկրետ հաշվետու ժամանակահատվածները չեն, կամ հերթական ընտրություններն են, ուրեմն մեծ է շահարկվելու հնարավորությունը:

14 Փոխաբերությունների և այլաբանությունների օգտագործում

Մի շարք տեքստերում՝ հատկապես քաղաքական բնույթի, կարելի է հանդիպել փոխաբերությունների և այլաբանությունների։

Փոխաբերությունը կամ մետաֆորը լեզվաոճական հնարանք է, որն օգտագործվում է խոսքը պատկերավոր կամ բանաստեղծական դարձնելու նպատակով։ Փոխաբերության օրինակներ են որևէ անունը, բառը կամ արտահայտությունը ոչ իրենց սովորական նշանակությամբ և մեկ այլ անվան, բառի կամ արտահայտության փոխարեն օգտագործելը։ Փոխաբերությունը հիմնվում է առարկաների, երևույթների արտաքին կամ ներքին հատկանիշների նմանության, նաև գործառական ընդհանրության վրա։ Օրինակ «ոսկե սիրտ» արտահայտության մեջ ոսկին փոխարինում է թանկարժեք բառին, «սև բախտի» մեջ սևը փոխարինում է ձախորդությանը նն։

Այլաբանությունը կամ ալեգորիան փոխակերպության տեսակ է, որով իրականության որևէ կողմի, երևույթի, առարկայի մասին գաղափար է տրվում ոչ թե ուղղակի նկարագրությամբ, այլ գեղարվեստական կոնկրետ պատկերի, խոսքի ուրույն կառուցման միջոցով։ Օրինակ կարմիր վարդը սիրո այլաբանությունն է, առյուծը՝ հզորության, նապաստակը՝ վախկոտության, մեղուն՝ աշխատասիրության։

* * * * *

2019թ. գարնանը սոցցանցերում և համացանցում բուռն քննարկումների առիթ տվեց վարչապետ Փաշինյանի կողմից Պապ թագավորի անվան հիշատակումը: Ն. Մարգարյանն անդրադառնալով այդ հիշատակմանը պարզաբանում է, որ վարչապետն այն օգտագործում է իբրև փոխաբերություն՝ իր քաղաքական ծրագրերը հանրությանը հասանելի դարձնելու նպատակով.

> «Պապ թագավորը վարչապետ Փաշինյանի հրապարակային խոսքում հայտնվում է ոչ թե արարողակարգային առիթով, ինչպիսին օրինակ՝ պատմական տարելիցի անցկացումն է (Մայիսյան հերոսամարտերի 100 ամյակ, Մարտունի քաղաքի 190 ամյակ), այլ որոշակի քաղաքական ծրագրերի ներկայացման համատեքստում, ինչի շնորհիվ պատմական դեմքը և նրա ժամանակի իրադարձությունները ծառայեցվում են այդ ծրագրերը բացատրելու կամ մեկնաբանելու նպատակին (1, 2): Նման հիշատակումների մյուս առանձնահատկությունը, իտարբերություն արարողակարգայինի, այն է, որ հրապարակվում են ոչ թե գրավոր կուռ տեքստի տրամաբանությամբ, այլ բանավոր տեքստին բնորոշ ոճաբանությամբ և հուզականությամբ: Այդպիսով, հիշատակվող անձինք և իրադարձությունները դուրս են բերվում իրենց պատմական վիճակից և վերածվում կենդանի իրականության մասնակիցների: Սա, ըստ էության, պատմության կամ պատմական փաստի փոխաբերացման փորձ է: Այդ փոխաբերացման կարևոր հատկանիշներից մեկը Պապի՝ թագավոր լինելն է, որն, իտարբերություն նրան հիշատակող քաղաքական առաջնորդի, օժտված է ավանդական (ժառանգական) լեգիտիմությամբ:
>
> Տարբեր են նաև Պապի ժամանակի և արդի քաղաքական վարչակարգերը (միապետություն-հանրապետություն), ինչպես նաև աշխարհաքաղաքական միջավայրերը, սոցիալական և իրավական հարաբերությունները: Քննարկվող պատմական մետաֆորի օգտագործման մեջ առանցքային դերակատարումը պատկանում է Պապի անվանը, որի միջոցով մեր իրականություն են ինտեգրվում նաև նրա ժամանակի մյուս իրողությունները: Այսինքն, «Պապ թագավոր» փոխաբերության օգնությամբ արդի քաղաքական խնդիրներն ինքնաբերաբար նույնականացվում են 1600 տարի առաջ գոյություն

ունեցած խնդիրների հետ: Մյուս կողմից՝ այդ եղանակով փոխաբերություն օգտագործող քաղաքական գործիչը (Ն. Փաշինյանը) նույնականացվում է Պապ թագավորի հետ»:

* * * * *

Պաշտոնական տարբեր շրջանակներում բավականին տարածված փոխաբերություններից մեկը կապված է «հայելու» հետ՝ «բանակը հասարակության հայելին է», «իշխանությունը հասարակության հայելին է», «կրթությունը հասարակության հայելին է» և այլն: Ն. Մարգարյանը, անդրադառնալով ԵՊՀ նախկին ռեկտոր Ա. Սիմոնյանի կողմից «հայելու» փոխաբերության շահարկմանը, բացահայտում է, որ ռեկտորը այդ փոխաբերությունը գործածում է ԵՊՀ-ում առկա արատավոր իրողությունները արդարացնելու նպատակով.

2019թ. Փետրվարի 28-ին իր աշխատասենյակում լրագրողների հետ հանդիպման ժամանակ, ի պատասխան ԵՊՀ-ում չարաշահումների վերաբերյալ լրագրողներից մեկի հարցադրմանը (տե՛ս 9:54-րդ րոպեից)՝ ռեկտոր Արամ Սիմոնյանը արձագանքեց. «…իհարկե համալսարանում կան թերություններ: Բա դուք ի՞նչ եք կարծում. Երկիրը լինի տնտեսական ճգնաժամի մեջ, սոցիալական ընդվզումների մեջ, լինի վատ վիճակում, լինի շատ պրոբլեմների մեջ, և համալսարանը լինի Հարվա՞րդ: Էդ որտե՞ղ եք էդպիսի բան տեսել: Համալսարանը հասարակության հայելին է» (տե՛ս 18:50-ից):

Հայելու մետաֆորը կամ փոխաբերությունը Ա. Սիմոնյանն օգտագործում է ոչ առաջին անգամ: Այն իր կողմից հաճախ օգտագործվող մետաֆորներից մեկն է, և՝ ոչ միայն իր: Հայտնի մետաֆորը բազմիցս օգտագործվել է նաև դպրոցներում, բանակում, նույնիսկ իշխանությունում գոյություն ունեցող ապօրինությունները մեկնաբանելու համար:

«ԵՊՀ-ն հասարակության հայելին է» մետաֆորը թույլ է տալիս ԲՈՒՀ-ին վերագրել պասիվ արտացոլողի դերակատարություն: Այնինչ, բուհական գործունեությունը կարգավորող օրենքները և կանոնակարգերն այլ բանի մասին են փաստում». «ՀՀ Բարձրագույն և հետ-

բարձրագույն մասնագիտական կրթության մասին» օրենքում առկա հոդվածները, ինչպես նաև 2014թ. հաստատված ԵՊՀ Կանոնադրության մեջ տեղ գտած հոդվածները, փաստում է, որ բարձրագույն ուսումնական հաստատությունների առաքելությունը (այդ թվում ԵՊՀ) ոչ թե իրականության պասիվ արտացոլումն է, այլ իրականությունը փոխելը՝ քաղաքացիների կրթական մակարդակը բարձրացնելու, արդիական գիտելիքներով զինելու և պետության տարբեր ոլորտներում մտավոր կարողությունների ներդրման միջոցով:

* * * * *

13.01.2020թ. լրագրող Նարե Գևորգյանը անդրադառնալով հիվանդանոցների և ծննդատների անհրաժեշտ սարքավորումներ և արդյունավետ սպասարկման կարողություններ չունենալու՝ նախարար Ա. Թորոսյանի հայտարարությանը, գրում է.

Համաչափ զարգացման և դեմոգրաֆիկ աճի մասին խոսելուն զուգընթաց կառավարությունը որդեգրել է մարզային հիվանդանոցները և ծննդատները «անդամահատում» սկզբունքը: 2020-ի համար առողջապահական բնագավառին հատկացրել է հավելյալ 1,9 մլրդ դրամի միջոցներ, որով նախարարությունը, ընտրելով ամենահեշտ տարբերակը, *հիվանդ ատամը ոչ թե բուժելու, այլ հեռացնելու է*:

* * * * *

Փոխաբերություններն ու այլաբանությունները հատկապես հաճախ են հանդիպում ՀՀԿ փոխնախագահ Ա. Աշոտյանի տեքստերում: Օրինակ 29.07.2019թ. ֆեյսբուքյան գրառման մեջ նա գրում է.

Անպայման պիտի զինվոր զոհվի՞, որ մեր ԱԳՆ-ն *դուրս գա իր «փիսո» վիճակից ու մոնչա*: Դուշանբե, Դավոս, Պիտեր, Վիեննա, Միլան, Վաշինգտոն հանդիպումներին եւ դրանց արանքում չէի՞ք կարում ձեզ կոշտ պահել: Հակառակորդը մշտապես է իրեն սադրիչ պահել, բայց, պարոնայք, ձեր վարած բանակցային գործընթացը միայն *հավելյալ ջուր է լցրել իրենց ջրաղացին* և թուլացրել մեզ:

ՍԵՎԵՌՄԱՆ ԿԵՏԵՐ

- Ծանոթացեք փոխաբերությունների գիտական մեկնաբանություններին:
- Հետևեք, թե փոխաբերություն կիրառելուց հետո կամ առաջ հնչեցվո՞ւմ է կոնկրետ պատասխան՝ կոնկրետ հարցի վե-րաբերյալ: Եթե՝ այո, ապա խոսքն ընդամենը ասելիքը պատկերավոր ներկայացնելու մասին է: Եթե ոչ, ուրեմն բացակայում են փաստերը կամ հեղինակը խուսափում է այդ թեմայով խոսելուց:
- Մի անգամ ևս հաշվի առեք հետևյալը. հատկապես քաղաքական բովանդակությամբ տեքստերում փոխաբերությունը սովորաբար ասելիքը պատկերավոր դարձնելու միջոց չէ: Այն ավելի հաճախ շահարկելու միջոց է, որովհետև. ա/այն փոխարինում է փաստարկմանը, բ/լսողը կամ ընթերցողը ունենում է ծանոթության զգացում և համաձայնում է, որ նման փոխաբերություն կա, գ/համաձայնում է փոխաբերության տրամաբանությանը: Վերջնահաշվում այդ համաձայնությունը տարածվում է ողջ ասելիքի վրա:

15 Միակողմանի մեկնաբանություններ

Շահարկող տեքստերում սովորաբար փաստերը կամ երևույթները ներկայացվում են միակողմանի մեկնաբանություններով, այսինքն շեշտվում են դրանց միայն լավ կամ վատ գծերը: Իրականում շատ քիչ երևույթներ կամ փաստեր կան, որ կարող են բացարձակ լավը կամ բացարձակ վատը լինել: Ամեն ինչ ունի իր դրական և բացասական կողմերը: Հիշենք հայտնի ասացվածքը «Եթե ձեր մասին միայն լավ խոսքեր են հնչում, ուրեմն դուք մասնակցում եք կամ ձեր ծննդյան տարեդարձին կամ ձեր հուղարկավորությանը»: Քննադատական տեքստերում սովորաբար գերիշխում են բացասական մեկնաբանությունները: Եթե գեթ մեկ դրական մեկնաբանություն չի նշվում, ուրեմն խոսքը միակողմանի բացասական մեկնաբանության մասին է: Գովաբանող տեքստերում հաճախ հանդիպում է հակառակ միտումը:

* * * * *

19.08.2019թ իր ֆեսյբուքյան հերթական լայվի ժամանակ վարչապետ Նիկոլ Փաշինյանը նշում է, որ «Սոլթ Լեյք Սիթին ԱՄՆ-ի ամենախոշոր զբոսաշրջային կենտրոններից է և դահուկային սպորտի կենտրոն է, ինչպես Ջերմուկը»: Վարչապետի լայվը վերլուծող Ա. Քեշիշյանը ուշադրություն է հրավիրում այն դրվագի վրա, որում Փաշինյանը մատնանշում է թե. քաղաքի կողքին, որտեղ օլիմպիական խաղեր են անցկացվել, կա հանքավայր ու պոչամբար, սակայն չի անդրադառնում հանքի շահագործ-

ման պատճառով ի հայտ եկած բացասական հետևանքներին և դրա արդյունքում սկսված «Միացյալ Նահանգներն ընդդեմ Kennecott ընկերության» դատական գործին։

«Մինչդեռ, հատկանշական է, որ 2008 թվականին Միացյալ Նահանգների ձկների և վայրի բնության ծառայությունը (The United States Fish and Wildlife Service), որն ԱՄՆ դաշնային կառավարության գործակալություն է, դատի էր տվել հանքը շահագործող KENNECOTT UTAH COPPER CORPORATION-ին՝ վտանգավոր նյութերի, ներառյալ սելենի, պղնձի, մկնդեղի, ցինկի, կապարի և կադմիումի արտանետման համար։

Բացի այդ, 1980-ին հետաքննությունը բացահայտել էր, որ հանքարդյունաբերության պատճառով ստորջրյա աղբյուրներ էին արտանետվել վտանգավոր նյութեր, և Յուտա նահանգը 1986 թվականի հոկտեմբերին Kennecott-ի դեմ հայց էր ներկայացրել՝ բնական ռեսուրսների, մասնավորապես՝ ստորերկրյա ջրերի կորստի և ոչնչացման համար։ 1990-ին էլ հայտնաբերվել է, որ հանքավայրի մոտակայքում կառուցված տներն աղտոտված են կապարի և մկնդեղի բարձր չափաբաժիններով։ 100 տարվա ընթացքում կուտակված ազդեցությունների մաքրմանն ուղղված գործողությունները սկսվել են 1990-ական թվականներին և շարունակվում են առ այսօր, իսկ հանքավայրի արտանետած սելենի պատճառով 1990-ականների սկզբին ոչնչացել էր ձկների թվաքանակի մոտ 30%-ը»։

Այնուհետ Ա. Քեշիշյանը տեղադրում է մի նկար, որում «ներկայացված է արբանյակային երկու պատկերների համեմատություն, որը ցույց է տալիս 1985-ից 2016 թվականների ընթացքում Բինգհեմ Քենյոնում հանքի շահա-

գործման հետևանքով առաջացած փոփոխությունները»։ «Այսպիսով», եզրակացնում է վերլուծության հեղինակը, «վարչապետ Նիկոլ Փաշինյանը ոչ միայն անտեղի համեմատական է տանում՝ Ամուլսարի հանքավայրի և Ջերմուկ քաղաքի հեռավորությունը ներկայացնելով այնքան, որքան Սոլթ Լեյք Սիթի քաղաքի և Բինգհեմ Քենյոն հանքավայրի միջև է, այլև իր ուղիղ եթերի ընթացքում նշում է միայն ամերիկյան «զբոսաշրջային քաղաքի» մոտակայքում հանքավայրի առկայության մասին, մինչդեռ չի ներկայացնում դրա շահագործման հետևանքով առաջացած խնդրահարույց հարցերը, ինչը կարող է թյուրըմբռնում ստեղծել հանրության շրջանում»։

* * * * *

Նման տպավորություն էին ստացել նաև 19.08.2019թ. Բաղրամյան 26-ում՝ վարչապետ Նիկոլ Փաշինյանի հետ Ամուլսարի խնդրով հանդիպումից մտահոգված քաղաքացիները (Ջերմուկ համայնքի բնակիչներ, ավագանու անդամներ, Ամուլսարի պահապաններ, բնապահպանների և քաղհասարակության ներկայացուցիչներ)։ Հանդիպման մասնակիցները լրագրողների հետ զրույցներում նշում էին, որ գոհ չեն հանդիպումից, քանի որ հանդիպման ընթացքում արված եզրահանգումները կապ չեն ունեցել Ամուլսարի մասին փորձաքննության իրական փաստերի հետ։ «Կառավարության դիրքորոշումն այն է, որ բնապահպանական ռիսկերը կառավարելի են», սակայն, ըստ հանդիպման մասնակիցների և բնապահպանների. «սա փորձաքննության խնդրահարույց և *միակողմանի մեկնաբանություն* է»։

* * * * *

09.09.2019թ. «168 ժամ» էլեկտրոնային կայքում տեղադրված տեսանյութում Մ. Մինասյանը պնդումներ է անում, որ իշխանությունները ոչ մի լավ բան չեն արել.

> Այս իշխանությունը *ոչնչով չի* տարբերվում այն հնից, որի դեմ պայքարել է, որովհետև այս իշխանությունը *ոչինչ չփոխեց*, այս իշխանությունը փոխեց հնի երեսը: Սա՞ էր հեղափոխությունը, հնի վերադարձ չկա:

ՄԵՎԵՌՄԱՆ ԿԵՏԵՐ

- **Ուշադրություն դարձրեք տեքստում արտահայտված մեկնաբանություններին: Արդյո՞ք դրանք համակողմանի են ներկայացնում փաստերը կամ իրադարձությունները:**
- **Եթե՝ ոչ, ապա միակողմանի մեկնաբանությունները միայն դրական է՞ն, թե՞ միայն բացասական:**
- **Ծանոթացեք նույն փաստերի կամ իրադարձությունների վերաբերյալ այլ մեկնաբանությունների:**
- **Մտածեք այն մասին, թե ինչու՞ են կոնկրետ տեքստի հեղինակները դիմում միակողմանի մեկնաբանություններին:**

16 Սադրող վերնագրեր և անվանումներ

Շահարկուները հաճախ լսարանի ուշադրությունը գրավելու նպատակով դիմում են սադրող հնարքների: Դրանք հիմնականում երկուսն են՝ սադրիչ վերնագրերը և սադրիչ անվանումները: Ինչպես հաճախ պարզվում է այդ վերնագրերի կամ էջերի տակ տեղադրված բովանդակությունից, դրանք կամ վարկաբեկող քարոզչություն կամ սպառնալիք են պարունակում:

16.1 ՍԱԴՐՈՂ ՎԵՐՆԱԳՐԵՐ

Սադրող հրապարակումները հաճախ իրենց վերնագրերում ունեն՝ «շտապ», «հրատապ», «վատ լուր», «ցնցող լուր», «նման բան չեք տեսել» և նման բնույթ ունեցող այլ կոչեր: Սրանց այլ կերպ կոչում են «քլիքբեյթ»: Այդպիսի կոչերի հանդիպելիս իսկապես դժվար է զսպել գայթակղությանը և չծանոթանալ դրանց բովանդակությանը: Ահա մի քանիսը.

Սա Շտապ է հայեր. Հիմա պահանջեց կարևոր բան: Տեսանյութը հենց սկզբից առաջարկում է բաժանորդագրվել և սեղմել «հավանել» նշանը:

Անհապաղ այս տեսանյութը պետք է հասնի Նիկոլին. Ողողեք համացանցը մինչև կհասնի Վարչապետին:

ՀԵՐԻՔ Է ԱՐԴԵՆ. սա ՇՏԱՊ պետք է վարչապետը լսի / ՋՂԱՅՆԱՅԱԾ ՇՏԱՊ. Ի՞նչ բացահայտումներ է արել Սերժ Սարգսյանն ԱԺ-ում. պատգամավորները զարմացել են:

Մինչ իրար միս են ուտում, թե ով է լավ ընդդիմություն, «Մեկ Հայաստանը» մեծ քայլերով գնում է առաջ: «Գովազդ» նշումով տարածվող այս նյութի աղբյուրը blogger.am-ն է: Էջը վերջին ժամանակները

զբաղվում է Մեկ Հայաստան կուսակցության և դրա առաջնորդ Արթուր Ղազինյանի քարոզչությամբ: Մեկ այլ սադրիչ վերնագիր նույնպես վերաբերում է նրան. *«Արթուր Ղազինյանը պայթեցրեց ողջ համացանցը. ինչու իշխանությունը չի պատրաստվում օժանդակել իրականում օրավարձով աշխատողներին»:*

Քիչ առաջ ՎԱՏ լուր Արմեն Ջիգարխանյանից. տեղեկացանք, որ… Նյութը իր ֆեյսբուքյան էջի միջոցով տարածել է armblogger.am-ը: Նյութի բովանդակությունը տեղեկացնում է, որ Ա. Ջիգարխանյանի կորոնովիուսով վարակված կինը շտապ վերադարձել է Մոսկվա:

Հաճախ նման սադրիչ վերնագրերի բովանդակությանը ծանոթանալուց հետ պարզվում է, որ ոչ մի արտառոց բան չկա, կամ տեղեկությունը կեղծիք ու հակաքարոզչություն է պարունակում: Որոշ սադրիչ վերնագրեր ընդամենը նպատակ են հետապնդում կայքէջը ընթերցողների շրջանում գովազդելու և հորդորում են վերջիններիս հավանել իրենց տեսանյութը՝ օգտահաշվին, կայքէջին կամ գրառմանը «լայք» դնելով: Օրինակ ինչպես *«Սա Շտապ է հայեր. Հիմա պահանջեց կարևոր բան»* վերնագրի պարագայում:

Գնահատելով «քլիքբեյթերի» վտանգավորությունը Ֆեյսբուքի տնօրինությունը 2016թ. դրանց դեմ պայքար հայտարարեց: 3000-ից ավել փորձագետներ ամենօրյա ռեժիմով հետևում են հարթակում հայտնված նյութերի վերնագրերին: Սակայն մասնագետները դիտարկում են միայն անգլալեզու սեկտորը:

16.2 ՍԱԴՐՈՂ ԱՆՈՒՆՆԵՐ

Ընթերցողներին սադրում են ոչ միայն գրառումների, հոդվածների, վիդեո և աուդիո նյութերի վերնագրերով, այլև տարբեր էջերի անուններով, որոնք հաճախ ֆեյք լրատվականներ կամ անհատ օգտատերեր են: Առաջին հայացքից

այդ օգտահաշիվների նպատակը ֆինանսական է: Այսինքն հավանումների ու դիտումների շնորհիվ նոր ֆինանսական միջոցներ ներգրավելը և գովազդատուներին շահագրգռելը: Սակայն, ոչ քիչ դեպքերում այդ օգտահաշիվները իրենց նպատակին հասնելու համար օգտագործում են ապատեղեկատվությունն ու հակաքարոզչությունը: Օրինակ, հայալեզու Ֆեյսբուք սոցիալական ցանցում նման գործունեությամբ զբաղվում են հետևյալ օգտահաշիվները.

Լյուստրացիա https://www.facebook.com/lyustracia/ Օգտահաշիվը զբաղվում է հակաիշխանական քարոզչությամբ:
Բացահայտում https://www.facebook.com/bacahaytum/ Օգտահաշիվը զբաղվում է հակաիշխանական քարոզչությամբ:
Տականքների բացահայտում
https://www.facebook.com/profile.php?id=100021817898312
Օգտահաշիվը զբաղված է հակաիշխանական քարոզչությամբ: Էջը հեղեղված է ներկայիս իշխանության ներկայացուցիչների ծաղրանկարներով, նաև հակասորոսական կոչերով: Մյուս կողմից այն ակտիվ կերպով գովերգում է ԲՀԿ առաջնորդ Գագիկ Ծառուկյանին:
Հայերը կհասկանան https://www.facebook.com/Armenianewsonly/ Օգտահաշիվը զբաղված է հակաիշխանական քարոզչությամբ:
Արի ասեմ իմացի: Օգտահաշիվը զբաղված է հակաիշխանական քարոզչությամբ:
Դառը ճշմարտություն: Գովազդային նշումներով տարածվող օգտահաշիվ, որը զբաղվում է հակաիշխանական քարոզչությամբ:

Ոչ պատահաբար երկու սադրիչ հնարքները (վերնագրի և անվան միջոցով) կարող են կիրառվել միաժամանակ: Օրինակ «Բացահայտում» անունը կրող ֆեսյբուքյան օգտահաշիվը իր պատին 20.04.2020թ. գովազդային տեսանկյուն է տեղադրել հետևյալ վերնագրով. «ՀՐԱՏԱՊ. Ողջ ճշմարտությունը Նիկոլի կեղծ օգնության մասին. Սա սովորական խայտառակություն է»:

ՍԵՎԵՌՄԱՆ ԿԵՏԵՐ

«Անտիֆեյք» ֆեյսբուքյան օգտահաշիվը (չշփոթել հակահիշխանական քարոզչությամբ զբաղվող Անտիֆեյք.am –ի հետ) ֆեյք լուրեր տարածելուց խուսափելու համար իր էջում առաջարկում է հետևյալ 5 քայլերը.

- Կասկածեք նյութի հավաստիության վրա, եթե կայքում շատ են «ճչացող» վերնագրերը և էժան գովազդը:
- Փնտրեք նյութը այլ կայքերում:
- Միշտ ստուգեք նյութի հրապարակման ամսաթիվը: Հնարավոր է հին նյութը հրապարակվել է նորից մարդկանց խաբելու համար:
- Նկարը փնտրեք Google որոնման համակարգի միջոցով: Հնարավոր է նկարը փոխել են, ինչ-որ բան ավելացրել կամ նկարը ընդհանրապես կապ չունի տվյալ «լուրի» հետ:
- Մի հավատացեք անհայտ աղբյուրի կողմից տարածվող «լուրին», եթե անգամ այն տարածում են կամ քննարկում այլ օգտատերեր:

17 Հավանումներ և կիսումներ

Գրառումները, տեսահաղորդումները, համացան-ցային հրապարակումները արժանանում են դիտումների, կիսումների և հավանումների։ Ոչ քիչ դեպքերում այդ ամենն ունի արհեստական բնույթ և ապահովվում է ֆեյքերի կամ յուրայինների արհեստական օգնությամբ։ Այսինքն դիտումների քանակը անպայման չէ, որ վկայում է տեսանյութն ամբողջությամբ դիտածների կամ, եթե գրավոր տեքստ է, ապա այն ամբողջությամբ ընթերցածների թվի մասին։ Որոշ սպառողներ բավարարվում են ընդամենը դրանց էջերը բացել-փակելով։ Ուրիշները մի քանի տող են կարդում կամ մի քանի բառ լսում։ Անկախ այդ ամենից դիտումը գրանցվում է իբրև դիտում։

Հավանումները ևս այնպայման չեն վկայում նյութի բովանդակությունը հավանելու մասին։ Ոմանք հավանում են մերձավոր կապերից ելնելով, ուրիշները՝ գրառման հեղինակին հարգանքի տուրք տալով, երրորդները՝ որովհետև հեղինակն էլ իրենց գրառումներին է հավանություն տալիս, չորրորդները նշում են, որ հետո կարդան կամ նայեն ու… մոռանում են։ Մեկ այլ խումբ էլ հավանում է, որ քանակ ապահովի։ Գրառումները կիսելու դեպքերում ևս թվերը միշտ չէ, որ վկայում են գրառման կարևորության մասին։ Ուշադրության դեպքում կարելի է նկատել, որ գրառումները կիսում են սովորաբար և մեծ մասամբ հենց նույն խմբի մարդիկ կամ նույն բլոգերներն ու լրատվական կայքերը։

Օրինակ քաղաքագետ Գ. Համբարյանի ֆեյսբուքյան շատ գրառումներ միաժամանակ և գրեթե անմիջապես կի-

սում են տարբեր բլոգերներ և լրատվական կայքեր՝ գրառման տակ դրա մասին տեղեկացնելով: Ընդորում, հաճախ տեղեկացումը կրկնվում է գրառումից ընտրված մի արտահայտությամբ, որի նպատակը կրկնվող սադրիչ արտահայտությունը առավել հիշելի դարձնելն է: Օրինակ գրառումներից մեկի տակ միաժամանակ արձագանքել են «BLOGNEWS.-AM», «news.am», «operativ.am», «168.am»-ը: Իսկ մեկ այլ գրառման տակ արձագանքել են 7 կայքեր ու բլոգերներ: Սրանց մի մասը փոխկապակցված կայքէջեր են:

Ինչու՞ են որոշ մարդիկ շահագրգռված դիտումների, կիսումների և հավանումների մեծ քանակ ապահովելու մեջ: Հիմնականում երկու պատճառով՝ 1. որևէ օգտատիրոջ կամ օգտահաշվի հեղինակությունը մեծացնելու: 2. շատության կամ «ընդհանուր վագոնի» տպավորություն ստեղծելու նպատակով: Վերջինիս է-ֆեկտն այն է, որ շատ օգտարերեր տեսնելով, թե որևէ նյութ շատ հավանում կամ կիսում ունի, կարող են կարծել, որ դրանում առաջարկվող գաղափարը ընդունելի է շատերի համար և իրենք էլ կուզենան միանալ շատերին: Իսկ մի մասը հակված կլինի տեսանյութում կամ գրառման մեջ ասվածին հավատալու: Այս հնարքը ըստ ամենայնի այնքան էլ նոր բան չէ: Դեռ 1930-ականներին ԱՄՆ-ի Պրոպագանդայի ինստիտուտը մշակել է «պրոպագանդայի այբուբենը», որի հնարքներից է Համընդհանուր հարթակի պատրանքի ստեղծումը: Այդ հնարքի միջոցով ընթերցողին փորձում են համոզել, որ նրա բոլոր ընկերները, հարևաններն արդեն ընտրել են առաջարկվող գաղափարը կամ թիմին ու, որ ինքը կարող է ուշանալ կամ մենակ մնալ, կամ ձեռքից բաց թողնել հաջողությունը:

Երբ մենք չգիտենք, թե մեզ ինչպես պահենք որևէ իրավիճակում, մենք նայում ենք շրջակայքում գտնվող անծանոթ

մարդկանց և նրանցից օրինակ ենք վերցնում: Համարվում է, որ եթե շատ մարդիկ նույն բանն են անում, ուրեմն նրանց վարքը ճիշտ է: Այդ փաստի ընդունումը մարդուն մեծ առավելություն է տալիս. նա ստիպված չէ ամեն անգամ վերլուծել իր գործողությունները, թե՝ կարելի է-չի կարելի, անհրաժեշտ է- անհրաժեշտ չէ, ամոթ է-ամոթ չէ, գեղեցիկ է - գեղեցիկ չէ: Նմանապես, անծանոթ իրավիճակներում մենք կրկնօրինակում ենք մեզ ծանոթ մարդկանց վարքը, ակընկալելով, որ այդպիսի վարքի շնորհիվ կունենանք ճիշտ նույն տիպի արդյունքներ: Հոգեբան Ռոբերտ Չալդինին սոցիալական անորոշության և սոցիալական համապատասխանության այդ երկու սկզբունքները միավորում է մեկ սկզբունքի՝ «սոցիալական հաստատման» տակ:

ՍԵՎԵՌՄԱՆ ԿԵՏԵՐ

- Ուշադրություն դարձրեք, թե կիսված նյութերի տակ առկա՞ են մեկնաբանություններ:
- Հավանումների մեջ արդյոք կա՞ն ֆեյք հիշեցնող օգտատերեր: Վերջիններիս բացահայտելու ցուցիչներ են ավատարի բացակայությունը, կենսագրական սակավ տվյալները, օգտահաշվի պասիվությունը:
- Ժամանակի առկայության դեպքում անպայման ծանոթացեք գրառման տակ թողնված մեկնաբանություններին: Այնտեղ հաճախ կարող եք գտնել գրառման կամ տեսանյութի շա-հարկող բնույթին վեաբերող զգուշացումներ:
- Մտածեք գրառման մեջ ներկայացված մեկնաբանությունների և դրանց՝ ձեր համոզմունքների հետ համապատասխանության մասին:
- Հիշեք հայտնի ասացվածքը՝ «քանակը դեռ չի խոսում որակի մասին»: Ավելին. հաճախ խոսում է վատ որակի և վատ բաների մասին: Որովհետև «լավ բանը շատ չի լինում»:

18 Խմբային կարծրատիպերի շահարկում

«Ագրեսիայի վերաուղղուրդումը ամենապարզ և ամենավստահելի միջոցն է այն վնասազերծելու համար»: *Կ. Լորենց*

«Այսօր թշնամիով վախեցնելը դեռևս շարունակում է ուժեղ միջոց լինել դեմագոգների համար՝ միասնության և պատկանելության ոգեղեն զգացում առաջացնելու համար»: *Վ. Մաքիշվիլի*

«Զանգվածային լրատվամիջոցների կողմից քաղաքական ազդեցություն գործելու նպատակով օգտագործվող հիմնական մեթոդներից մեկը կարծրատիպերի օգտագործումն է»: *Ջ. Բրաուն*

Խմբային կարծրատիպերը խմբի ինքնությանը, պատմական անցյալին և խմբային որոշակի խորհրդանիշներին վերաբերող հարաբերականորեն կայուն պատկերացումներ և համոզմունքներ են, որոնք շաղախված են որոշակի հուզականությամբ: Կարծրատիպային պատկերացումները կազմող նշաններն ու խորհրդանշանները առաջացնում են բացասական կամ դրական հույզեր: Հենց այդ հանգամանքը հաճախ կարծրատիպերը դարձնում են շահարկումների առարկա:

18.1 ԽՄԲԱՅԻՆ ԿԱՐԾՐԱՏԻՊԵՐԻ ԿՈՂՄԻՑ ՄԵՐԺՎՈՂ ԲԱՌԵՐ ԵՎ ԵՐԵՎՈՒՅԹՆԵՐ

Բացասական ասոցիացիա առաջացնող բառերը կապված են որոշակի իրադարձությունների և երևույթների շուրջ պատմական փորձառությամբ պայմանավորված և քարոզչական որոշակի տեխնոլոգիաների կիրառման արդյունքում ձևավորված կարծրատիպերի հետ: Օրինակ, հայերի

մեջ նման կարծրատիպեր են Թուրքիան, Ադրբեջանը, թուրքերը և այլն:

* * * * *

04.07.2019թ. Անդրադառնալով Ստամբուլյան կոնվենցիային, փաստաբանների պալատի նախագահ Արա Զոհրաբյանը իր՝ ՍՏԱՄԲՈՒԼՅԱՆ ԿՈՆՎԵՆՑԻԱՅԻ ՎՏԱՆԳՆԵՐԸ վերնագրով ֆեյսբուքյան գրառման առաջին պարբերության մեջ գրում է.

> Բռնություններից ամենազազրելի տեսակը հանդիսացող ցեղասպանությունն իրականացրած և այն ժխտող **Թուրքիայում** (Ստամբուլ քաղաքում) ստորագրվել է բռնությունները կանխարգելող կոնվենցիան: Այդ պատճառով այն կոչվում է ստամբուլյան կոնվենցիա: Սա խորհրդանշական է, հատկապես Հայաստանի համար:

Ինչպես նկատում է Արփի Ավետիսյանը. «Կոնվենցիայի նկատմամբ բացասական նախատրամադրվածություն ստեղծելու նպատակով հիշատակվում է Թուրքիայի՝ ցեղասպան պետություն լինելը, այն ժխտելն ու ստորագրման վայրի՝ Հայաստանի համար խորհրդանշական լինելը: Այս անդրադարձն ու ցեղասպանության շահարկումը կոչված են հուզականության մեծ չափաբաժին հաղորդել հայ ընթերցողին»: Հետո ավելացնում է. «Արա Զոհրաբյանն անտեսում է այն փաստը, որ կոնվենցիան ստեղծելու նախաձեռնությունը Թուրքիայի իշխանություններինը կամ թուրք հասարակության որևէ այլ շերտինը չէր»:

* * * * *

> 14.03.2019թ. Արձագանքելով Օպերան անօրինական շինություններից ազատագրելու միջոցառմանը Ա. Կիվիրյանը իր ֆեյսբուքյան էջում գրում է. «Կարգին Հայկոն հպարտորեն հայտարարում ա, թե բա մենք ազատագրեցին Օպերայի շրջակայքը: Հա, դեմներդ *թուրք* էր, դուք էլ ազատագրեցիք, կարայիք նման տրամաբանությամբ մի

300 հոգու էլ փռեիք, որ լրիվ արդար լիներ...»: Նույն բանը շահարկեցին նաև անօրինական սրճարանների տերերից ոմանք: Օրինակ «Շոկոլադնիցայի» մենեջեր Լաերտ Պողոսյանը՝ ասելով, թե. «Մարդիկ ազատագրում են Շուշին ոչ թե Օպերան: Էստեղ *թուրք* չկա: Ազգին պետք չի ընտենց վիրավորել» (Տե՛ս 4.20 բոպեից):

Ն. Մարգարյանի կարծիքով. «Այս հնարքով շահարկողները փորձում են խնդիրը տեղափոխել էթնիկ հարթություն և այն լուծել ոչ թե պետական- իրավական, այլ ազգակցական՝ չգրված նորմերի շրջանակներում: Միևնույն ժամանակ, շահարկողները քաղաքային իշխանություններին անուղղակի մեղադրում են ոչ բավարար հայ լինելու մեջ, որոնք տարբերություն չեն տեսնում հայերի և թուրքերի միջև: Իրականում, Երևանի քաղաքապետարանը փորձում է խնդիրը լուծել սեփականատերերի և կազմակերպությունների (մի կողմից) և ՏԻՄ (մյուս կողմից) իրավական փոխպարտավորությունների հարթությունում՝ անկախ դրանց ղեկավարների ու անդամների էթնիկ, կրոնական, ռասայական պատկանելությունից»:

* * * * *

02.11.2019թ. Արձագանքելով բարձրագույն ուսումնական հաստատություններում Հայոց լեզու, Հայ գրականություն և Հայոց պատմություն առարկաների դասավանդմանը վերաբերող «Բարձրագույն կրթության և գիտության» մասին ՀՀ օրենքում նախատեսվող փոփոխությանը, բանասեր դոցենտ Սերժ Սրապիոնյանը ասում է հետևյալը. «անգամ *Թուրքիայում*, ճիշտ է, հայկական թերթեր ու դպրոցներ են փակվել, բայց հայոց լեզուն պարտադիր առարկա է եղել բոլոր հայկական դպրոցներում»:

Նույն՝ նեգատիվ ասոցացիա առաջ բերելու նպատակով է, որ համացանցում և Ֆեյսբուքում Թուրքիայի ներխուժումը

Սիրիա առավել ազդու պատկերելու նպատակով օգտագործվում են հայոց ցեղասպանությանը վերաբերող նկարներ:

18.2 ԽՄԲԱՅԻՆ ԿԱՐԾՐԱՏԻՊԵՐԻ ԿՈՂՄԻՑ ԱՐԺԵՎՈՐՎՈՂ ԲԱՌԵՐ ԵՎ ԵՐԵՎՈՒՅԹՆԵՐ

Օգտագործվում են բառեր և արտահայտություններ, որոնք ասոցիատիվ կապ ունեն ինքնության և անվտանգության հետ՝ հայ, ընտանիք, ավանդույթ, լեզու, բանակ, հայոց պատմություն, պետության սահման, դրոշ, զինանշան, հայ եկեղեցի և այլն:

Նպատակը խմբային ինքնության կարծրատիպերի վրա ազդելով որոշակի արդյունքների հասնելն է, որոշակի գործընթացներից լսարանի ուշադրության շեղումը դեպի այլ հարթություններ: Այս հնարքի հաջողության գրավականներից մեկն այն է, որ շահարկման թիրախ է դարձնում մարդկանց պարտքի, ամոթի և հպարտության զգացումները:

* * * * *

14.03.2019թ. արձագանքելով Օպերայի տարածքը ապօրինի շինություններից ազատագրելու միջոցառմանը Ֆեյսբուքի օգտատեր Հարություն Հարությունյանը (TV5-ի գլխավոր խմբագիր) իր էջում գրեց.

> «Կրիտերիաներն են փոխվել, տղերքը ազատագրում էին *Արցախը*, սրանք՝ օպերայի շրջակայքը: #գոնե բառերը ընտրելուց զգույշ եղեք: Ումի՞ց եք ազատագրում: Մարդ կա երազում է *հզոր Հայաստան, ազատ ու միացյալ Հայաստան*, ուժեղ երկիր, մարդ էլ կա երազել ա ազատագրի օպերայի շրջակայքը»: Իսկ մեկ այլ օգտատեր՝ Արգիշտի Կիվիրյանը (Armenia Today լրատվական-վերլուծական գործակա-

լության համակարգող), գրեց. «*Շուշի* ու *Ադդամ* ազատագրողները այդքան չեն հպարտացել իրենց արածով, ոնց որ սրանք Օպերայի հայաթում մի քանի պալատկա քանդելով ու դրա անունը Օպերայի ազատագրում դնելով»:

* * * * *

Արձագանքելով բարձրագույն ուսումնական հաստատություններում Հայոց լեզու, Հայ գրականություն և Հայոց պատմություն առարկաների դասավանդմանը վերաբերող «Բարձրագույն կրթության և գիտության» մասին ՀՀ օրենքում նախատեսվող փոփոխությանը, ԵՊՀ Հայ բանասիրության ֆակուլտետի 4-րդ կուրսի ուսանողուհի Էմմա Գրիգորյանը նշում է.

«*Լեզուն ազգի պահպանման հիմքն* է. «Ֆակուլտետի մեր բոլոր ընկեր-ները դեմ են նախարարի այս հայտարարությանը: Բոլոր նրանք, ով-քեր համարում են, որ հայոց լեզուն պարտադիր չէ, *չեն կարող ազգ պահպանել*»:

Նույն հարցի առնչությամբ ԵՊՀ ՈՒԽ նախագահ Դավիթ Ափոյանը նշում է.

«Այստեղ *ազգի հարցն* է, թե մենք մեր *ազգային ինքնության հարցն* ինչպես ենք դնում: Հենց սա է ամբողջ խնդիրը, որ պետք է հասցնել օրենքի նախագիծը քննարկողներին»:

ԵՊՀ հայ բանասիրության ֆակուլտետի դեկան Արծրուն Ավագյանի անձնական կարծիքով.

«Գուցե աշխարհի շատ երկրներում չեն անցնում մայրենի լեզու, գրականություն և պատմություն: Այդ ժողովուրդներն ունեն տարբեր ճակատագրեր, գտնվում են աշխարհագրական, քաղաքական, ռազմական, սոցիալական այլևայլ աստիճաններում: Մեր ներկայիս կյանքը և անցյալ 30 տարիները մեզ ստիպում են միշտ զգոն պահել այն ամենը, ինչ կապված է *ազգայինի* հետ՝ *ազգային մտածողություն, ազգային զգացումներ, ազգային անցյալ և ազգային դաստիարակություն*»:

ՀՀ ԳԱԱ Հր. Աճառյանի անվան լեզվի ինստիտուտի տնօրեն Վ. Կատվալյանը արձագանքում է.

«Այսօր մենք *մեր ինքնությունն* ուժեղացնելու խնդիր ունենք: Այնպիսի տարածաշրջանում չենք ապրում, որ մեզ թույլ տանք շռայլություն, անտեսենք ինքնության բաղադրիչները»,- շեշտեց Կատվալյանը՝ հավելելով, որ իրավունք չունենք զիջումների գնալու:

Նման միտք է արտահայտում նաև ՀՀ ԳԱԱ պատմության ինստիտուտի տնօրեն, ԵՊՀ միջազգային հարաբերությունների ֆակուլտետի դասախոս Աշոտ Մելքոնյանը.

Նկատի ունենալով *հայ ինքնության* ձեւավորման հարցում լեզվի և պատմության բացառիկ նշանակությունը՝ փորձում ենք բացի մասնագետ դարձնելուց, քաղաքացի ձևավորել, որն ամեն վայրկյան պատրաստ կլինի պաշտպանելու հայրենիքը:

* * * * *

15.10.2019թ. արձագանքելով Հայաստանում վարչապետ Ն. Փաշինյանի և Արցախի նախագահ Բ. Սահակյանի հանդիպմանը, Հանրապետական կուսակցության փոխնախագահ Արմեն Աշոտյանը Ֆեյսբուքում գրառում է անում և մեղադրում Փաշինյանին՝ Արցախի դրոշը հետնապլանում դնելու կարգը մոռանալու մեջ:

Անցյալ տարի մայիսի 9-ին Ստեփանակերտում Արցախը բանակցային սեղանի շուրջ վերադարձնելու ամպագոռգոռ ու դատարկ խոստում տվողը այսօր Արցախի նախագահի հետ հանդիպմանը «մոռացել է» տեղադրել Արցախի Հանրապետության դրոշը: Բա տենց մոռացկոտ եք, այսօր Վրաստանի վարչապետի հետ հանդիպման ժամանակ դրոշը մոռանայիք… Հա, դրոշն անձամբ ինքը չի տեղադրում, ինքը հանձնարարում է:

Ֆեյսբուքյան մեկ այլ օգտատեր՝ Արմեն Մանուկյանը իր գրառման մեջ բացատրություն է պահանջում վարչապետից դրոշի բացակայության վերաբերյալ.

«Սա արդյո՞ք պատահականություն է. վերջերս լայն տարածում գտած քարոզչական առումով, որ Արցախը ՀՀ մարզ է: Ո՞վ է սրա պատասխանատուն, անփութությո՞ւն, թե՞ ծրագրավորված գործընթաց: Վարչապետը պետք է տա հստակ բացատրություն. Արցախի հարցում խաղեր տալ չկա: Սթափվե՛ք»:

«Փաստերի ստուգման հարթակը» ուսումնասիրում և պարզում է, որ սա առաջին դեպքը չէ, որ Արցախի դրոշը բացակայում է: Նման դեպքեր եղել են նաև նախորդ նախագահների (Ս. Սարգսյանի, Ռ. Քոչարյանի) ու վարչապետերի (Կ. Կարապետյանի) ժամանակ: Եղել է նաև, որ Արցախում ՀՀ և Արցախի կառավարության ներկայացուցիչների հանդիպման ժամանակ սրահում առկա է եղել միայն Արցախի դրոշը:

* * * * *

02.10.2019թ. «Արմնյուզի» հետ հարցազրույցում, անդրադառնալով ՍԴ նախագահի պաշտոնից իր չհրաժարվելուն վերաբերող համառությանը՝ Հրայր Թովմասյանն ասում է.

Ինձ համար սա սահմանագիծ է: Ինձ համար դա այսօր մեր սահմանի ինձ վստահված տարածքն է. Սահմանադրական դատարանը: Ինձ համար այդ սահմանին կանգնելը նույն հոգեբանական վիճակն է, ինչ-որ այսօր *հայ-ադրբեջանական սահմանի*ն կանգած մեր զինվորը: Եվ էստեղ մեկ քայլ հետ գնալը, ընկճվելը, ճնշվելը… դրանք դավաճանությանը հավասար որոշակի խոսքեր են: Ինձ համար սահմանը *Ղարաբաղի* տալու չտալու, *Ղարաբաղի* հարցի ինչպիսի լուծելու… անցնում է Սահմանադրական դատարանում: Ինձ համար հայկական ինքնության պահպանման խնդիրը անցնում է Սահմանադրական դատարանով: Այսօր Սահմանադրական դատարանն է կանգնած այն սահմանին թե *հայ ժողովուրդը* ապրելու է իր *ինքնությանը* բնորոշ տնտեսական, սոցիալական, մշակութային հոգևոր արժեքներո՞վ, թե՞ ապրելու է նենգափոխված, մուտացիայի ենթարկված ինչոր արժեհամակարգով» (14:40-16:15):

Ինչպես ճիշտ է նկատում «lurer.com» -ի լրագրողը. «ՍԴ նախագահը կոչ է անում քաղաքական ուժերին, այդ թվում՝ խորհրդարանական ընդիմությանը, աջակցել իրեն՝ ՍԴ-ն պահելը համեմատելով սահման պահելու հետ: Եվ բնական է, որ այն ուժերը, որոնք կաջակցեն Փաշինյանին ՍԴ-ն ցրելու հարցում, ինքնստինքյան դառնում են սահման հանձնող»:

Սա դատական գործերի բովանդակությունից հանրության ուշադրությունը շեղելու և դատարաններին վարկաբեկելու մի հնարք է, որը կիրառվել է շատ անգամներ: Դրա մեկ այլ հայտնի և թարմ օրինակ է 25.02.2020թ. Ս.Սարգսյանի (պետական բյուջեից մոտ 0,5 մլն. դրամ հափշտակելու կասկածով)՝ Երևանի ընդհանուր իրավասության դատարան գնալու ճանապարհին՝ բարձրախոսի օգնությամբ դատարանի մոտ հավաքված իր աջակիցներին և հեռուստադիտողներին ուղղված պաթետիկ կոչը.

> «Հույս կա, որ Հայաստանում դեռևս կան դատավորներ, ում համար արդարադատությունը վեր է ամենինչից, ուղիղ այնպես ինչպես ինձ համար, ձեզ համար, մեծամասնության համար (3 վայրկյան խոսքի դադար-Ն.Մ.) *Լեռնային Ղարաբաղի անկախությունը* վեր է ամեն ինչից (0:39-1:12): Իսկ նրա աջակիցները դատարանի բակում բղավում էին «Արցախ, Արցախ»:

ՍԵՎԵՌՄԱՆ ԿԵՏԵՐ

- Նման արտահայտությունների հանդիպելիս մի պահ կանգ առեք ու փորձեք հասկանալ, թե ի՞նչ եք զգում և ինչո՞ւ:
- Փորձեք գտնել կապ՝ շահարկվող կարծրատիպերի և համատեքստի միջև: Եթե կապը դժվարությամբ է նշմարվում, ուրեմն գործ ունենք շահարկման հետ: Օրինակ Հ. Թովմասյանի վերջին հարցազրույցում համատեքստը իրավական է և ոչ թե աշխարհագրական կամ ռազմական: Նույնը նաև Ս. Սարգսյանի՝ պաթետիկ կոչի պարագայում է: Այսինքն նրանցից պահանջվում էր օգտագործել իրավական հասկացություններ և օրինակներ ու ոչ թե ռազմական և աշխարհագրական:

ՄԱՍ
ԵՐՐՈՐԴ

ԻՆՉՈՒ՞ ԵՆՔ ԵՆԹԱՐԿՎՈՒՄ ՇԱՀԱՐԿՄԱՆ

Շահարկման հնարքների և ցուցիչների իմացությունը կարևոր, բայց բավարար պայման չէ բացասական շահարկումներից խուսափելու համար։ Կան նաև այլ գործոններ, որոնց իմացությունից է կախված մեր պաշտպանված լինելը։ Դրանց մի մասը վերաբերում է տեղեկատվական միջավայրի առանձնահատկություններին, մյուս մասը՝ մեր մշակութային կաղապարներին, երրորդ մասը՝ մեր հոգեբանական նախահակումներին։

Գովազդի մասնագետներ Էլ Ռիեսն ու Ջեկ Թրաութը ժամանակակից հասարակությունը անվանում են «գերտեղեկացված»։ Միջին ամերիկացին իր կյանքի ընթացքում տեսնում ու լսում է ավելի քան 7 մլն գովազդային հայտարարություն։ Այնինչ, 17-րդ դարում Նոր Անգլիայում միջին բողոքական ամերիկացին, որը եկեղեցի էր այցելում շաբաթը մի անգամ, իր ամբողջ կյանքում կարող էր լսել 3000 քարոզ։

Ժան Բոդրիյարը, խոսելով ժամանակակից տեղեկատվական շփոթի մասին գրում է. «Մենք ապրում ենք մի տարածության մեջ, որտեղ տեղեկատվությունը գնալով ավելանում է, իսկ իմաստը գնալով պակասում է»։ Տեղեկատը-

վության փոխանցման մեջ կարևոր են դառնում շատությունը, մատուցման արագությունը և մատուցման եղանակը։

Է. Արոնսոնն ու Է. Պրակտանիսը նկատում են, որ ժամանակակից տեղեկատվություն ստացողը այնքան է ծանրաբեռնված ուղերձներով, որ նրա համար դժվարանում է բավարար մտավոր էներգիա տրամադրելը, ինչն անհրաժեշտ է ընթացիկ բազմաթիվ կարևոր խնդիրները հասկանալու համար։

Սակայն, ոչ բոլորիս համար է կարևոր ժամանակակից բարդ խնդիրները հասկանալը։ Շատերս մեզ հասանելի տեղեկատվության մեջ փնտրում ենք մեր կանխակալ մոտեցումների հաստատումը։ Այն ամենը, ինչ որ չի համապատասխանում մեր կանխակալ մոտեցումներին կամ նախահակումներին, մենք հրաժարվում ենք տեսնել, լսել ու կարդալ։ Հրաժարվում ենք մտորել դրանց մասին։

Իսկ որքանո՞վ են վստահելի մեր նախահակումները։ Արդյո՞ք դրանք պաշտպանում են մեզ շահարկումներից։ Բան այն է, որ մեր կանխակալ մոտեցումների գերակշիռ մասը հիմնված է որոշակի խմբային կարծրատիպերի և արժեքային պատկերացումների վրա, որոնք ձևավորվել են այլ միջավայրում և այլ իրողությունների պայմաններում։ Ձևավորման պահին դրանք կարող են հիմնված լինել մեկ կոնկրետ դրվագում կոնկրետ երևույթի մեկնաբանության վրա, սակայն հետագայում տարածվում են դրանց հետ ուղղակի կապ չունեցող այլ դրվագների և երևույթների վրա։ Հիշենք, որ շահարկողների կողմից կիրառվող սիրելի հնարքներից մեկը խմբային կարծրատիպերի շահարկումն է։ Նշանակում է, որ դրանք կարող են խոցելի լինել։ 1641թ. «Փիլիսոփայության մեկնարկը» աշխատանքում Ռենե Դե-

կարտը դիմելով ապագա սերունդներին, բացատրում է ոչ միայն կարծրատիպերի ծագումը, այլև առաջարկում է դրանց շահարկումից խուսափելու միջոցը. «Քանի որ մենք երեխա ենք ծնվում և երևույթների մասին պատկերացումներ ենք կազմում մինչև մեր գիտակցությունն օգտագործելը, դրանցից այլ կերպ չենք կարող ազատվել, քան կյանքում գեթ մի անգամ դրանք ամբողջովին կասկածի ենթարկելը: Կասկածել այն ամենին, ինչի մեջ կգտնենք թեկուզ մի փոքր անարժանահավատ բան»:

Տեղեկատվության մեջ մեր մոտեցումների հաստատումը փնտրելու նախահակումը նպաստում է վարքի այնպիսի դիրքավորումների, որոնք մեզ խոցելի են դարձնում շահարկողների համար: «Տեսա՞ր, ես ճիշտ էի» կարգի պնդումները ենթադրում են մի դիրքավորում, ըստ որի որևէ մեկը նախապես գիտի ամեն բան, որ իբր նա երբեք չի սխալվում, որ նրան անհնար է խաբել: Բայց հաճախ մեզ խաբում են հենց այն ժամանակ, երբ վստահ ենք, որ մեզ չեն խաբի: Հայտնի ասացվածքն ասում է. «Փորձված աղվեսը երկու ոտքով է թակարդն ընկնում»:

Պարադոքսն այն է, որ չսխալվելու կամ սխալ դուրս չգալու մտահոգությունը ոչ այնքան անհատական, որքան խմբային պատճառներ ունի: Մարդկանց մեծ մասի համար կարևորը ոչ թե իրենց աչքում, այլ ուրիշների աչքում սխալված չլինելն է: Նմանապես՝ ճիշտ լինելը ենթադրում է ուրիշների կարծիքով ճիշտ լինել: Դրա համար մենք հակված ենք հաղորդակցվել և շփվել այն մարդկանց հետ, ովքեր կիսում են մեր դիրքորոշումները: Սոցիալական ցանցում մեր ընկերները մեծ մասամբ մեր դիրքորոշումների հետ համաձայնող մարդիկ են: Անկախ այն հանգամանքից, թե մեր դիրոքորոշումները ինչպիսի փաստերի վրա են հիմնը-

ված կամ ինչ տրամաբանական գիծ ունեն։ Իսկ սա նշանակում է, որ մենք երաշխավորված չենք որոշակի փաստերի նենգափոխման միջոցով շահարկման ենթարկվելուց՝ մեր դիրքորոշումը կիսող մեր իսկ ընկերների կողմից։

Փաստերը ոչ կարևոր համարելը նպաստում է շահարկման համար խոցելի մեկ այլ թիրախի ձևավորմանը։ Անհասկանալի կամ անորոշ վիճակներում սկսում ենք ենթադրություններ ու կռահումներ անել։ Անկախ որոշակի փաստերի առկայությունից, որոնց համադրումը կարող էր հակառակ կարծիքի հանգեցնել և թույլ տալ որոշակիացնելու իրադրությունը։ Այս նախահակումը, ինչ խոսք, հիանալի թիրախ է ոչ միայն փողոցային գուշակների և «սուրճի բաժակ» նայողների, այլև քաղաքական շահարկուների համար՝ իրենց հաճախորդների առավելագույն քանակն ապահովելու առումով։

Զանգվածային լրատվամիջոցների սոցիոլոգ Փոլ Լազարսֆելդը բացահայտել է, որ շատ մարդիկ տեղեկատվության ուղղակի սպառողներ չեն և անորոշության մեջ կողմնորոշվելու համար դիմում են որոշակի «մտքի առաջնորդների» կամ միջնորդների, այլ խոսքով՝ հեղինակությունների օգնությանը։ Տարբեր իրադրություններում և սոցիալական խմբերում որպես միջնորդներ կարող են հանդես գալ ոչ ֆորմալ առաջնորդները, քաղաքական գործիչները, կրոնական կազմակերպությունների ներկայացուցիչները, մշակույթի, գիտության, արվեստի գործիչները, զինվորականները, մարզիկները և այլն։ Հետևելով սոցիալական ցանցերում տարբեր մեկնաբանությունների տարածմանը, կարող ենք նկատել, որ որոշակի խմբերում կան առավել ակտիվ օգտատերեր, որոնք առավել հաճախ են արձագանքում տարբեր իրադարձություններին և որոնց դիրքո-

ռոշումները ավելի մեծ աջակցություն ունեն տվյալ խմբի օգտարերերի շրջանում: Ոչ պատահաբար այդ ակտիվ և հեղինակություն վայելող օգտատերերի մեծ մասը զբաղված է հենց տարբեր կարգի շահարկումներով:

Տեղեկատվության մեջ իր նախահակումների հաստատումը որոնող մարդը երկու ցուցիչ է փնտրում՝ նմանը և տարբերը: Որքան էլ բազմազան լինեն տեղեկություններն ու դրանց մեկնաբանությունները, նա դրանք խմբավորում է երկու խմբի մեջ՝ նմանների ու ոչ նմանների: Նմանները իր նախահակումները հաստատող մեկնաբանություններն են, ոչ նմանները՝ հակառակը: Այսինքն դրանք ոչ թե պարզապես տարբեր են, այլ հակադիր: Իր նախահակումների հաստատումը փնտրող մարդը հակված է տարբեր բաները իրար հակադրելուն: Նրա մտածողությունը դիխատոմիկ և հիարխիկ է՝ սա լավն է, նա վատն է, սա կարևոր է, նա՝ անկարևոր: Մտածողության այս առանձնահատկությունը բնականաբար չի կարող անտեսվել շահարկուների կողմից և իրենց շահարկումներում վերջիններս, ինչպես արդեն ցույց ենք տվել, օգտագործում են տարբեր երևույթները հակադրելու, իրար ստորակարգելու հնարքը:

Իր նախահակումները չհաստատող մեկնաբանություններին ու փաստերին առերեսվող մարդը մերժում է դրանք, ինչպես որ մերժում է իր վարքը չհավանողներին: Քանի որ ինքն իրեն անսխալական է համարում, իր ձախողումների պատճառը իր մեջ չի փնտրում: Մեղավորները միշտ ուրիշներն են: Իսկ հաջողության պատճառը իրենք են: Հոգեբաններն այդ երևույթը կոչում են *արտաքին լոկուս վերահսկողություն*: Որովհետև նման դիրքորոշում ունեցող մարդիկ փորձում են վերահսկել և փոփոխել արտաքին հանգամանքները, փոխարենը՝ իրենց փոխելու: Սա մի կողմից

հանգեցնում է ուրիշներին շահարկելու հակմանը, մյուս կողմից՝ սնապարծության դրսևորում լինելով, նպաստում է շահարկման ենթարկված լինելու վտանգին: Հենց սրա հետևանքում է, որ հաճախ շահարկվում են խմբային կարծրատիպերը՝ մի կողմից դրանց բացառիկությունն ու վեհությունը շեշտադրելով, մյուս կողմից հակառակորդի կերպարը նվաստացնելով:

Շահարկումների նկատմամբ պաշտպանվածությունը թուլացնող այլ գործոնները համապարփակ և հոգեբանական են: Ընթերցողին արդեն ծանոթ է անցած դարի 30-ականներին ԱՄՆ-ի Պրոպագանդայի ինստիտուտի կողմից մշակված «Պրոպագանդայի այբուբենը», որի առանցքային հնարքներից մեկը *ընդհանուր հարթակի պատրանքի* ստեղծումն էր: Այդ հնարքի միջոցով, ինչպես արդեն ասել ենք, տեղեկատվություն սպառողին փորձում են համոզել, որ նրա բոլոր ընկերները, հարևաններն արդեն ընտրել են առաջարկվող գաղափարը կամ թիմին ու, որ ինքը կարող է ուշանալ կամ մենակ մնալ, կամ ձեռքից բաց թողնել հաջողությունը: «Այբուբենի» ստեղծումից շուրջ երեք տասնամյակ անց ամերիկացի սոցիալական հոգեբան Սթենլի Միլգրամը մի փորձ իրականացրեց, որի ժամանակ բացահայտեց այսպես ասած՝ «ընդհանուր հարթակ» ձևավորելու մեխանիզմը: Նա Նյու Յորքի մարդաշատ փողոցներից մեկի մայթին կգնեցրեց մի ուսանողի, որը գլուխը թեքել և նայում էր հարևան շենքի 6 –րդ հարկի պատուհաններից մեկին, որի հետևում թաքնվել էին հետազոտական խմբի անդամները: Հաջորդ անգամ Միլգրամը մայթին նույն դիրքով կանգնեցրեց 2 ուսանողի, դրանից հետո՝ 5 ուսանողի, հետո՝ 10 ուսանողի: Հետազոտողների խումբը Ս. Միլգրամի գլխավորությամբ հետևում էր թե անցորդներից

քանի՞սն է կրկնում արհեստականորեն հավաքված ամբոխի վարքը։ Պարզվեց, որ մեկ ուսանողի դեպքում նրա վարքագիծը կրկնօրինակում է անցորդների ընդամենը 4 %-ը։ Երկու ուսանողի դեպքում միանում են անցորդների 10 %-ը։ 5 ուսանողներին միանում է անցորդների 16 %-ը, իսկ 10 ուսանողին՝ անցորդների 20%-ը։ Իսկ վերջին փորձի ժամանակ, երբ Միլգրամը դուրս բերեց 15 ուսանողների, նրանց վարքին հետևեցին անցորդների 40%-ը։ Այսինքն, որքան մեծ է կրկնօրինակման օբյեկտների քանակը, այնքան ավելի մեծանում է նրանց նմանակողների քանակը։

Ավագ սերնդի ընթերցողները երևի լավ են հիշում խորհրդային արտադրության «Երկուսն էլ սպիտակ են» ֆիլմը, որտեղ ներկայացվում էր աշակերտական տարիքի երեխաների շրջանում իրականացված ուշագրավ փորձը։ Երեխաներին ցույց էին տալիս երկու բուրգ՝ մեկը սպիտակ, մյուսը սև։ Փորձին մասնակից 4 երեխաներից 3-ի հետ հոգեբանը նախորոք պայմանավորվում էր, որ. «ի՞նչ գույն ունեն բուրգերը» հարցին պետք է բարձրաձայն պատասխանեին. «երկու բուրգերն էլ սպիտակ են»։ Այդուհետ հոգեբանները հետևելու էին, թե ինչ կպատասխանի չորրորդ՝ անտեղյակ երեխան։ Տարբեր խմբերի հետ այդ փորձի անցկացումը ցույց տվեց, որ մեծ մասամբ 4-րդ «անտեղյակ» երեխան համաձայնվում է իր ընկերների պնդման հետ, որ «երկուսն էլ սպիտակ են»։ Ինչպես, սակայն պարզվեց 4-րդ անտեղյակ երեխաների հետ հարցազրույցների արդյունքում, նրանք մեծմասամբ վստահ էին, որ բուրգերը տարբեր գույն ունեն, բայց չեն ցանկացել տարբերվել իրենց ընկերներից։ Ֆրանսիացի հոգեբան Գ. Լեբոնի կարծիքով, խմբին շահարկելն ավելի հեշտ է քան անհատին։ Որովհետև խմբում անհատները հակված են ուրիշներին կրկնօրինակելու։

Շահարկման առջև անպաշտպան դառնալու պատճառներից մյուսը մարդու՝ ներշնչանքի հակված լինելն է: Կարծիք կա, որ առավել ներշնչվող են այն մարդիկ, որոնք անինքնավստահ են, խուճապի մատնվող և արագ տպավորվող: Ըստ այդ կարծիքի՝ երեխաներն ավելի հակված են ներշնչվելու, քան մեծերը, կանայք ավելի տպավորվող են, քան տղամարդիկ և այլն: Սակայն կախված հոգեվիճակից, բոլոր մարդիկ կարող են հակված լինել ներշնչվելու: Օրինակ ընկճախտի, ծայրահեղ գրգռվածության, ուժեղ սթրեսի կամ գիտակցության կորստի վիճակներում բոլորս զգայուն ենք ներշնչանքի հանդեպ: Հատկապես նման իրավիճակներում արգելափակվում է մեր քննադատական մտածողությունը և մենք ապավինում ենք մեր զգացմունքներին ու ենթագիտակցականին, ինչից էլ կարող են օգտվել փորձառու շահարկուները:

Մարդու կարևոր հատկանիշներից մեկը արժանապատվության զգացողությունն է: Այն նաև մարդու կարևոր պահանջմունքներից մեկն է: Բոլորս ցանկանում ենք, որ մեզ հարգեն, որ չխաբեն, որ ճանաչեն մեր իրավունքները՝ անկախ այն հանգամանքից թե ինչից է բաղկացած մեր արժանապատվությունը կամ ինչպես են ձևակերպված մեր իրավունքները: Նույն զգացողությունը կարող է լինել խմբային: Օրինակ ազգի պատիվ, ազգի իրավունքներ: Նացիստներն, օրինակ գերմանացիների իրավունքն էին համարում մյուս ազգերին իշխելը: Ու, եթե շարունակ ինչ-որ անհատներ կամ լրատվամիջոցներ կրկնեն, որ մեզ խաբում են, որ մեր իրավունքները ոտնահարում են, կամ որ մեզ անարգում են, հնարավոր է, որ մենք անհանգստանանք այդ մըտքից, վիրավորվածության զգացողություն ունենանք և իհե-

տևանս պայքարի դուրս գանք՝ մեր իրավունքները իրացնելու, մեր նկատմամբ հարգանքը վերականգնելու համար։

Մարդու առաջնային պահանջմունքները, այնուամենայնիվ անվտանգության ու սննդի պահանջմունքներն են։ Սա իմանալով է, որ շահարկուները հաճախ մեզ վախեցնում են անխուսափելի պատերազմի և վերահաս սովի վրտանգով։ Այս, ինչպես և արժանապատվության շահարկման դեպքում, հաճախ անջատվում է քննադատական մտածողությունը, մենք դադարում ենք վերլուծել փաստերը և վախի ու խուճապի մեջ մեր ուշադրությունը կենտրոնանում է այն հուզական մեկնաբանությունների և տեսարանների վրա, որոնք մեզ ներկայացնում են շահարկողները։

Շահարկման կարևոր թիրախներից մեկը երախտագիտության զգացողությունն է։ Երախտագիտության արժանիների սանդղակում, գրեթե բոլոր մշակույթներում նրանք են, ովքեր իրենց կյանքը վտանգել կամ զոհաբերել են ուրիշների համար։ Հետևապես շահարկվող թեմաներում հերոսները սովորաբար առանցքային դերակատարություն ունեն։ Ինչպես ցույց ենք տվել շահարկման հնարքներում, շահարկուները հաճախ հորդորում են անարդարության, անիրավության փաստերը ստորակարգել իրենց պաշտպանյալների և հովանավորյալների հերոսական արարքներին։ Եվ նման կերպ չվարվողներին սպառնում են երախտամոռի և դավաճանի անուն պիտակելով։ Պարտքի զգացումը հաճախ շահարկվող հնարքներից է նաև միջանձնային հարաբերություններում։

Եվս մի համամարդկային բնույթ ունեցող զգացմունքի մասին, որը կարող է շահարկման թիրախ դառնալ ամենատարբեր հարաբերություններում։ Խոսքը վերաբերում է

խղճահարությանը կամ խղճի խայթին։ Մենք բոլորս մանկուց դաստիարակվում ենք, որ փոքրերին չպետք է ճնշել, սովածին պետք է կերակրել, հիվանդին պետք է խնամել, ծերերին պետք է օգնել և այլ խորհուրդներով։ Հիշենք «12 աթոռ» ֆիլմում մուրացկանություն անող հերոսին կամ «Երջանկության մեխանիկա» ֆիլմում՝ հիվանդանոցում հայտնված սիրահարին։ Երկուսում էլ շահարկվում է խըղճահարությունը։ Սկանդալների մեջ հայտնված քաղաքական, ռազմական գործիչները հաճախ են այդ հնարքին դիմում՝ իրենց հանկարծահաս կամ մերձավորներից թաքցըրած հիվանդությունների մասին բարձրաձայնելով, իսկ նրանց աջակիցների բանակը ապահովում է խղճահարության զգացումի զանգվածային շահարկումը։

Մի քանի խոսքով անդրադառնանք նաև շահարկողների մոտիվացիաներին, ինչը նույնպես կարող է օգտակար լինել այս ուղեցույցի հիմնական շահառուների համար։

Ամերիկացի հոգեբան և հոգեբուժ Է. Շոստրոմը, չցանկանալով «նոր հեծանիվ հորինել», իր ուսումնասիրություններից մեկում ներկայացրել է տարբեր հեղինակների հիմնավորումները՝ շահարկուների դրդապատճառների վերաբերյալ։ Օրինակ Ֆ. Փերլզի կարծիքով, շահարկման հակված լինելու պատճառը մարդու կոնֆլիկտն է ինքն իր հետ։ Ըստ Է. Ֆրոմի, պատճառը մարդկանց նկատմամբ անվստահությունն է և սիրելու անկարողությունը։ Էքզիստենցիալիստների կարծիքով, պատճառը բացարձակ անօգնականության զգացումն է։ Զ. Հեյլիի, Է. Բեռնի, Վ. Գլասերի կարծիքով, շահարկման դրդապատճառը միջանձնային սերտ կապերի նկատմամբ վախն է։ Ա. Էլիսի կարծիքով, պատճառը բոլորից և յուրաքանչյուրից ոչ քննադատական հավանություն ստանալու ձգտումն է։ Զ. Ֆրեյդը շահարկ-

ման դրդապատճառ է համարում՝ գործընկերների նկատմամբ սիմվոլիկ գերիշխանության (սուբլիմացիա) հասնելու ձգտումը, Ա. Ադլերը՝ իշխանության հասնելու կոմպենսատորական ձգտումը, Բ. Սքիները՝ սոցիալական հաջողության հասնելու և այն ամրապնդելու պարբերական պոզիտիվ հակումը: Վ. Ֆրանկլի համոզմամբ պատճառը կեղծ արժեքներ դավանող հասարակություններում անհատական իմաստային դատարկությունը պասիվ կերպով լցնելու ձգտումն է:

ՄԱՍ
ՉՈՐՐՈՐԴ

ՇԱՀԱՐԿՄԱՆ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՖԵՅՍԲՈՒՔ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՑԱՆՑՈՒՄ

Շահարկման մի քանի դրսևորումների առումով սոցիալական մեդիան՝ հանձին Ֆեյսբուք սոցիալական ցանցի, և ավանդական մեդիան՝ հանձինս լրատվական էլեկտրոնային կայքերի և տպագիր ու աուդիո-վիդեո միջոցների, իրարից շատ չեն տարբերվում: Ինչպես նկատում են ոլորտի փորձագետները՝ առավել հաճախ շահարկման ենթարկվող թեմաները երկու միջավայրերում էլ նույնն են՝ ազգային անվտանգության հիմնախնդիրներ, սեռական փոքրամասնությունների իրավունքներ, եկեղեցու դերի կարևորում: Կարող ենք հավելել նաև բարեկեցության մակարդակի բարձրացումը և արտագաղթի միտումների կըրճատումը: Այդ թեմաները, ըստ Գայանե Աբրահամյանի՝ առավել շահարկվողներն են շատ երկրներում (Ֆրանսիա, Ավստրիա, Շվեդիա և այլն): Ավանդական լրատվամիջոցներից շատերն այսօր իրենց օգտահաշիվներն ունեն Ֆեյսբուք սոցիալական ցանցում, որտեղ տեղադրում են նույն արտադրանքը, որը ստեղծում և տարածում են սոցիալական ցանցից դուրս գտնվող իրենց լրատվական միջոցներում: Բնականաբար, շահարկման շատ հնարքներ, որոնք օգտագործվում են Ֆեյսբուքից դուրս ստեղծված բովանդակություններում /կոնտենտ/, մեքենայաբար տեղափոխվում են նաև Ֆեյսբուք սոցիալական մեդիայի միջավայր:

Սոցիալական ցանցը շահարկումների ծավալը մեծացնելու, շահարկման ավելի շատ հնարքներ օգտագործելու, ինչպես նաև՝ շահարկումներն ավելի արագ տարածելու հնարավորություններ է ապահովում։ Ֆեյսբուք սոցիալական ցանցում իհայտ են գալիս նաև շահարկման նոր հնարքներ, որոնք բացակայում կամ գրեթե աննկատ են ավանդական լրատվամիջոցներում։

Շահարկումների ծավալի մեծացումը Ֆեյսբուք սոցիալական ցանցում պայմանավորված է մի շարք սահմանափակումների բացակայությամբ, որոնք առկա են ավանդական լրատվամիջոցներում և կարգավորվում են Զանգվածային լրատվության մասին ՀՀ օրենքով (2003թ.) և ներքին գրախոսության չափանիշներով։ Փորձագետներն այդպիսի սահմանափակումներ են դիտարկում տեղեկույթի բովանդակության մեջ ապատեղեկատվության, չփաստարկված տեղեկությունների, վարկաբեկման, բռնության կոչերի, խտրական քարոզչության համար պատասխանատվություն կրելը, դրանց բողոքարկման դեպքում՝ հերքում տեղադրելը։ Սրանք սկզբունքներ են, որոնք Ֆեյսբուք սոցիալական ցանցում չեն պահպանվում։ Մեծ մասամբ, իհարկե այն պատճառով, որ դրանց պահպանումը կապված է որոշակի դժվարությունների հետ։ Օրինակ՝ խտրականության քարոզ պարունակող գրառումը բողոքարկելու և հեռացնելու համար բավականին մեծ ջանքեր են պահանջվում. հատկապես հայալեզու գրառումների պարագայում, որոնց մեջ խտրականության առկայությունը ֆեյսբուքյան ալգորիթմը դժվարությամբ է նույնականացնում։ Մեդիա հետազոտող Ս. Մարտիրոսյանը դժգոհում է, որ, այնուամենայնիվ, մարդասիրական որևէ գրառում կամ գրառման հեղինակ օգտատերը կարող է հեռացվել Ֆեյս-

բուքից՝ մի քանի հարյուր այլ օգտատերերի՝ անհիմն ու զպարտող բողոքների արդյունքում։

Ֆեյսբուքում նաև զրոյանում է բովանդակություն ստեղծողի արհեստավարժության նկատմամբ պահանջը։ Ով ցանկանում է՝ գրում է, ինչ բառապաշարով և գրագիտությամբ ցանկանում է՝ գրում է։ Այստեղ գրեթե ջնջվում են լրագրողի և ոչ լրագրողի սահմանները։ Բոլորը դառնում են մեդիա բովանդակություն արտադրող։ «Ասպարեզ» ժուռնալիստների ակումբի նախագահ Լ. Բարսեղյանի դիտարկմամբ՝ ֆեյսբուքը մի մեծ լրատվական կայք է, որտեղ բոլորս գրում և աշխատում ենք Յուկեռի (Ֆեյսբուքի հիմնադիր Մարկ Յուկերբերգի-Ն.Մ.) մոտ։ Մշակութային մարդաբան Ա. Թադևոսյանի դիտարկմամբ՝ նախկինում լրագրողին կամ հոդվածագրին կարգավիճակ էր տալիս լրատվամիջոցը՝ իր հարթակում հրապարակվելու և կարծիք հնչեցնելու համար հնարավորություն ընձեռելով։ Իսկ այսօր Ֆեյսբուքը բոլորին է կարգավիճակ տալիս։ Ըստ իս, այդ հանգամանքով է պայմանավորված նաև այն, որ այսօր Ֆեյսբուքում պարբերաբար գրառումներ կատարող շատ օգտատերեր ավելի հայտնի են, քան ավանդական լրատվամիջոցներում փաստարկված և համակողմանի վերլուծականներով հանդես եկող փորձառու հոդվածագիրները։

Մեկ այլ խնդիր է կոնկրետ դեպքերում տեղեկույթի բովանդակությունն ու դրա աղբյուրը ստուգելու, ինչպես նաև այն հղելու հնարավորության բացակայությունը, ինչը բացառվում է ավանդական լրատվամիջոցների պարագայում։ Ֆեյսբուքյան գրառումները կարող են բազմիցս խմբագրվել կամ օգտատերերի կամքով հեռացվել իրենց էջերից։ Նման դեպքերում կատարվածը ամրագրելու կամ բողոքարկելու այլ տարբերակ չի մնում, քան, օգտատերերի էջերում տե-

ղադրված նյութերը հընթացս լուսանկարելը (սքրինշոթ), ինչը, միշտ չէ, որ արվում է։ Մյուս կողմից, ինչպես քաղաքագետ Էդգար Վարդանյանն է կարծում՝ Ֆեյսբուքում շահարկումը մեծ ծավալ ունի, որովհետև ենթակա չէ հանրային այնպիսի վերահսկողության, ինչպես ավանդական մեդիայի պարագայում է։

Ավանդական և սոցցանցային մեդիայի տարբերություններից մյուսը Ֆեյսբուքի օգտատերերի՝ բախումների նկատմամբ ծայրահեղ զգայունակ լինելն է։ Այստեղ շահարկումներն արագ արձագանքման, նաև օգտատերերի պրոֆիլների արագ նույնականացման շնորհիվ, հրահրում են հաճախակի և ծայրահեղ բախումներ, որոնց շարունակությունը երբեմն տեղափոխվում է իրական տարածք։ «Փաստերի ստուգման հարթակի» փորձագետ Հ. Նազարեթյանի պատկերավոր դիտարկմամբ՝ «Ֆեյսբուքում բախումներն ավելի հաճախ ու առանց ձեռնոցի են։ Իսկ լրատվական կայքերում բախումները ձեռնոցներով են»։

Ֆեյսբուքի վերոհիշյալ «անսահմանափակությունները» իրենց հերթին հակադարձ կերպով ազդում են ավանդական լրատվամիջոցների բովանդակության վրա։ Դա տեղի է ունենում երկու եղանակով՝ անուղղակի և ուղղակի։ Նախ՝ ընդհանուր մեդիա տիրույթում Ֆեյսբուքը գնալով ավելի մեծ հեղինակություն և ազդեցություն է ձեռք բերում, և իրադարձությունների ու դրանց մեկնաբանությունների զգալի մասին լսարանը ծանոթանում է հիմնականում սոցիալական ցանցի միջոցով։ Այդ միտումը հաշվի առնելով՝ ավանդական լրատվամիջոցներն իրենց օգտահաշիվներն են ստեղծում Ֆեյսբուքում։ Իսկ որոշ լրատվամիջոցներ (փորձագետներից ոմանք դրանց կոչում են «սունկ» լրատվամի-

ջոցներ, ուրիշները՝ «ֆեյք» լրատվամիջոցներ կամ պայմանական լրատվամիջոցներ) հիմնվում են հենց Ֆեյսբուքում:

Ավանդական լրատվամիջոցների սկզբունքների ու բովանդակության վրա Ֆեյսբուքի ուղղակի ազդեցությունն ակնառու է հետևյալ միտման մեջ. գնալով ավելի մեծանում է ավանդական այն լրատվամիջոցերի թիվը, որոնք իրենց բովանդակության մեջ ներառում են ֆեյսբուքյան գրառումները և Ֆեյսբուքում ծավալվող իրադարձությունները: Օգտվելով այս միտման առավելություններից, որոշ լրատվական կայքեր իրենց քարոզչական քաղաքականությունն առավել արդյունավետ դարձնելու նպատակով՝ իրենց մեդիա բովանդակությունը ստեղծում են Ֆեյսբուք սոցիալական ցանցում՝ տարբեր հոդվածագիր օգտատերերին պատվեր իջեցնելով, իսկ հետո այդ բովանդակությունը տեղափոխում են իրենց լրատվական կայքերի էջեր: Հենց այդ միտումը նկատի ունենալով՝ մեդիա փորձագետ Գոռ Մադոյանը պնդում է, որ այսօր լրատվական տարբեր կայքեր դարձել են Ֆեսյբուքի «տրանսլյատորներ»: Ֆեյսբուքի բովանդակության փոխանցմամբ զբաղվող լրատվական կայքերն այսօր հաճախ ավելի մեծ լսարան ունեն, քան տակավին ավանդական սահմանափակումներով առաջնորդվող լրատվական կայքերը: Օրինակ՝ «blognews.am»-ը Ֆեյսբուքում ունի շուրջ 500.000 –ի հասնող հետևորդներ, այն դեպքում, երբ «hetq.am»-ի բաժանորդների թիվը չի հասնում 200.000-ի, իսկ հետխորհրդային Հայաստանում հիմնադրված ամենահին լրագրերից մեկի՝ «Առավոտի» օգտահաշվի («aravot.am»-ի) հետևորդների թիվը հազիվ մոտենում է 260.000-ի սահմանին:

Ֆեյսբուքի ընձեռած այս հնարավորությունները հաշվի առնելով՝ տարբեր կազմակերպություններ և օգտատերեր

սոցիալական այս ցանցում հայտնի դարձած օգտահաշիվներ են գնում և իրենց հրապարակումները տարածումմ դրանց միջոցով: Օրինակ՝ վերջերս գնվել էր «Պարույր Սևակ» օգտահաշիվը: Բայց, քանի որ անունը և բովանդակությունը կտրուկ փոխել Ֆեյսբուքը չի թույլատրում, գնորդն այն վերանվանվել էր՝ «Պարույր Սևակ նյուզ»: Ֆեյսբուքյան որոշ օգտատերեր երկու էջ են պահում՝ պրոֆիլն ու նոր բացված էջը, որոնցում կիսում են իրենց գրառումները՝ այդպիսով ապահովելով գրառումների առավել լայն տարածում: Մյուս կողմից՝ հայտնի օգտատերերի անուններով բացվում են բազմաթիվ ֆեյք էջեր, որոնցում լրիվ հակառակ բովանդակությամբ և հակաքարոզչություն պարունակող տեղեկություններ են տարածվում: Օրինակ՝ «Դուխով Հայաստան» օգտատերն իր էջում տարածել էր բռնություն իրականացնելու կոչեր, ինչը բարեբախտաբար հեռացվել էր՝ Ֆեյսբուքի ղեկավարությանը՝ «Փաստերի ստուգման հարթակի» կողմից ուղղված բողոքների հետևանքում: Ս. Մարտիրոսյանը ուշադրություն է հրավիրում այն հանգամանքի վրա, որ այսօր որոշ օգտատերեր վաճառում են իրենց օգտահաշիվները, ինչի ականատեսն է եղել «list.am»-ում տեղադրված մի քանի հայտարարությունների օրինակով: Անշուշտ, չի բացառվում, որ այդ օգտահաշիվները նույնպես կարող են դառնալ շահարկումների ու հակաքարոզչության հարթակներ: Ֆեյսբուքում շահարկումների տարածման համար նոր հարթակներ ստեղծելու եղանակներից մեկն էլ՝ պարզ գաղտնաբառեր ունեցող օգտահաշիվները կոտրելն է, ինչն իրականացում են ինչպես ներքին, այնպես էլ արտաքին հաքերները: Ս. Մարտիրոսյանը նշում է, որ ազերի հաքերները վերջերս հայ օգտատերերի կոտրած օգտահաշիվների՝ շուրջ 10000–ի հասնող ցանկ(եր) են հրապարակել:

Անհերքելի փաստ է, որ սոցիալական ցանցերի հայտնըվելով՝ մի կողմից ավելի հասանելի է դարձել տեղեկատվությունը, մյուս կողմից գրեթե անհնար է դարձել դրանից խուսափելը։ Ցանկացած ժամի ֆեյսբուքյան մեր էջը մտնելիս՝ անկախ մեր կամքից առերեսվում եք տարբեր տեղեկություն-ների, որոնցով հագեցած է մեր լրահոսը։ Ընդ որում, որոշներն ավելի հաճախ են հայտնվում, քան՝ մյուսները։ Դեռ երկու տասնամյակ առաջ, մեր երկրում տեղի ունեցող տարբեր իրադարձությունների մասին հնարավոր էր տեղեկանալ ֆորմալ տեղեկատվական աղբյուրներից (հեռուստաալիքներ, տպագիր ու էլեկտրոնային թերթեր)՝ դրանց հայտնվելուն սպասելով, համացանցում դրանց դոմենները որոնելով կամ տեղեկատվության դիմաց վճարելով։ Ընդորում, քաղաքական, տնտեսական, սպորտային և այլ տեղեկություններն այդտեղ հաճախ դասակարգված էին կա՛մ առանձին էջերում, կա՛մ կոնկրետ եթերաժամերի մեջ։ Ֆեյսբուքյան լրահոսում այդ ամենը հայտնըվում է քաոտիկ կերպով և մեր էջը վերածվում է երկարաձիգ հիպերտեքստի։

Ֆեյսբուքում ավանդական լրատվամիջոցների կողմից մատուցվող տեղեկություններին ավելանում են առանձին օգտատերերի ծավալուն գրառումները, որոնք հաճախ պարզապես արտատպվում կամ վերարտադրվում են (այդ թվում ֆեյսբուքյան լայվերը) տարբեր տրանսլյատոր լրատվական կայքերի էջերում և կրկին վերադառնում են ֆեյսբուքյան լրահոս՝ աննշան փոփոխություններով։ Ֆեյսբուքն այսօր վերածվել է մի ահռելի լրահոսային միջավայրի։ Այս իրողության պայմաններում շահարկումները նույնականացնելն ավելի է բարդանում։ Մարդիկ հաճախ չեն հասցնում խորանալ իրենց յուրացրած տեղեկությունների

մեջ։ Նրանց խնդիրը կարծես կամա-ակամա ավելի շատ բաների մասին իմանալն է և ոչ թե՝ «ինչո՞ւ են դրանք տեղի ունեցել» կամ «առհասարակ տեղի ունեցե՞լ են, թե՞ ոչ» հարցերի պատասխաններն ստանալը։

«Փաստերի ստուգման հարթակի» փորձագետ Սևադա Ղազարյանը շահարկումների՝ այսօր նկատվող կտրուկ աճը բացատրում է Ֆեյսբուքի միջոցով երկիրը կառավարելու միտումով։ Քաղաքական իշխանության ներկայացուցիչներն ավելի հաճախ լսարանին դիմում են ոչ թե հեռուստատեսության կամ ավանդական այլ լրատվամիջոցների օգնությամբ, այլ ֆեյսբուքյան լայվերի ու գրառումների միջոցով։ Մյուս կարևոր գործոնը ըստ Ս. Ղազարյանի՝ տեղեկությանը հրապարակայնորեն արագ արձագանքելու հնարավորությունն է, որը ավանդական լրատվամիջոցների տիրապետության ժամանակներում կարող էր օրեր տևել։ Երրորդ գործոնը շատերիս համար՝ Ֆեյսբուքը ողջ լրատվական դաշտի հետ նույականացնելն է։ Ֆեյսբուքյան օգտատերերի ստվար մասն իրենց անհրաժեշտ տեղեկությունների 90 տոկոսից ավելին այսօր ստանում է Ֆեյսբուքից։ Կամ դրանց գտնվելու վայրի մասին իմանում է Ֆեյսբուքում տեղադրված էլեկտրոնային հասցեներից։

Չնայած, գրեթե բոլոր ֆորմալ և ոչ ֆորմալ լրատվական կայքերն իրենց օգտահաշիվներն ունեն Ֆեյսբուք սոցիալական ցանցում և գովազդի նշումներով տարածում են իրենց հրապարակումները, այնուամենայնիվ, դրանց առավել ինտենսիվ տարածումն ապահովում են առանձին օգտատերերը։ Շատերը լրատվական նորություններին ծանոթանում են իրենց ընկերների էջերում տեղադրված հրապարակումներից։ Հատկապես այն օգտատերերի շնորհիվ, որոնք իրենց պատերին կիսված նյութերին տալիս են

ծավալուն մեկնաբանություններ։ Այդ օգտատերերը, կարծես, որոշակի իմաստով հանդես են գալիս որպես տվյալ հրապարակումների ցենզորներ։ Նրանց հետևելով է, որ օգտատերերի մի մասը կողմնորոշվում է, թե որ աղբյուրի, որ հրապարակումներն են արժեքավոր, որին արժե ծանոթանալ և որին՝ ոչ։ Հետևորդ օգտատերերից ոմանք պարզապես չեն էլ ծանոթանում կիսված նյութերի բովանդակությանը, այլ՝ բավարարվում են դրանց վերաբերյալ իրենց ակտիվ օգտատեր ընկերոջ մեկնաբանություններով։ Օգտագործելով ամերիկացի սոցիոլոգ Փ. Լազարսֆելդի հայտնի ձևակերպումը՝ կարելի է ասել, որ այդ օգտատերերը «*մտքի առաջնորդներ*» են, որոնք պարզապես տեղափոխվել են վիրտուալ սոցիալական ցանց և ավելի հասանելի դարձել առաջին աղբյուրից տեղեկություններին ծանոթանալու հակում կամ ժամանակ չունեցող, կամ դրանցից դժվարությամբ գլուխ հանող մարդկանց համար։

Վիրտուալ սոցիալական ցանցում նման «մտքի առաջնորդների» հեղինակությունն ավելի ազդեցիկ է դառնում ոչ միայն նրանց առավել տեղեկացված լինելու և համոզիչ մեկնաբանություններ ներկայացնելու կարողությամբ պայմանավորված, այլև այն տեխնիկական հնարավորությունների շնորհիվ, որոնք ընձեռում է Ֆեյսբուքը։ Խոսքն ի մասնավորի՝ գրառումներն ու տեղադրված նյութերը հավանության արժանացնելու և կիսելու հնարավորության մասին է։ Գրառումների տակ «լայքերի» և «շեյրերի» քանակի մասին ամրագրվող նշումները ֆեյսբուքյան հայալեզու շատ օգտատերերի համար կարևոր ցուցիչներ են՝ գրառման պարունակությանը վստահելու և դրա հեղինակի հանդեպ որոշակի ակնածանք ձևավորելու առումով։ Սա իր հերթին նպաստում է մեկնաբանության մեջ ասվածի

նկատմամբ վստահության աճին: Բնականաբար, հաճախ այդ հանգամանքի գիտակցումը «մտքի առաջնորդներն» օգտագործում են հավանումների ու կիսումների քանակն արհեստական ճանապարհով ավելացնելու համար: Գործի են դրվում ֆեյք օգտատերեր ստեղծելու, համախոհների օգնությանը դիմելու և այլ խորամանկ միջոցներ: Այդ հնարքները, իլրումն ասվածի, նպաստում է մեծամասնության մաս կազմելու կամ «ընդհանուր վագոնում» հայտնվել ցանկացող՝ անտեղյակ և քննադատական մոտեցում չունեցող հետևորդների թվաճին:

«Մտքի առաջնորդներին» նույնականացնելու կարևոր ցուցիչներից մեկը՝ նրանց մեծ մասի օգտահաշիվների էջերի անարգել հասանելիությունն է: Բոլոր ցանկություն ունեցողները կարող են հետևել նրանց գրառումներին՝ առանց նրանց օգտահաշիվների հետ ընկերանալու: Մյուս կարևոր ցուցիչն այն է, որ «մտքի առաջնորդները» սովորաբար չեն արձագանքում իրենց գրառման տակ արվող մեկնաբանություններին (քոմենթներին), հազվադեպ են բանավեճի մեջ մտնում հակառակը պնդող կամ գրառման հիմնավորվածությունը կասկածի տակ առնող օգտատերերի հետ: Պատճառը թվում է պարզ է՝ շահարկուների նպատակը ամեն կերպ իրենց ուղերձները տարածելն է, այլ ոչ թե դրանց հիմնավորվածությունը վերանայելը: Հոգեբաններն, ի դեպ, նշում են, որ շահարկուների անքակտելի հատկանիշներ են հանդիսանում՝ իրենց անսխալական և անփոփոխելի համարելը:

Մեդիա հետազոտողների (Ռ. Աֆրիկյան, Ս. Մարտիրոսյան) կարծիքով՝ Ֆեյսբուքում մենք գտնվում ենք «տեղեկատվական փուչիկի» մեջ: Ֆեյսբուքյան ալգորիթմն է որոշում, թե ինչ տեղեկություն պետք է տեսնենք, երբ

պարզապես վերուվար ենք անում մեր էջի լրահոսով: Յուրաքանչյուրիս «փուչիկը» տարբերվում է մյուսներից և ինչ-որ առումով հերմետիկ է: Ճիշտ է, մեր էջի լրահոսի բովանդակությունը հաճախ պայմանավորված է նրանով, թե ինչ էջեր ենք առավել հաճախ այցելում, որքան հաճախ ենք դրանք հավանում կամ կիսվում: Է. Վարդանյանի կարծիքով՝ մեզ համար ոչ ցանկալի խմբերում հայտնվելու պատճառներից մեկը՝ ամեն ինչ հավանելը կամ բացելն է: Սակայն մեր լրահոսում հայտնվում են նաև տեղեկություններ, որոնցով մենք անմիջականորեն հետաքրքրված չենք: Ինչպես, օրինակ, գովազդային նշումով քաղաքական, տնտեսական, կրթական, սպորտային, իրավական տարբեր բնույթի տեղեկությունները: Մյուս կողմից, ըստ Ս. Մարտիրոսյանի դիտարկման՝ մենք կարող ենք հավանել 10 էջ, բայց մեր լրահոսում դրանցից կհայտնվեն ընդամենը երկուսի հրապարակումները: Այսինքն, մյուս 8 կայքերի առավել կարևոր հրապարակումները դուրս են մնում մեր լրահոսից: Բացի այդ, մեր ընկեր օգտատերերի գրառումներից մեր լրահոսում հայտնվելու առավել մեծ հավանականություն ունեն այնպիսիք, որոնք ավելի երկար են շարադրված և ունեն լուսանկարի կցում: Բնականաբար, այս նրբությանը ծանոթ են շահարկու օգտարերերից շատերը և վերջիններս այն օգտագործում են իրենց ուղերձներն ավելի մեծ թվով օգտատերերի էջերին տարածելու համար:

Որքանո՞վ է մտահոգող այս ամենը: Ինչպե՞ս է հնարավոր կասեցնել շահարկումների այն ալիքը, որը տարածվում է Ֆեյսբուք սոցիալական ցանցի միջոցով և կլանում նորանոր օգտատերերի:

Լ. Բարսեղյանի կարծիքով՝ շահարկումները Ֆեյսբուքում տեղի են ունենում բաց դաշտում, հետևապես, դրանք

սարսափելի չեն։ Դրանք կարճատև կյանք ունեն և չեն հասցնում շատ մեծ ազդեցություն ունենալ։ Սարսափելի կլիներ, եթե լրատվական դաշտը փակ լիներ ու ենթարկված լիներ մեկ քարոզչական ուժի, ինչպես օրինակ ժամանակին նացիստական Գերմանիայում, երբ ողջ լրատվությունը կառավարվում էր մեկ մարդու՝ Պ. Գեբելսի կողմից։ Սարսափելի կլինի, եթե համացանցն անջատվի և մարդիկ մնան ասեկոսեների հույսին։ Ս. Մարտիրոսյանը նկատում է, սակայն, որ Ֆեյսբուքը մի տարածք է, որտեղ հաղթում են «զոռբաներն» ու շատ փող ունեցողները։ Նրանք կարող են ավելի շատ բովանդակություններ (կոնտենտ) տեղադրել և տարածել, ինչը կարող է վտանգավոր լինել։ Դա կասեցնելու օրինական միջոցները գրեթե բացակայում են։ Շահարկումներից խուսափելու միակ միջոցը մնում է քաղաքացիների շրջանում մեդիագրագիտության մակարդակի բարձրացումը։ Սա հնարավոր է իրականացնել՝ մի կողմից դպրոցական ու բուհական դասընթացների, մյուս կողմից՝ կարճ տեսանյութեր պատրաստելու միջոցով, որոնցում կբացահայտվեն լրատվության նպատակները, գործառույթները և մեխանիկան։

Մեդիա փորձագետներից ոմանք, այնուամենայնիվ, համարում են, որ մեդիագրագիտության մակարդակի բարձրացումը բավարար պայման չէ շահարկումների ազդեցությունը նվազեցնելու համար։ Գ. Աբրահամյանը բերում է Ֆրանսիայի փորձը, որտեղ դեռ անցած դարի 70-ական թթ. դպրոցներում մտցվել են Մեդիագրագիտության դասաժամեր, որոնք, սակայն, սպասվելիք արդյունքներ չեն ապահովել։ Գ. Աբրահամյանի կարծիքով՝ բացի մեդիագրագիտությունից, դպրոցներում անհրաժեշտ է խրախուսել քննադատական մտածողությունը։ Ս. Մարտիրոսյանը,

համավարակով պայմանավորված՝ մարդկանց չիպավորելուն վերաբերող շահարկումների տարածումը նկատի ունենալով՝ կարևոր է համարում նաև դպրոցներում Կենսաբանություն և Ֆիզիկա առարկաների պատշաճ ուսուցումն ու յուրացումը: Լ. Բարսեղյանը կարծում է, որ շատ օգտակար կարող է լինել նաև դպրոցներում Տրամաբանություն առարկայի դասավանդումը: Գ. Մադոյանի կարծիքով՝ մեդիագրագիտությունից առաջ աշակերտներին նախ պետք է լեզվի մեխանիկան սովորեցնել, որպեսզի լավ իմանան լեզվի հնարավորությունները:

Է. Վարդանյանը համոզված է, որ մեդիագրագիտությունից բացի կարևոր է «ագրեսիվ» կերպով որակյալ տեղեկատվության ապահովումը. «Չպետք է ենթարկվել շուկայի թելադրանքին և սպասել, որ ամեն ինչ ինքն իրեն կկարգավորվի: Ադամ Սմիթի նշած «անտեսանելի ձեռքը» պետք է «տեսանելի» դարձնել և «գործի դնել»: Գ. Մադոյանը հիշեցնում է, որ պետությունն ինքն է լրատվության առիթ ստեղծողը, հետևապես, պետք է նախաձեռնող ու ոչ թե արձագանքող լինի: Դա նշանակում է նաև, որ պետությունը պետք է հղի իրեն և ոչ թե դեղին սկզբնաղբյուրներ, ինչպես երբեմն տեսնում ենք մեր օրերում:

Մեդիափորձագետ Արտակ Համբարձումյանը շահարկումներից խուսափելու և որակյալ տեղեկատվության պահանջարկ ձևավորելու անհրաժեշտ պայմաններ է համարում ավանդական լրատվամիջոցների հեղինակության բարձրացումը և մեդիա դաշտի կայացումը, ինչում պետական հաստատությունները կարող են կարևոր դերակատարում ունենալ: Նրա կարծիքով՝ Ֆեյսբուքում վերահսկողություն իրականացնելը դժվար է և շատ զարգացած երկրներ (ԱՄՆ, Մեծ Բրիտանիա, Ֆրանսիա) տակավին չունեն բա-

վարար գործիքներ՝ այն վերահսկելու համար։ Համամիտ լինելով այդ կարծիքի հետ՝ Ա. Թադևոսյանը հավելում է, որ որոշակի ջանքեր պետք է գործադրել Ֆեյսբուքի հեղինակությունը գցելու ուղղությամբ։ Նրա դիտարկմամբ՝ հիմա լուրջ և հիմնավորված խոսքը Ֆեյսբուքից տեղափոխվում է Թվիթեր։ Այս առիթով պետք է հիշենք 6-8 տարի առաջ Ֆեյսբուք սոցիալական ցանցում տարածված խուճապը՝ Օդնոկլասնիկի սոցիալական ցանցի օգտատերերի՝ զանգվածաբար Ֆեյսբուք տեղափոխվելու հետ կապված, ինչն ուղեկցվում էր՝ Ֆեյսբուքն անլուրջ տարածքի վերածելու մասին մտահոգություններով։ Այդ մտահոգությունները, ինչպես հետագայում պարզվեց, մեծ մասամբ հիմնավորված էին։ Սակայն, ներկայումս Ֆեյսբուքում շահարկումների և կենցաղային մակարդակի կոնտենտի հայտնվելը միայն այդ հանգամանքով չի պայմանավորված։ Դրա համար նաև այլ պատճառներ կան. Վերջին տարիներին Ֆեյսբուքի տեխնիկական հնարավորությունների ընդլայնումը, ալգորիթմային փոփոխությունները, մեծ թվով նոր լրատվամիջոցների հանդես գալը։ Ինչպես նաև, հայալեզու Ֆեյսբուքում՝ Թավշյա հեղափոխության հետևանքով տեղի ունեցած քաղաքական վերադասավորումները, հանրության հետ հաղորդակցվելու մշակույթի փոփոխությունը։ Այդ ամենը Ֆեյսբուքը վերածել են հանրության հետ հաղորդակցվելու գլխավոր ուղեփողի։

«Փաստերի ստուգման հարթակի» (ՓՍՀ) խմբագիր Անի Գրիգորյանը, հղելով մի շարք երկրներում՝ Ֆեյսբուք սոցիալական ցանցում բռնությանն ու խտրականությանը վերաբերող բովանդակությամբ նյութերը հեռացնելու գործում փաստերի ստուգմամբ (factcheking) զբաղվող տեղական մասնաճյուղերի գործունեությանը, կարևոր է համարում

այդ համակարգին հայաստանյան ներկայացուցիչների մասնակցությունը։ Քանի որ ֆեյսբուքյան ներկայիս ալգորիթմը դժվար է գլուխ հանում հայալեզու բովանդակություններից։ Նա նաև կարևորում է ՀՀ մարզերում ու տարբեր տարիքային խմբերում մեդիագրագիտության կարճատև դասընթացների անցկացումը, որը ՓՍՀ-ն իրականացնում է վերջին տարիներին։

Ֆեյսբուք սոցիալական ցանցում շահարկման տարբեր դրսևորումների տարածումը սահմանափակելու և դրանց ազդեցությունը թուլացնելու առումով, անշուշտ ինստիտուցիոնալ տարբեր մակարդակներում (պետական մարմիններ, Ֆեյսբուքի տնօրինություն, համագործակցող կազմակերպություններ) վերահսկողության մեծացումը և ավանդական լրատվամիջոցների դերի բարձրացումը կարող են որոշակի բարերար ներգործություն ունենալ։ Նմանապես՝ կարևոր նշանակություն կարող է ունենալ տարբեր մակարդակներում (հանրակրթական, ոչ ֆորմալ դասընթացների, հեռուստա և ռադիո հաղորդումների) մեդիագրագիտության և օժանդակ (լեզու, տրամաբանություն, կենսաբանություն, ֆիզիկա, հոգեբանություն) դասընթացների կազմակերպումը։ Սակայն, ժամանակակից հասարակությունների կյանքում վիրտուալ սոցիալական ցանցերի դերի մեծացումը մի կողմից, և դրանց տեխնիկական հնարավորությունների հարստացումը մյուս կողմից, նպաստում են շահարկման նորանոր հնարքների կիրառմանը և դրանք տարածելու բազմահնար եղանակների ստեղծմանը։ Վաղուց նշմարվող այդ միտումները արագ արձագանքման միջոցառումներ են ենթադրում, որոնք ծանրաշարժ հաստատությունները հաճախ ի վիճակի չեն ապահովել։ Անհրաժեշտ են շահարկման նոր հնարքների և շահարկող

նոր սուբյեկտների հայտնվելու վերաբերյալ ցանցային օգտատերերին պարբերաբար ծանուցող ազդագրեր և վերլուծություններ, որոնցում կբացահայտվեն շահարկումը նույնականացնող նորահայտ ցուցիչները, շահարկման թիրախները և շահարկման ակնկալելի հետևանքները։

ԹԵՍՏԱՅԻՆ ՏԵՔՍՏԵՐ

Օգտվելով ուղեցույցում առաջարկվող հնարքների վերլուծված օրինակներից, սևեռման կետերից և շահարկումը պայմանավորող այլ գործոնների նկարագրությունից, փորձեք պարզել թե շահարկման ինչպիսի հնարքներ են օգտագործվում ներքոբերյալ տեքստերում:

* * * * *

Օգտատեր Գևորգ Աճեմյանը 30.04.2020թ իր ֆեյսբուքյան էջում գրում է.

> Լավ լուր հատկապես ամուլսարցիներիս համար՝ Ավինյանը հենց նոր ազատվեց աշխատանքից: Ինտրիգը պահելու համար չեմ ասի տեղն ով է լինելու: Մի քանի օրից կամ արտակարգ իրավիճակի պրծնելուն պես լուրը պաշտոնապես կճպցնեն կառավարության կայքում: :)

* * * * *

10.05.2020թ. Live News օգտահաշիվը իր ֆեյսբուքյան էջում ինֆորմացիա է տեղադրում, որը գրառվել է օգտատեր Գրիգոր Գասպարյանի կողմից՝ 03.03.2020թ.

> 2019 թվականին դեկտեմբերին Չինաստանի իշխանությունը հայտարարեց Ուհան քաղաքում անհայտ ծագման վարակի տարածման մասին: Հստակեցվեց՝ հիվանդության հարուցիչը նոր տեսակի կորոնավիրուսն է:
>
> Ենթադրվում է, որ վարակը մարդկանց է փոխանցվել վայրի կենդանիներից: Գիտականորեն ապացուցվել է, որ փոխանցման հիմնական գործոն են դարձել թեթև նախուտեստները, մասնավորապես՝ ծովամթերքից ու օձից պատրաստված: Հունվարի 30–ի դրությամբ Չինաստանում ավելի քան 7771 մարդ է վարակվել կորոնավիրուսով, գրանցվել է կյանքից հեռացման 170 դեպք:

ՀՀ արտաքին գործերի նախարարությունը, ՉԺՀ-ում ՀՀ դեսպանությունը, ՀՀ առողջապահության նախարարությունը ու ոլորտի մասնագիտացված մարմինները շարունակաբար հետևում են իրավիճակի զարգացմանը: Նրանք կապի մեջ են միջազգային կազմակերպությունների, ինչպես նույնպես Չինաստանի իշխանությունների ու ուրիշ գործընկեր երկրների հետ: Իրականացվում է անհրաժեշտ տեղեկատվության փոխանակում:

Անդրադառնալով այս թեմային, Սիրված հաղորդավար Գրիգոր Գասպարյանն իր ֆեյսբուքյան էջում գրել է՝

«2 ամիս է ֆբ-ից դուրս էի եկել և երջանիկ ապրում էի: բայց այժմ եկել եմ ասեմ՝ Գերշահույթ ստանալու նպատակով բժշկական դիմակ արտասահման արտահանած տականքներ ՝ դուք պոռնիկ եք:

6 հիվանդ չինացու հետ մի լիֆտում մնաք: Քֆուր չեմ տալիս՝ սակայն ֆանտազիաներդ աշխատացրեք և պատկերացրեք: առավոտից 20 դեղա-տուն մտա՝ 1 հատիկ դիմակ չկա: ԱԱԾ-ն ձեզանով պարտադիր պետք է զբաղվի՝ ազգային անվտանգությանը 2 կոպեկի համար վնաս տվող խոզեր: ազգի դավաճաններ: ձեր թուրք մամային բարեվներ»

* * * * *

12.05.2020թ. Ա. Աշոտյանը ֆեյսբուքյան իր էջում գրում է.

Ես ունեմ տեղեկություններ, որ Եվրոպական խորհրդարանում հիմա սեղանին դրված է մի զեկույցի նախագիծ, որը կոչվում է «Արևելյան գործընկերության գագաթնաժողովին ընդառաջ», որտեղ, ի տարբերություն նախորդ տարիների, բացառապես շեշտված է Ալգ անդամ երկրների տարածքային ամբողջականությունն՝ իրենց միջազգայնորեն ճանաչված սահմաններով: Ես հիմա, ահազանգում եմ, որ աղջիկներ և տղաներ, պարգևավճարներ ըմբոշխնող և ընդդիմադիրների վրա մատ թափ տվող կիսագրագետ պատգամավորական կորպուս, ասեմ ձեզ հիմա, եթե չգիտեք, որ Բրյուսելում դրված է այդ զեկույցի նախագիծը:

* * * * *

10.05.2020թ. Նարեկ Մալյանը իր ֆեյսբուքյան էջում գրառել է.

Կարճ ասեմ կապիտուլյացիայի ժամկետը և պայմանները.

1. Ցեղասպանության թանգարանի սորոսական տնօրենի հրաժարական:
2. Ցեղասպանության թանգարանի սորոսական տնօրենի դստեր՝ Արփենիկ Մարությանի ավագանուց հրաժարական:
3. Ցեղասպանության թանգարան հիմնադրամից սորոսական Հրանուշ Խառատյանի հրաժարական:
4. Թուրք ժողովրդի մեծ բարեկամ Գանդիի արձանի Երևանում տեղադրման չեղարկում:

Պահանջների կատարման ժամկետ 13.05.2020թ

Պահանջների բոլոր կետերը նշված ժամկետում չկատարելու դեպքում իմ հետագա գործողությունների ամբողջ պատասխանատվությունը մնում է փողով թուրք ներողների, ցեղասպանության զոհերի արյունը թուրքերին վաճառողների վրա: Նեղանալ չլինի, մերումանուկ եմ անելու առանց խղճի խայթի:

Ժամանակը գնաց!!!!

* * * * *

11.05.2020թ. Ն. Մալյանն իր ֆեյսբուքյան էջում գրառել է.

Իշխանությունը զավթած օլիգարխ Սորոսի վարձկանները, թուրք ներողները երեկվանից վայնասուն են բարձրացրել պահանջելով ինձ անհապաղ բանտարկել, քանի որ ես բարձրացնում եմ Ցեղասպանության թանգարանում իշխանության վերին օղակներից ղեկավարվող թուրքասիրությունը: Հանրությանը տեղեկացնում եմ, որ իշխանության վերին էշելոններում կա որոշում Թուրքիային ազատել հայ պահանջատիրության անհարմարություններից:

Հայկական ազգանունով թուրք ներողները պահանջում են ինձ բանտարկել: Ես համաձայն եմ նրանց հետ: Ցույց տվեք իմ բանտախուցը ես կամավոր կգնամ բանտարկվելու: Ես հրաժարվում եմ համակերպվել այն փաստի հետ, որ մեր հայրենակիցների 105 տարվա պահանջատիրական պայքարը «նոր» Հայաստանի հեղափոխականները իրենց իշխանությունը երկարաձգելու նպատակով վաճառել են թուրքերին:

Ձերբակալեք վանեցի հորս, ձերբակալեք եղբորս, ձերբակալեք ինձ, ձերբակալեք իմ երկու տղաներին... ձերբակալեք Մալյան ազգանունը կրող բոլոր տղամարդկանց:

Սա Մալյան տոհմի պաշտոնական դիրքորոշումն է, մենք պատրաստ ենք պայքարի ու չենք հանձնվելու:

Զուգահեռ հանրությունը ականատես կլինի շատ հետաքրքիր լյուստրացիայի: Թաքնված թուրքասերները հերթով պատռում են իրենց դի-մակները:

Հ.Գ. Լուսանկարում տեղադրում եմ ցեղասպանության թանգարանի տնօրենի ֆբ կոչը հիշել... Պահանջել բառը հանված է կարգախոսից:

* * * * *

12.05.2020. Նարեկ Սամսոնյանը ֆեյսբուքյան իր էջում գրառել է.

Ինչ թուղթ ցույց տվեց Արմեն Սարգսյանը Նիկոլին, որ մնաց ՀՀ նախագահի պաշտոնում

Արմեն Սարգսյանի նկատմամբ Նիկոլ Փաշինյանի նախկին վերաբերմունքը հիշում ենք բոլորս նաև հիշում ենք, որ կարճ ժամանակ անց Նիկոլն ասեց, որ Սարգսյանն իրեն ցույց է տվել թուղթն ու փարատել իր կասկածները և այդ օրից հիշում եք, որ ՀՀ նախագահի պաշտոնը շարունակաբար բռնաբարող անձը դարձավ Նիկոլ Փաշինյանի անձնական հարճը: Եվ ուրեմն, ես կարծում եմ, որ գտել եմ այն փաստաթուղթը, որը ցուցադրելուց հետո Նիկոլը համաձայնեց օգտվել Արմեն Սարգսյանի առաջարկած ծառայություններից և այդ թուղթը Արմեն Սարգսյանի կրտսեր արու զավակի՝ Հայկ Սարգսյանի զագսի թուղթն է: Բոլորս գիտենք, թե ինչ զգայուն է Նիկոլ Փաշինյանը ԼԳԲՏ անձանց նկատմամբ և նա մի քանի անգամ հրապարակային հայտարարել է, որ նրանք իր անձնական երաշխավորության տակ են, դե, իսկ Արմեն Սարգսյանն էլ, ամենայն հավանականությամբ, խորամանկորեն օգտվել է Փաշինյանի թուլությունից և նրան է ներկայացրել իր կրտսեր որդուն կնության տալու մասին հավաստող փաստաթղթերը: Արմեն Սարգսյանի կրտսեր որդին՝ Հայկը, վերջերս ամուսնացել է իր սիրելի ամուսնու՝ Ֆարիսի հետ: Ասում են, որ գեյ զույգի ամուսնությանը մասնակցել են բազմաթիվ բարձրաստիճան հյուրեր, անգամ Մեծ Բրիտանիայի Արքայազնը: Արմեն սարգսյանն այդպիսով դարձել է այն եզակի հայ տղամարդկանցից մեկը, որն ունենալով 2 արու զավակ միաժամանակ դարձել

է հա՛մ իր հարսի սկեսրայրը, հա՛մ էլ մյուս որդու ամուսնու անները: Շնորհավորում եմ Արմեն Սարգսյանին նման բացառիկ ձեռքբերման համար և մեծ սեր ու երջանկություն եմ մաղթում նորապսակներին՝ Ֆարիսին և Հայկին:

Հ.Գ. Այ հիմա մտածեք, թե ինչպիսին չպետք է այլևս երբեք լինի ՀՀ նախագահի աթոռը զբաղեցնող մարդը:

* * * * *

11.05.2020թ. անդրադառնալով ԱԺ-ում Լանզալոտյան կոնվենցիայի ընդունմանը Նարինե Ներսիսյանը իր ֆեյսբուքյան էջում գրում է

Եթե ինչ-որ մեկը մանկահասակ իմ երեխային դպրոցում "սովորեցնի", որ մարդն ունի սեռական կողմնորոշում, գենդեր եւ գենդերային ինքնություն, որ գոյություն ունեն սեռական բռնարարներ, սեռազգայական հպումներ, որ հղիությունը կարող է լինել անցանկալի ու կան դրանից ազատման "ապահով" եղանակներ ու էլի մի շարք նման էշություններ, ես ԿՀԱՆԵՄ իմ երեխային դպրոցից ու այլևս նրան այդ դպրոց չեմ տանի, որևէ դպրոց չեմ տանի, եթե դա պարտադիր լինի բոլոր դպրոցների համար: Եթե դրա համար ինձ պիտի դատեն, զրկեն ծնողական իրավունքից, ազատազրկեն, ապա պատրաստ եմ դրան: Կգնամ ու բանտում կապրեմ:

Հ.Գ. Ինձ ճանաչողները գիտեն, որ կանեմ, ինչ ասել եմ:

* * * * *

29.04.2020թ. Միքայել Մինասյանը իր ֆեյսբուքյան էջում գրառում է.

Ի տարբերություն Նիկոլ Փաշինյանի, ով գողացել է իր խոսնակի ֆեյսբուքյան էջի գաղտնաբառը և բացի ՀԺ-ի անանուն խմբագրականներից, հիմա էլ խոսնակի անունից է փորձում «օպերատիվ արձագանքել», գրում եմ ուղիղ՝ առանց միջնորդների:

Ընդունեք ի գիտություն.

Դուք՝ Նիկոլ Վովայի Փաշինյան, անձամբ պատասխան եք տալու.

1. Իշխանությունը պահելու դիմաց արցախյան գաղտնի բանակցություններում փուլային տարբերակին համաձայնելու և ազատագրված տարածքները Ադրբեջանին հանձնելու նախնական պայմանավորվածություն ձեռք բերելու համար:
2. Օլիգարխներից փող վերցնելու և նրանց «օրինապաշտ գործարար» դարձնելու համար:
3. Պետբյուջեից մի քանի տասնյակ միլիոն դոլար բացեիբաց գողանալու և հավելավճարների ու պարգևավճարների տեսքով Ձեր հետ քայլածներին բաժանելու համար:
4. Համաճարակի ժամանակ հանցավոր անգործության, կառավարչական անփութության, պետական միջոցները մսխելու և գողանալու, հիվանդության տարածման ծավալն ու վիրուսից մահերի փաստերը թաքցնելու համար:
5. Կարանտինի ժամանակ բացարձակ անգործության և սոցիալական անպատասխանատվություն ցուցաբերելու համար, ինչի հետևանքով ժողովրդին դատապարտել եք սովի, մթի և աղքատության:

Իսկ կառավարական ամառանոցները վայելելու, դրանք չհիմնավորված, հսկայական գումարներով նորոգելու, թանկարժեք ու անբովանդակ ուղևորությունների ու մնացածի համար՝ ժողովուրդը Ձեզ դատավոր:

Թեման ամբողջացա՞վ: Անպայման արձանագրեք, որ չմոռանաք: Հ. Գ. Ես հուսով եմ, որ Նիկոլի հոգեկանն էնքան վատ չի, որ ինձ վերագրի մասնաբաժին նաև Գավառի հիվանդանոցում: Չնայած...

* * * * *

15.04.2020թ. http://armdaily.am/ կայքէջը մի նյութ տարածեց, որը վերնագրված էր «Հնարավոր է՝ այս տարի առանց միասնական քննության աշակերտները բուհ ընդունվեն. նախարարությունը առաջարկությունների փաթեթ կներկայացնի»: Նյութում ասվում էր հետևյալը.

ArmDaily.am-ի տեղեկություններով՝ ԿԳՄՄՆ-ում քննարկվում է ավարտական քննություններով ընդունելություն կազմակերպելու հարցը: Առաջարկվող լուծումներից մեկն այն է, որ աշակերտը դպրոցն ավարտելուց հետո միայն ատեստատի գնահատականների

հիման վրա հնա-բավորություն կունենա օնլայն հայտով նշել այն բուհերն ու ֆակուլտետները, որոնցից որևէ մեկում կցանկանա սովորել, իսկ բուհ-ն իր հերթին ուսումնասիրելով աշակերտի ուսումնառության տարիներն ու ավարտական գնահատականները սովորելու հրավեր կուղարկի դիմորդներին, իսկ նրանք արդեն ստացված հրավերներից կընտրեն որևէ մեկը: Այս տարբերակի կիրառման դեպքում նրանք քննություն կհանձնեն առաջին կիսամյակի ավարտին և այն ուսանողներն, ովքեր կհաղթահարեն քննությունները, կշարունակեն ուսումը, իսկ ովքեր ոչ՝ դուրս կմնան բուհից:

* * * * *

25.03.2020թ. Հ. Բագրատյանը իր ֆեյսբուքյան էջում գրում է.

Առաջարկում եմ իշխանություններին պաշտոնապես հրապարակել Կորոնավիրուսով հիվանդացած մեր բոլոր հարգելի քաղաքացիների ֆոտոնկարները և կարճ կենսագրությունները (ապրելավայր, աշխատավայր և այլն)՝ նշելով ենթադրյալ հիվանդության օրվանից հետո նրանց հիմնական շփումները: Ընդ որում, եթե վարակով հիվանդ քաղաքացին համաձայն է, ապա այդ տեղեկատվությունը կարող տրվել անհատական տեսակոչի տեսքով: Եթե քաղաքացին համաձայն չէ, ապա առաջիկա 2-3 օրերին օրենք ընդունել, որ դա պարտադիր է: Սա դեռևս չհիվանդացած հասարակության անդամների իրավունքն է՝ պաշտպանվելու: Նման պաշտոնական տեղեկատվություն ստանալուց հետո շատ "առողջ" քաղաքացիներ կարող են իրենք դիմել բժիշկներին մտաբերելով, որ վերջին շրջանում կորոնավիրուսով հիվանդ այս կամ այն քաղաքացու հետ շփում են ունեցել:

* * * * *

12.02.2020թ. ԱԺ-ում կառավարության հետ հարց ու պատասխանի ժամանակ անդրադառնալով Սահմանադրական հանրաքվեին վարչապետ Նիկոլ Փաշինյանն ասում է.

Երբեք Հայաստանում չի եղել քվեարկություն մի պայմաններում, երբ որ եթերում կա 5 ընդդիմադիր հեռուստատեսություն … Հայաստանի պատմության մեջ երբեք, երբեք այսպիսի պայմաններում քվեար-

կություն չի եղել: Եվ Հայաստանի պատմության մեջ քվեարկություն չի եղել մի պայմաններում, երբ որ Հայաստանը մամուլի ազատության չափանիշով աշխարհում 8-րդ տեղը կիսում է Ֆրանսիայի հետ: Էդ ինչի՞ մասին են խոսում: Էդ ո՞ւմ բերանն ենք մենք փակում, էդ ո՞ւմ մեքենան ենք մենք վառում: /5:30 – 6:31/

* * * * *

11.05.2020թ. Արդարադատության նախկին նախարար Գևորգ Դանիելյանը անդրադառնալով Լանզարոտի կոնվենցիային իր ֆեյսբուքյան էջում գրում է.

Լանզարոտի կոնվենցիայի վավերացմանը կողմ քվեարկած պատգամավորները, համոզված եմ, ոչ ամբողջովին են քաջատեղյակ, թե ինչին են կողմ քվեարկել: Իսկ հիմա անդրադառնամ այդ ԿՈՆՎԵՆՑԻԱՅԻ ՀԵՆՔՈՎ՝ արդեն իսկ տարիներ առաջ կատարված մի անչափ տհաճ օրենսդրական փոփոխությանը՝ եզրակացությունը թողնելով իրենց: Նախկին քրեական օրենսգրքով քրեական պատասխանատվություն էր սահմանված՝ մինչև 16 տարեկան կամ արբունքի չհասած երեխաների հետ փոխադարձ համաձայնությամբ սեռական հարաբերության համար: Հետագայում, հիշյալ կոնվենցիայի դրույթների հենքով (18-րդ հոդված) օրենսգրքում կատարվեցին մի շարք «հեռանկարային» փոփոխություններ, որոնցից արտառոցը, թերևս, այն էր, որ դրանով արդեն հանվեց պատասխանատվությունն այն անձանց համար, որոնց 18 տարին դեռ չի լրացել, թեպետ՝ 16 տարեկան անձն արդեն քրեական պատասխանատվության սուբյեկտ է: Ասել կուզի՝ օրինակ 17-ից մինչև 18 տարեկան երիտասարդը, որոնց մի մասը արդեն 2-րդ կուրսում է սովորում, «փոխադարձ համաձայնությամբ» կարող է սեռական հարաբերություն ունենալ արբունքի չհասած դիցուկ 12 տարեկան անչափահասի հետ (ընդ որում սեռն էլ նշանակություն չունի), և իր արարքը չի համարվի անգամ զանցանք: Մնում է, օրինակ՝ անչափահասի ծնողին խելամիտ բացատրություն տաք, թե այդ ինչ տրամաբանությամբ է երեխաների սեռական շահագործման դեմ պայքարի՝ համար կոչված կոնվենցիան հանգեցնում հակառակ արդյունքի՝ երեխաների այսպիսի անպաշտպան վիճակի: Ուշ չէ, գոնե նախաձեռնեք, որպեսզի շրջանառության մեջ դրված քրեական օրենսգրքի նախագծում վերանայվեն հիշյալ կար-

գավորումները (ի դեպ՝ օրինագծի համար պատասխանատու իրավագետները դեմ չեն)։ Իսկ մյուս «անտեսանելի» սպասվող վտանգներին դեռ կանդրադառնամ, ցավոք, դրանք սակավ չեն։ Վավերացնելը չարյաց մեծագույնը չի լինի, եթե կարողանաք, կամք ունենաք գոնե իրավական և սոցիալական համակարգերը զերծ պահել վերը նշված անմիտ զարգացումներից ....

* * * * *

06.04.2020թ. http://armday.am/ -ը ֆեյսբուքյան իր էջում տարածում է տեսանյութ հետևյալ վերնագրով. «ԱՄՆ-ում ձերբակալվել է Չինաստանի համար Covid-19-ի ստեղծողը»։ Նյութում ասվում է հետևյալը.

ԱՄՆ-ում ձերբակալվել է Covid-19 վիրուսի ենթադրյալ ստեղծողը, որը այն վաճառել է Չինաստանին։ Մասնավորապես, WCVB ալիքը հեռարձակել է ԱՄՆ արդարադատության նախարարության պաշտոնական հայտարարությունը։

Խոսքը Հարվարդի համալսարանի քիմիայի և կենսաբանության բաժնի պետ, դոկտոր Չարլզ Լիբերերի մասին է։ Այս ամերիկացի գիտնականը պայմանագիր է ունեցել Ուհանի համալսարանի հետ Covid-19-ի ուսումնասիրության վերաբերյալ։ Նա ձերբակալվել է Հարվարդի իր աշխատասենյակում (ԱՄՆ)։

Սկսվել է նոր կորոնավիրուսի ի հայտ գալու եւ տարածման գործով հետաքննությունը։

Վերոնշյալ ամերիկյան գիտնականն իր գիտական հետազոտությունների համար ստացել է (ընդհանուր մեկ տարվա աշխատանքի) $ 1.5 մլն։ Նա ուներ դրամաշնորհներ ԱՄՆ Ազգային առողջության ինստիտուտի, Հարվարդի, Բոստոնի համալսարանի հետ եւ դրա հետ մեկտեղ ստացել է կանոնավոր դրամական տրանշներ Չինաստանից։

* * * * *

01.04.2019թ. օգտատեր Վահագն Աղաբեկյանը իր ֆեյսբուքյան էջում գրում է.

Մեկը կարա՞ բացատրի, թե էդ ո՞նց ա ստացվում, որ Աննա Հակոբյանն ու Ալիևի կինը՝ Մեխրիբան Ալիևան Փարիզ-Նյու Յորք ինքնաթիռի 1-ին կարգում (էդ սալոնում 8 տեղ ա եղել, մնացած 6 տեղը դատարկ ա եղել) «պատահաբար» իրար կողք նստած են թռնում՝ 9.5 ժամ ու սաղ սալոնը դատարկ է, մենակ իրենք են: 1 ժամ առաջ է թռել ինքնաթիռը Փարիզ: Սենց պատահականություն չի լինում էլի: Ի՞նչ են բանակցում մադամները, ու՞մ անունից: Ո՞վ է կազմակերպել, էս ի՞նչ ճաշ ա եփվում:

* * * * *

04.03.2020թ. օգտատեր Անդրանիկ Թևանյանը իր ֆեյսբուքյան էջում գրում է.

Մի ուրվական է շրջում Հայաստանում՝ թավշյա նեոբոլշևիզմի ուրվականը

Իրերը պետք է իրենց անվանումներով կոչել: «Վերադարձնենք թալանածը ժողովրդին» կարգախոսի ներքո Հայաստանում փորձ է արվում իշխող ուժի համար ապահովել կապիտալի նախնական կուտակում՝ սեփականության լայնամասշտաբ վերաբաշխման միջոցով:

«Հպարտ» քաղաքացիներն այս խաղում ընդամենն օգտագործվող և մանիպուլացվող նյութ են: Նրանց խաբում են ճիշտ այնպես, ինչպես խաբել են բոլոր ժամանակների հեղափոխականները հարյուրամյակներով:

«Ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձման մասին» գայթակղիչ վերնագիրն ունեցող ՀՀ օրենքի նախագիծը խորհրդարան է բերվել կապիտալը մեկ մարդու ձեռքում կենտրոնացնելու և իշխանությունը յուրացնելու նպատակով: Մնացածը հեղափոխական դեմագոգիա է: Ամբոխահաճո պաթոս:

Փաստորեն, հետսովետական տարածքում ինչ հեղափոխություն էլ անում են, վերջում բոլշևիկյան է ստացվում: Մերը բացառություն չի կազմում: Պարզապես «թղթաբանությունն» է այլ:

Թալանածը ժողովրդին վերադարձնելու, ավելի կոնկրետ՝ «հողը՝ գյուղացուն և գործարանը՝ բանվորներին» տալու լոզունգներով սրանից 100 տարի առաջ հանդես եկան բոլշևիկները (որոնք, ի դեպ, նաև

խաղաղություն էին քարոզում և իշխանության գալուն պես դավաճանեցին ռուսական շահերին), սակայն տեղի ունեցավ ճիշտ հակառակը։

Սկզբում հետապնդում էին ցարականներին։ Դա դուր էր գալիս «հպարտ» մուժիկին։ Հետո ընկան էսեռների, կադետների, բուրժուաների, սպիտակների, մենշևիկների ու մյուսների հետևից։ «Հպարտ» մուժիկը կրկին ծափահարում էր ու սպասում, որ իրեն փայ է հասնելու։

Այնուհետև հերթը հասավ հեղափոխականների մեջ հակահեղափոխականներ փնտրելուն և գնդակահարելուն։ Մուժիկը դուխով ծափ էր տալիս, բայց կյանքը դրանից չէր լավանում։

Երբ վերջում եկան ու «հպարտ» մուժիկից տարան իր միակ կովը՝ զուգահեռաբար կուլակ հռչակելով նրան, արդեն ծափ տվող չկար. մյուս մուժիկներինն էլ էին տարել։

Կուլակաթափությունը սովի մատնեց բոլշևիկների կառավարած երկիրը։

«Հպարտ» մուժիկի համար կուլակաթափության ողբերգական ու դաժան հետևանքները փայլուն նկարագրված են Միխայիլ Շոլոխովի «Поднятая целина» վեպում։

Հիմա մեր օրերի սեմյոնդավիդովները և նագուլնովները փորձում են հոգեդարձ անել բոլշևիզմը, ավելի ստույգ՝ դրա գավառական ու գռեհիկ տարբերակը։ Արդյունքները նույնն են լինելու։ Միգուցե՝ ավելի վատը։

Եթե մեր թշնամիները փորձեին ներսից պայթեցնել Հայաստանի տնտեսությունը և որպես հետևանք՝ թուլացնեին բանակն ու փլեին մեր անվտանգության համակարգը, ապա սեփականության իրավունքի փաստացի ոչնչացման ու նեոբոլշևիզմի ոգով այդ օրենսդրական նախագիծը պետք է բերեին ԱԺ։

Եթե այդ նախագծին զումարում ենք նաև բանկային գաղտնիքի դե ֆակտո վերացման նախաձեռնությունը, ապա պարզ է դառնում, որ Հայաստանը լրջագույն խնդիրների առաջ է կանգնած և կանգնելու։

Սեփականությունը վերաբաշխելու և բիզնեսը կենտրոնացնելու իշխանության այս քայլը բառիս բուն իմաստով ոչնչացնելու է ներդրումային միջավայրը, ապահովելու է կապիտալի փախուստ և տնտեսաքաղաքական կոլապս։ Հանրությունը պառակտվելու և թշնամա-

նալու է սերունդներով։ 25 միլիոն դրամից ավելի գույք ունեցողները իշխանությունների հրահրմամբ թիրախավորվելու են և հայտնվեն մեղավորության կանխավարկածի սրի տակ։

Բոլշևիկներն ասում էին, որ պետք է իմպերիալիստական պատերազմը վերածել քաղաքացիականի։ Արդյունքում՝ երկիրը վերածվեց արյան բաղնիքի։ Սրանք մի փոքր այլ բառերով նույնն են քարոզում։ Պատահական չէ, որ այս իշխանությունը կեղծ խաղաղություն է քարոզում («մեր զինվորները զոհվել են հանուն ոչնչի») և ուզում է բավարարել նաև Ադրբեջանի ժողովրդին, բայց երկրի ներսում ամենուրեք թշնամիներ, դավադիրներ ու հակառակորդներ է փնտրում։

Դրսում խաղաղության աղավնի դարձած, իսկ ներսում ագռավի պես չար լուր բերող «թավշյա» ժանտախտի «վկաները» սիրո խոստումների տակ ատելություն են տարածում։ Ստեղծվում է «սիրո» բռնապետություն։

Ամբոխավարական ու պոպուլիստական սկզբունքներով առաջնորդվող տիրանիա կառուցելուն է միտված նաև դատական համակարգի ամբողջական սեփականաշնորհման քաղաքականությունը։

Ես համոզված եմ, որ Հայաստանում բռնապետական ռեժիմ կառուցելու ռեսուրս չկա, և այս ամենը հանգեցնելու է տնաբույծ նեոբոլշևիկների պարտությանը։ Սակայն բռնապետություն կառուցելու փորձն անգամ լրջորեն կարող է վնասել մեր երկրին և արդեն իսկ վնասում է։

Սրանք գնում են հզոր ցնցումների ճանապարհով։ Ճանապարհ, որի հարցում կան նաև արտաքին շահագրգիռ ուժեր։

Իրենց պետք են հզոր ցնցումներ, իսկ մեզ՝ հզոր Հայաստան։ Երկրորդը հաստատ լինելո՛ւ է։ Հարցը գնին է վերաբերում, որը մենք վճարում ենք այս ընթացքում։

ՕԳՏԱԿԱՐ ԳՐՔԵՐ

Аронсон Э., Пратканис Э. Эпоха пропаганды: Механизмы убеждения, повседневное использование и злоупотребление. М.: «Олма-Пресс», 2003

Бредемайер К. Черная риторика: Власть и магия слова. М.: «Альпина Бизнес Букс», 2005

Большакова Л. Осторожно! Психологическая мина! Все виды манипуляций и методы их обезвреживания. М.: «Издательство: АСТ», 2014

Геген Н. Психология манипуляции и подчинения. СПб.: «Питер», 2005

Гоулстон М., Уллмен Дж. Искусство влияния. Убеждение без манипуляций. М.: Издательство «Манн, Иванов и Фербер», 2013

Горина Е.В. Коммуникативные технологии манипуляции в СМИ и вопросы информационной безопасности. Учебно-методическое пособие. Екатеринбург: «Издательство Уральского университета», 2016

Грачев Г., Мельник И. МАНИПУЛИРОВАНИЕ ЛИЧНОСТЬЮ: Организация, способы и технологии информационно-психологического воздействия. М.: «Алгоритм», 2002

Гусев Д. Г., Матвейчев О. А., Хазеев Р. Р., Чернаков С. Ю. Уши машут ослом. Современное социальное программирование. «Издательство: Питер», 2013

Доценко Е. Л. Психология манипуляции: феномены, механизмы и защита. М.: «ЧеРо», 1997

Евгеньева Т.В. Технологии социальных манипуляций и методы противодействия им. «Издательство: Питер», 2007

Зелинский С. А. Манипуляции массами и психоанализ. Санкт-Петербург: «СКИФИЯ», 2008

Кара-Мурза С., Смирнов С. Манипуляция сознанием 2. М.: «Эксмо: Алгоритм», 2009

Макишвили В. Ю. Большая книга манипуляции. Изучаем секреты управления сознанием. М.: ООО «Издательство АСТ», 2017

Филатов А.В. Основы распознания и противодействия манипуляции сознанием /вводный курс/, Калининград: МО «Сенте», 2006

Хафф Д. Как лгать при помощи статистики. М.: «Альпина Паблишер», 2015

Հայալեզու մեդիատիրույթում շահարկումներին վերաբերող վերլուծություններին կարող եք ծանոթանալ հետևյալ կայքէջերում՝

Դետեկտոր առցանց վերլուծական հանդես (detector.am)

Տեղեկատվության ստուգման կենտրոն (infocheck.am/am)

Փաստերի ստուգման հարթակ (fip.am)

Ուղեցույցում տեղ գտած վերլուծություններն արտահայտում են հեղինակի տեսակետը և կարող են չհամընկնել հրատարակչության դիրքորոշումների ու տեսակետների հետ:

Թուղթը՝ օֆսեթ:
Տպագրության եղանակը՝ թվային:
Տպագրված է ԷԼԴՈՐԱԴՈ ՊՐԻՆՏ ՍՊԸ-ում

Գյումրի, Գործարանային նրբ. 67/2
eldoradoprint.am, +374 93 35 43 43

ISBN 978-9939-826-80-6

9 789939 826806